




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

Բ. Գ. Կ. Բ. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

ՀՐԱՁԳԱՅԻՆ == == ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ՄԱՍՆ 111

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ



ՅԵՐԵՎԱՆ

№ 32

1928

ՀԱՅԿ. ՀՐԱՁԳ. ԳԵՂԵՍԻԱՆԻ ԳԵՂԱՐԱՊԵՏԻ ԽՈՐԱ.-ՀՐԱՏ. ՄԱՍ

358
12-11

51 MAR 2910

ԽՍՀՄ Գրողներին բոլոր յերկրներին, միացեք. ՀՍԽՀ

«ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Ե»

28 դեկտեմբերի 1924 թ.

ԽՍՀՄ ՀՈՒՆ նախագահի

ժամանակավոր տեղակալ ՈՒՆՇԼԻՆՏ

ԽԱՅԻՍ ԲԱՅԻՍ ԿԱՆՈՆԱԳԻՐԲ
ՀԱՅԻՍ ԿԱՆՈՆԱԳԻՐԲ

Բ. Գ. Կ. Բ.

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

ՀՐԱԶԳԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԲ

ՄԱՍՆ 111

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

ՀՐԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԳԼԽԱՎՈՐ ԿԱՆՈՆԱԳՐԲԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՅԵՐԵՎԱՆ


№ 30

1928

ՀԱՅԿ. ՀՐԱԶԳ. ԳԻՎԻԶԻՆՏԻ ՔԱՂՐԱԺՆԻ ԽՄԲ. - ՀՐԱՏ. ՄԱՍ

17 SEP 1973

42 482



24251-19

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՋԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հրաձգային զենքով սպառազինված զորամասի հրաձգային ուսուցումը մարտի համար պատրաստվելու ամենակարևոր բաժինն է։ Այդ ուսուցման հատուկ խնդիրն է՝ սովորեցնել այդ զորամասին իր ձեռքին յեղած հրաձգային զենքի տիպարների ու տեսակների՝ մարտում կիրառելու տեխնիկան ու այդպիսով նրան ընդունակ դարձնել հաջողությամբ լուծելու այն խնդիրները, վոր կարող են հանդես գալ ժամանակակից մարտադաշտում։

Հրաձգային զենքի տեխնիկայի վերաբերյալ ղեկավարող ցուցումները տրված են սույն կանոնադրքի III մասում։

2. Առաջին հոդվածում հիշված վերջնական նպատակին հասնելու համար հրաձգային ուսուցումը պետք է.

ա) ներշնչի հրամկազմին՝ շատ լավ իմանալ ու սիրել հրաձգային զենքն ու հրաձգային գործը, կարողանալ կարճ ժամանակում սովորեցնել այդ գործն իրենց ստորադրյալներին ու հմտորեն ղեկավարել նրանց միասնական կրակը՝ ժամանակակից մարտի պարագայում։

բ) սովորեցնել կարմիր բանակայինն գերտակցաբար ոգտվել իրեն հատկացված զենքով. մարտում նրանով ճկուն և դիպուկ հարվածել հակառակորդին, իսկ մարտից դուրս նրա հետ հմտորեն վարվել, պահպանելով զենքը փչանալուց ու քայքայվելուց. բացի այդ, պատրաստել գերազանց հրաձիգներ, վորոնք ընդունակ լինեն հարվածելու այնպիսի փոքր ու հեռավոր նպատակները, վորոնք անմատչելի չեն վոչ միայն սովորական, այլ և նույնիսկ լավ պատրաստված հրացանաձգի համար:

գ) Համաձայնեցնել շարային միավորություններին կազմի հրացանաձիգների միասնական կրակի աշխատանքը և այդ միավորությունների աշխատանքը միմիանց հետ:

Այս յերեք խնդրի լուծմանն ամենակարճ ձևով տանող մեթոդական սխեման հաջորդական բացատրությունը հենց կազմում է հրաձգային կանոնագրքի սույն III մասի 3 գլխավոր բաժինների բովանդակությունը:

3. Մարտական պարագայում հրաձգային զենքի գործադրությունը միշտ նպատակ ունի վորոշ տակտիկական նվաճումներ ինննալ ու անբաժանելի կապված է հարձակողական կամ պաշտպանողական զորաշարժային գործողությունների իրագործման հետ: Մրան համապատասխան, զորամասի հրաձգային ուսուցումը պետք է հիմնված լինի տակտիկական պահանջների վրա ու տարվի, սերտ կապ ու համագործակ-

ցություն պահպանելով զորքերի զորաշարժային պատրաստության հետ:

Այդ կապի ձևը յուրաքանչյուր զորամասում պետք է համապատասխանի զորամասի մարտական մասնագիտությանը և այդ զորամասում հրաձգային զենքին մարտադաշտում հատկացվող դերին:

4. Հրաձգային ուսուցման հաջորդության համար, զորամասին պետք է առատորեն մատակարարել և խնամքով սարքավորել այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ է դրա համար. զորամասին պետք է տալ սարքին զենք, նրան խնամելու համար անհրաժեշտ պատկանելիքներ, բաց թողնել լավականաչափ մարտամթերք, սարքավորել հրաձգարան ու ձգարան (տիր) և տալ անհրաժեշտ անոթներ ու ձեռնարկներ: Զորանոցների և ճամբարների հրաձգային կահավորման գործի մեջ պետք է քաշել զորամասի ամբողջ կազմի հրամատարների, կոմիսարների և հրաձիգների լայն ինքնագործունեյությունը:

Նույն նպատակի համար, հրաձգային զործին պետք է մասսայական սպորտի և մրցակցության բնույթ տալ շափավոր սահմաններում:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

5. Առանձին զորամասի անձնական կազմի ուսուցման և դաստիարակության ամբողջ կազմակերպությունն ամբողջապես նրա հրամատարի պարտականությունն է և դրա պատասխանատվու-

թյունն ընկնում է նրա վրա: Նա կաղմակերպում ու ուղղություն է տալիս գործին, պարբերաբար մշակում է հրաձգային պարսպմունքների ծրագրերը և հայտարարում է ի դեկավարություն: հրահանգում է իր մասնակառքներին և սահմանափակ հրամարական կազմին և՛ մշտապես հետևում է զորամասում կատարվելիք աշխատանքի ընթացքին, ստուգումներ կատարելով առանձին բաժինների վերաբերյալ ստացած հետևանքները: կաղմակերպում է ուսուցման դասընթացին լրացուցիչ ցուցադրական ու զործնական վարժություններ, մրցություններ, դասախոսություններ, զրույցներ և այլն:

Զորամասի հրամատարի ամենամոտ աշխատակիցն ու տեղակալը՝ հրաձգային ուսուցման ղեկավարության գործում հանդիսանում է, ընդհանուր հիմունքներով, նրա ոգևականը (վորտեյ ալգային կա):

6. Յուրաքանչյուր առանձին զորամասում պետք է կաղմակերպված լինի զորամասի հրամատարին կից հատուկ Հրաձգային կոմիտե խորհրդակցական մարմնի իրավունքներով: Նրա կազմը, իրավունքներն ու պարտականությունները վորոշված են հատուկ կանոնադրությամբ:

7. Գումարտակների հրամատարները և նրանց հավասար պետերը պատասխանատու չեն իրենց հանձնված մասերի հրաձգային պարաստությունների հանդեպ համար: Նրանք պարտավոր

են հրաձգային պարսպմունքներն անձամբ տանել իրենց յենթակա միջին և, կարիք չեղած դեպքում, նաև կրտսեր հրամկաղմի հետ և մշտապես հետևել ուսուցման ընթացքին վաչտերում (հեծելավաչտերում ու զորախմբերում), կյանքում կիրառելով կանոնադրքի պահանջներն ու զորամասի հրամատարի ղեկավարող ցուցումները:

Զորամասի այն ստորաբաժանումների վերաբերյալ, վորոնք գումարտակի կազմի մեջ չեն մտնում, գումարտակի հրամատարի պարտականությունները կատարում է այն պետը, վորին անմիջապես յենթարկվում են այդ մասերը:

8. Կրտսեր հրամատարական և ամբողջ ստակական կազմի անմիջական հրաձգային պատրաստությունն ընկնում է վաչտերի (հեծելավաչտերի, զորախմբերի) լիալիաալրների վրա:

Զորամասի հրամանում հայտարարված հրաձգային պարսպմունքների տվյալ ժամանակաշրջանի պլանն ի կատար ածելու համար, նրանցից յուրաքանչյուրը պարտավոր է իր վաչտի (հեծելավաչտի, զորախմբի) համար մշակել մասնական դասացուցակ, վորը, գումարտակի հրամատարի (կամ նրան համապատասխան այլ անձի) հաստատելուց հետո, հայտարարվում է ի ղեկավարություն: Հետագայում վաչտի հրամատարը, իր վրա վերցնելով իրեն յենթակա հրամկաղմի պարսպմունքները տանելը, կաղմակերպում է ուղղություն է տալիս սոսկական հրաձգների ուսուցման ամբողջ ընթացքին, ան-

ձամբ ղեկավարում և ցուցական հրաձգութիւնները և ղենքի խփելու ստուգումը, անձամբ բացատրում և սովորողներին ծրագրի ավելի բարդ կետերը, պարբերաբար ստուգում և նրանց նրաւձումները, վորոշում և մի բաժնից մյուսին անցնելու ժամանակը և այլն. առհասարակ իր ձեռքումն և պահում ուսուցման սմբողջ կատարողական մասը:

9. Դասակի հրամատարները պատասխանատու յեն իրենց դասակների հրաձգային ուսուցման հաջողութեան համար: Նրանք անմիջապես տանում են պարապմունքները դասացուցակի համեմատ վաչտի (հեծելավաչտի, զորախմբի) հրամատարի ցուցումների համաձայն. նրանք վերահսկում են, միացնում և ուղղութիւն են տալիս կրտսեր հրամատարների ու առանձին ուսուցիչների աշխատանքին և իրենց վրա յեն ընդունում, յերբ հարկավոր և, այն բաժինների բացատրութիւնն ու պարզաբանութիւնը, վոր չի կարելի ուսուցիչներին հանձնել:

Յուրաքանչյուր դասակի հրամատար պետք և միշտ ստույգ տեղեկութիւն ունենա իրեն յենթակա յուրաքանչյուր հրաձգի հաջողութիւնների ու նվաճումների մասին:

10. Անմիջական ուսուցումը հանձնարարւում և վաչտի (հեծելավաչտի, զորախմբի) հրամատարի կողմից դրա համար պատրաստած կրտսեր պետերին (դասակի հրամատարի ոգնականներին ու ջոկի հրամատարներին) նույնպես և գերազանց հրաձիգներին:

Յուրաքանչյուր սովորեցնողին հանձնւում և 5—8 հոգուց բաղկացած սովորողների մի խմբակ: Ձեռնտու յե, յեթե սովորեցնողը միեւնույն ժամանակ հանդիսանում և իրեն հանձնւած կարմիր բանակայինների անմիջական պետը:

11. Մշտական սովորեցնողին ոգնելու համար ոգտակար և առաջ քաշել այն հրաձիգներին, վորոնք առանձնապես աչքի յեն ընկնում այս կամ այն հրաձգային գործողութեան որինակելի կատարումով կամ դրա մեջ հատկապես մարդկաներին: Այդպիսի մասնագետներին պետք և ոգտագործել այդ նույն գործողութիւններում սովորողներին կատարելագործելու համար, նրանց մոտ ուղարկելով սովորողներին իրենց խմբակներից հերթով, առանց ընդհանուր պարապմունքի ընթացքը խախտելու: Ձեռնտու յե դասավորել նրանց վորոշ սիստեմատիկ կարգով այնպիսի հաշվով, վոր սովորողները, հաջորդաբար մեկից մյուսին անցնելով, կարողանան անցնել վարժութիւնների սմբողջական շրջանը:

Այդպիսի կազմակերպութեան ժամանակ, ուսուցման հաջողութեան պատասխանատուութիւնը դարձյալ ընկնում և սովորեցնողների և անմիջական պետերի վրա:

12. Զորական բարձր պետերի, նույնպես և կոմիսարների ու քաղաքական ղեկավարների պարտականութիւնն և՛ ընդհանուր հսկողութիւն ունենալ իրենց յենթակա մասերում հրաձգային ուսուցման կազմակերպութեան ընթացքի

ու նվաճումների վրա և ամեն տեսակի աջակցութիւնն ցույց տալ նրա հաջողութեանն իրենց հեղինակութեան ու իրավունքների ամբողջ ուժով:

13. Ուսուցմանը հսկողներից վոչ վոք իրավունք չունի պահանջել վաշտերի (հեծելաձուլների, զորախմբերի) հրամատարներից ուսուցման ժամանակ անպայման գործադրել այնպիսի մեթոդներ, վոք նախատեսված չեն կանոնադրութով: Ընդհակառակը, պետք է խրախուսել անմիջապես գործին մոտ կանգնած աշխատավորների ձեռնբեցութիւնը, չճնշել նրանց ինքնուրույն ուսուցման մեթոդները կիրառելիս, միայն մի պայմանով, յետեւ այդ յեղանակները չեն հակասում կանոնադրքի հիմնական պահանջներին ու ապահովում են ուսուցման համար դրված նպատակներին ժամանակին հասնելը:

ՀՐԱՄԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀՐԱՁԳԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՈՒՅՈՒՄՆԵՐ

14. Հրամատարական (և քաղաքական) կազմի սկզբնական հրաձգային պատրաստութիւնը կատարվում է ռազմական և զորական դպրոցներում այս կանոնադրքի հիմունքներով հատկապես մրշակված ծրագրերով:

15. Հրաձգային գործն անընդհատ դարձանում է. հրաձիգ զենքի նոր տիպարներ ու տեսակներ են գործադրվում, ձևափոխվում են կրակային մարտի յեղանակները, ուսուցման նոր մեթոդներ են մշակվում: Դպրոցներում հրամատարական (և քաղաքական) կազմի դիտելիքները, վարժութիւններն ու հմտութիւնները ժամանակի ընթացքում բավական չեն լինում. այդ դիտելիքներն անհրաժեշտ է վերհիշել, լրացնել ու կատարելագործել գործատերում ծառայելու ընթացքում:

16. Ավագ հրամատարներն ու քաղաքական դեկավարները պետք է դրա մասին հոգ տանեն ինքնուրույն կերպով: Զորամասի հրամատարը պարտավոր է հրաձգային կոմիտեյի աջակցութեամբ նրանց ոգնել, պարբերաբար կազմակերպելով ցուցակայն ու գործնական վարժութիւններ, ընդհանուր զրույցներ, տեղեկատու զեկուցումներ, դիտական դասախոսութիւններ և այլն:

ու նվաճումների վրա և ամեն տեսակի աջակցութիւն ցույց տալ նրա հաջողութեանն իրենց հեղինակութեան ու իրավունքների ամբողջ ուժով:

13. Ուսուցմանը հսկողներից վուչ վուք իրավունք չունի պահանջել վաշտերի (հեծելապատերի, զորախմբերի) հրամատարներից ուսուցման ժամանակ անպայման գործադրել այնպիսի մեթոդներ, վուր նախատեսված չեն կանոնադրութիւն: Ընդհակառակը, պետք է խորհուսել անմիջապես գործին մոտ կանգնած աշխատավորների ձեռներեցութիւնը, չճշել նրանց ինքնուրույն ուսուցման մեթոդները կիրառելիս, միայն մի պայմանով, յեթե այդ յեղանակները չեն հակասում կանոնադրքի հիմնական պահանջներին ու ապահովում են ուսուցման համար զրկած նպատակներին ժամանակին հասնելը:

ՀՐԱՄԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀՐԱՁԳԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՈՒՅՈՒՄՆԵՐ

14. Հրամատարական (և քաղաքական) կազմի սկզբնական հրաձգային պատրաստութիւնը կատարվում է ռազմական և զորական դպրոցներում այս կանոնադրքի հիմունքներով հատկապես մրշակված ծրագրերով:

15. Հրաձգային գործն անընդհատ զարգանում է. հրաձիգ զենքի նոր տիպարներ ու տեսակներ են գործադրվում, ձևափոխվում են կրակային մարտի յեղանակները, ուսուցման նոր մեթոդներ են մշակվում: Դպրոցներում հրամատարական (և քաղաքական) կազմի դիտելիքները, վարժութիւններն ու հմտութիւնները ժամանակի ընթացքում բաժանական չեն լինում. այդ գիտելիքներն անհրաժեշտ է վերհիշել, լրացնել ու կատարելագործել գործաստերում ծառայելու ընթացքում:

16. Ավագ հրամատարներն ու քաղաքական ղեկավարները պետք է դրա մասին հոյ տանեն ինքնուրույն կերպով: Զորամասի հրամատարը պարտավոր է Հրաձգային կոմիտեյի աջակցութեամբ նրանց ոգնել, պարբերաբար կազմակերպելով ցուցակաւն ու գործնական վարժութիւններ, ընդհանուր զրույցներ, տեղեկատու զեկուցումներ, գիտական դասախոսութիւններ և այլն:

17. Միջին ու կրտսեր հրամատարական կազմին պետք է ավելի իրական ոգնություն հասցնել, մանավանդ նրա համար, վոր բանակում հրաձգային գործի ամբողջ ծանրությունն անմիջապես ընկած է նրանց վրա. նրանք պարտավոր են ուսուցման ընթացքում մարտիկ հրաձիգներ պատրաստել, իսկ մարտում ղեկավարել նրանց միասնական կրակային գործողությունները: Նրանց հրաձգային պատրաստության մակարդակըն ուղղակի անդրադառնում է բանակի հզորության վրա:

Ոգնությունը պետք է արտահայտվի զորամասերում սխտեմատիկ պարապմունքների կազմակերպությամբ, միջին ու կրտսեր հրամատարական կազմի հրաձգային գործի բոլոր ճյուղերում կատարելագործման համար: Այդ պարապմունքները նույնքան ելական և պարտադիր են, վորքան և զորամասերի սոսկական կազմի հետ տարվելիք պարապմունքները:

ՊԱՐԱՊԵՐՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

18. Կրտսեր ու միջին հրամատարական կազմի յերկակի ղեկին համապատասխան, աշխնքն ինչպես հրաձգային ուսուցման հրահանգիչ-ղեկավարների և ինչպես կրակային հրամատարների, նրանք պարտավոր են կատարելագործվել յերկու ուղղությամբ:

ա) սոսկական մարտիկների հրաձգային ուսուցման մեթոդիկայում (իսկ միջին հրամատարական կազմը, բացի այդ, պետք է կատարելագործվի նաև կրտսեր չարային պետերի ուսուցման մեթոդիկայում) և

բ) մարտադաշտում բոլոր տիպարների հրաձգային զենքի կրակը ղեկավարելու տեխնիկայում:

Առաջինը ձեռք է բերում հրահանգչական, իսկ յերկրորդը հրամատարական պարապմունքներին միջոցով: Յերկու տեսակի պարապմունքներն էլ կարելի չե միասին կամ մի քանի ղեպքերում բաժնակի տանել, ինչպես ավելի հարմար և ձեռնուռ կհամարվի. բայց յուրաքանչյուր պարապմունքի տեսակը պետք է տարվի ներքևում ցույց տված հատուկ ծրագրով:

19. Հրամատարական կազմի հետ տարվելիք պարապմունքների ծրագիրն ու ծրագրի կիրառման վերաբերյալ ղեկավարող ցուցումները մըշակվում են յուրաքանչյուր զորամասում մի քանի ամսվա ժամանակաշրջանի համար և ընդհանուր կարգով հայտարարվում են զորամասի հրամանում:

20. Հրամատարական կազմի հետ տարվելիք պարապմունքներն անմիջապես ղեկավարող պետերը պարտավոր են իրենց խմբակների համար նախապես դասացուցակ մշակել, ղեկավարվելով հայտարարված պլանով, ու ներկայացնել ի հաստատություն վերադասության կարգով, իսկ հետագայում այդ պարապմունքները կազմակերպել և վարել իրենց անձնական ղեկավարությամբ:

21. Պարապմունքները պետք է բաղկացած լինեն՝ մի կողմից զանազան գործնական վարժուիլյուններից, իսկ մյուս կողմից ինքնուրույն կերպով զեկուցումներ մշակելուց առանձին հրաձգային հարցերի մասին, վորոնք հանդես են գալիս իրենց ծառայության ընթացքի հրահանգչական ու մարտական գործունեյություններից. բացի այդ, պարապմունքների ընթացքում պետք է իրար ծանոթացնել ղեկավարող կարգադրությունների, ընթացիկ սարգմական զրահանության հոգվածների, նոր առաջարկների ու գյուտերի մասին և այլն:

22. Հրամատարական կազմի պարապմունքներին համար իբրև աշխատանոց (լաբորատորիա) ծառայում են՝ դաշտը, հրաձգարանը, տիրն ու զորամասի հրաձգային կարիները:

ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԻՏՆԵՐԸ

23. Հրահանգչական պարապմունքների ծրագրի մեջ պետք է մտնեն.

ա) զորամասի սպառազինման հրաձգային զենքի բոլոր տիպարների ու տեսակների, նույնպես և, ըստ հնարավորին, կարմիր Բանակի այլ զորամասերի ու հավանական հակառակորդների հրաձգային զենքի ուսումնասիրությունը:

բ) կարմիր բանակայինների և կրտսեր շարային պետերի հրաձգային պատրաստություն մեթոդիկայի լավ յուրացումը հրամատարական կազմի կողմից:

գ) հրամատարների անհատական կատարելագործումը զորամասի բոլոր տեսակի հրաձգային զենքով հրաձգություն կատարելու և հրուցանային ու ձեռքի նռնակներ նետելու մեջ:

24. Յուրաքանչյուր հրամատարին անպայման պարտականություն է տրվում լավ իմանալ իր զորամասի զենքը, վոչ միայն նրա նշանակման, մարտական հատկությունների և գործողությունների տեսակետից, այլ և այդ զենքի կազմության մանրամասնությունները, վարվելու կանոնների, պահելու և խնամելու տեսակետից: Այդ ծառայում է իբրև յերաշխիք զենքը մարտական ու վարժական դաշտում ճիշտ կիրառելու համար և, բացի այդ, ապահովում է զենքը կարմիր քանակայինների ձեռքում վաղաժամ փչանալուց ու մաշվելուց:

25. Միջին հրամատարական կազմի անձինք պարտավոր են այդ գիտելիքները ձեռք բերել ինքնուրույն կերպով, ոգտվելով այն նկարագրով յուաններից, վորոնք բերված են սույն կանոնադրքի առաջին մասում, և հրաձգային կարիներով:

Այդ բաժնի վերաբերյալ պաշտոնական պարապմունքները ծառայում են իբրև ստուգում և ազդու յրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

Կրտսեր հրամատարների հետ պետք է կանոնավոր և սխտեմատիկ պարապմունքներ տանել:

26. Իր զենքն իմանալը բնականաբար հետաքրքրություն է առաջ բերում նաև զեպի այլ տիպի ու տեսակի զենքերը: Ղեկավարը պետք է այդ հետաքրքրությունն ոգտագործի զենքի այն տիպարները ուսումնասիրելու համար, վորոնք գություն չունեն զորամասում (ուսական և ուտարելից), բայց վորն ապագայում կարող է ստացվի զորամասում:

27. Հրաձգային պատրաստության յեղանակների մեթոդիկայի հաստատապես յուրացումը՝ հրամատարների կողմից կարևոր է, իբրև միջոց այդ պատրաստության մակարդակը բարձրացնելու և բանակի փոփոխական կազմի ուսուցման ժամանակը, հնարավորին չափ, կրճատելու համար: Չպետք է մոռանալ, վոր սովորողների թույլ յուրացումը հաճախ բացատրվում է վոչ թե նրանց բարի ցանկություն և ընդունակություն բացակայությամբ, այլ նրանով, վոր սովորեցնողները չեն կարողանում լավ բացատրել և հմտորեն խորացնել պահանջվելիք գիտություններն ու վարժությունները: Հրաձգային գործի ժամանակակից բարդությունն ուսեղացնում է վերոհիշյալի նշանակությունը:

28. Մեթոդական պարապմունքները պետք է միանգամայն գործնական բնույթ կրեն: Ամենայնով միջոցն է նրանց ծրագրեր ու դասացուցակներ կազմելու և ցուցադրական ու փորձնական դասեր տալու, կարմիր բանակայինների հետ զբուսեցնել կազմակերպելու ձև տալ, կիրառելով պորամասում բնդունված վարժական ձեռնարկներն ու գործիքները: Առանձնապես անհրաժեշտ է հրամատարներին վարժեցնել այնպիսի հրաձգային խնդիրներ կազմելու և միասին լուծելու մեջ, ինչպիսի խնդիրներ նրանց հարկ է լինում տալ սովորողներին:

29. Հրամատարական կազմի անձնական հրամուժյունը հրաձգության մեջ իրեն միջոց է ծառայում, սովորողների աչքում իր հրահանգչական սննդակուլությունն ու հեղինակությունը պահպանելու համար: Այդ տեսակետից հրամատարը պետք է կարողանա որինակ ծառայել. առանց դրան սովորելու հաջողությունը չի կարելի ապահովել:

Նույն նկատառումներով քաղաքական ղեկավարները հրաձգության հմուտությամբ չպետք է չես մնան չարային հրամատարներից:

30. Հրաձգության մեջ կարելի չէ կատարելություն հասնել անընդհատ վարժություններ կատարելով: Հրամատարական կազմի անձինք պարտավոր են.

ա) ամեն տարի իրենց յենթարկյալների հետ միասին անցնել գործնական հրաձգությունները պորամասի սպառազինման համար հատկացված հրաձգային զենքի բոլոր տիպարներով ու տեսակներով (հրաձգության դասընթացի մեջ ցույց տրված կրճատումներով):

բ) պարբերաբար կատարել լրացուցիչ անհատական վարժություններ նուրբ հրաձգության

մեջ, վոր պետք է կազմակերպել պորամասի հրամատարի կարգադրությամբ:

Ցանկալի չէ հրամատարական կազմին, ըստ հնարավորին, լայն չափով մասնակցություն քաշել սպորտի բնույթ կրող հրաձգություններին:

31. Յուրաքանչյուր հրամատարին (նաև քաղաքական ղեկավարին), վորը հաստիքի համաձայն հրացան չունի, պետք է հրացան տալ ժամանակավորապես կամ մշտապես ոգտագործելու համար: Ձորամասի հրամատարի թույլտվությամբ, նա կարող է հրացանը տանը պահել անձնական պատասխանատվությամբ, բայց իրավունք չունի վորեւ հարմարանք կամ փոխոխություն մտցնել հրացանի մեջ: Ձորամասից հրացանի տիրոջ հեռանալու կամ ժամանակավոր բացակայության դեպքում, նրան տված հրացանը պետք է վերադարձնել այն պորամասին, վորի ցուցակում նա հաշվում է:

Ատրճանակով պետք է սպառազինված լինեն այն բոլոր անձինք, վորոնց հատկացված են հաստիքով, ու իրավունք ունեն, գործողման կամ արձակուրդի դեպքում, իրենց հետ տանել:

Ձենքի մյուս տեսակները տրվում են ուսումնասիրության և վարժությունների համար այն պետերի կարգադրությամբ, վորոնք պատասխանատու չեն այդ զենքի համար:

Վարժությունների համար հրապաշարն ու թիրախները հրամատարական կազմին տրվում են ըստ կարիքի, ի հաշիվ դրա համար սահմանված բաց թողնվելիք պաշարի:



ՀԱՄԱՅՆԱՐԱԿՆ ԴԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ

ԾՐԱԳԻՐ.

32. Հրամատարական պարապմունքները նրապատակ ունեն.

ա) թարմացնել, լրացնել և խորացնել այն տեսական տեղեկությունները, վորոնք վերաբերում են հրաձգային զենքի ձգարանությունը և մարտադաշտում կրակի ղեկավարությունը տեխնիկային.

բ) վարժություններ ձեռք բերել մարտադաշտի հրաձգային հետախուզություն կատարելու և նրա վրա գիտողություն հաստատելու մեջ. բացի այդ վարժեցնել նպատակները գնահատելու, ցույց տալու և այդ նպատակների հետափորությունները վորոշելու մեջ.

գ) գործնականորեն կատարելագործվել հրաձգային կրակի ղեկավարության մեջ. այդ վարժությունները պետք է կատարել զորաչարժերի հետ միասին, այնպիսի կրակային խնդիրներ լուծելով, վորոնք կարող են տեղի ունենալ իրական մարտում:

ՏԵՍԱԿՈՆ ԴԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ.

33. Տեսական պարապմունքների նպատակն է՝ մասնակցողների գիտակցության մեջ թարմացնել ամենակարևոր ձգարանական որենքները և նրանց ոգնել խնայելի ձևերիցություն ցուցահանելու գործնականում այդ որենքները կիրառելիս:

34. Այդ պարապմունքների համար նյութը պետք է վերցնել սույն կանոնադրքի II մասի հավելվածից: Այդ նյութերի ուսումնասիրությունն ինքնուսուխյան պահանջ կառավարչի

մանրամասն լուսարանելու մի քանի հարցեր և նրանց կապը նույնպիսի բնույթ կրող ցուցումների հետ, վորոնք գոյություն ունեն գորքի համապատասխան տեսակների մարտական ծառայություն կանոնադրքերում:

35. Պարապմունքներն իրենց ծավալով և բնույթով պետք է համապատասխանեն մասնակցողների զարգացման մակարդակին: Ախար կլինի պահանջել, մանավանդ կրտսեր պետերից, վոր նրանք գիտական ղեկուցումներ ներկայացնեն դժանկարներով ու մատեմատիքական հաշիվներով. ավելի նպատակահարմար է առաջարկել նրանց տեխնիքական բնույթ կրող կոնկրետ հրաձգային խնդիրներ տեղանքի վրա, իսկ յեթե այդ անհնարին է, ավաղով արկղի վրա, պահանջելով, վոր նրանք գիտակից պատճառարանված լուծումներ տան:

Այդ լուծումները գնահատելիս, ղեկավարը կարող է հենվել փորձով ստացված տեղեկատու տվյալների վրա, վորոնք բերված են կանոնադրքի II մասի հրաձգային աղյուսակներում:

Հիշյալ տեխնիկական հրաձգային խնդիրները իրեն նախապատրաստություն են հանդիսանում նույնանման խնդիրների համար, վորոնց մեջ մտցված է մարտավարական պարագան:

36. Առհասարակ, կարիք չկա շատ ճիշտ ձգարանական թվահաշիվների յետևից ընկնել. մարտում հրաձգային կրակի ղեկավարությունը վոչ թե թվարանական, այլ ավելի շուտ աչքաչափական արվեստ է: Սակայն անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր հրամատար պարզ և ճիշտ պատկերացում ունենա զանազան հեռակայությունների վրա գնդակի հետագծի ձևի ու գեոմետրիկության մասին, ձգվելի ցրման մակերեսի կազմության և մոտավոր չափերի մասին,

դիպման միջին կետերի խոտորումների մեծութ-
յան մասին՝ ըստ հեռավորության, բարձրու-
թյան և դեպի մի կողմը, վոր առաջանում են
զանազան պատճառներից, տարբեր մեծության
նպատակներին դիպցնելու հավանականության
մասին, դործոն հրաձգային կրակի պայմանների
մասին և այլն: Իսկ գլխավորն այն է, վոր նա
յուրաքանչյուր հրաձգային կրակի տեխնիկական դե-
կավարության ելությունն ու պարտականու-
թյունները և հնարավորություն ունենա դրան
գիտակցաբար վերաբերվել:

37. Զգարանական հարցերից շատերը հեշտ
կարելի չե պարզել ավազով արկղի, պարզ դժա-
նկարների, մոդելների և նկարների միջոցով,
վոր ցանկալի չե ունենալ զորամասի հրաձգային
կարբինետում, նույնպես և բոլոր վաշտերում
(հեծելավաշտերում և խմբերում): Դրանից
անկախ, զորամասի հրամատարը, ամենափոքր
հնարավորություն չեղած դեպքում, պարտա-
վոր է կազմակերպել հրամկազմի համար ցու-
ցադրական տեխնիկական հրաձգություններ
(փորձեր) հետեյալը պարզելու համար՝ ձիգերի
ցրման չափերը, միջին հետադժի խոտորումները,
նշանառության դժի վերաբերյալ գնդակի բար-
ձրագույնության մեծությունը, իր զորքերի
գլխավերևից, ծածկված գերքերից և ծածկված
նպատակների վրա հրաձգություն կատարելու
հնարավորությունը, զանազան նպատակների խո-
ցելիությունը, զանազան տիպարի գեներերի հա-
մեմատական հզորությունը և այլն:

Այդպիսի հրաձգությունների համար ծրա-
դրները մշակումը և այդ հրաձգությունների
կատարումը զորամասի պետը կարող է հանձնել
հրաձգային կոմիտեին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՄՐՏԱԴԱՇՏԻ ՀՐԱ- ԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ, ՄԱՐՏԱ- ԴԱՇՏԻ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԵՌԱՎՈՐՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐ ՎՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Հրաձգային կամուկաքի II մասի 11-16 հոդ.)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՈՒՑՈՒՄՆԵՐ.

38. Սույն վերնագրում հիշված զործողու-
թյունները ձեռք են բերվում բավականին կա-
տարյալ և արագ կերպով միմիայն համառ, ըստ
հնարավորին, անընդհատ և յերկարատե դործ-
նությամբ: Դրա համար ել այդ զործնությունը
պարտադիր է յուրաքանչյուր շարային հրամա-
տարի համար, վոչ միայն դրա համար նշանակված
պաշտոնական պարապմունքների ժամերին, այլև
նրանցից դուրս՝ ամեն տեսակի դաշտային պա-
րապմունքի ժամանակ և ընդհանրապես ամեն մի
համար դեպքում:

39. Այդ տեսակի հատուկ պարապմունքները
պետք է կատարվեն զորամասում մշակված ծրա-
դրի համաձայն, առնվազն ամիսը մեկ անգամ և,
ըստ հնարավորին, տեղանքի զանազան տեղամա-
սերում, որվա զանազան ժամերին և պարագայի
տարբեր պայմաններում:

ՄԱՐՏԱԴԱՇՏԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԴԻ- ՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

40. Մարտադաշտի հետախուզության և դի-
տողության յուրաքանչյուր վարժությունը պետք
է տարվի տեղանքի փոքրիչատե մեծ և սովորող-
ներին քիչ ծանոթ տեղամասի վրա, հրաձգային
կրակի հասողության սահմաններում:

ԹԱՆՔԱՐՅԱՆ. — Նախապատրաստական պարամունքները կարելի չե կատարել սենյակում, ԵԵԿԵՓԱ-ՀԵՌԱՏԵՍԻՆ պլանի վրա, այն պայմանով, վոր այդ պլանը լավ կահավորված լինի (պլան-համատեղարան) :

41. Այդ տեղամասի վրա, բացի նրա վրա յեղած տեղական առարկաներից և բնագծերից, պետք է նախապես տեղավորել մի քանի տիպիկ մարտական նպատակներ (հրացանաձիգների և զնդացիների խմբակներ, զանազան մարտական դուգակցություններ) : Գերազանցելի չե այդ նպատակները ներկայացնել կենդանի մարդկանցով և նրանց սին փամփուշտներ ու ճռռաններ տալ հակառակորդի կրակը ներկայացնելու համար. յեթե պահանջված թվով ազատ մարդիկ չկան, կարելի չե բավականանալ փոխադրելի թեթև թիրախներ (կտավից կամ բարակ տախտակից) դատավորելով և նրանց տեղափոխություն համար մի քանի հրացանաձիգներ նշանակելով :

Թե նպատակների տեղեկությունը, և թե վարժություն կատարելուն, պետք է վորոշ մարտավարական առաջադրությունների բովանդակություն տալ. այդ առաջադրությունը պետք է նախապես կազմված ու մտածված լինի ղեկավարի կողմից :

42. Յերբ սովորողները գալիս են բնորոշ դիտակետը, ղեկավարը նրանց ծանոթացնում և վարժության յենթադրելի պարագայի հետ, հայտնում է առաջադրությունն ու առաջարկում և նրանց տեղանքի հետախուզություն կատարելի զնդակոծման գոտում հրաձգային կրակ բանալու նպատակով : Վերոհիշյալը կատարելու ժամանակամիջոցը պահանջարկվում է բոլորների վորոշ թվով :

43. Նշանակված ժամանակն անցնելուց հետո, ղեկավարն առաջարկում է յուրաքանչյուրին պատասխանել մոտավորապես հետևյալ հարցերին. ի՞նչ տեղական առարկաներ, բնագծեր ու անհարթություններ է նա նկատում մարտադաշտում. նա զբաղեց ի՞նչ մարտական նշանակություն և վերագրում. վորտե՞ղ և ի՞նչ նպատակներ և նա յերևան հանել. նրա կարծիքով, նրանցից յուրաքանչյուրը վորքա՞ն է զնդակոծման արժանի տվյալ պարագայում. ի՞նչ զենք և ինչպիսի՞ կրակ և նա պիտանի համարում ողտաբործելու համար. կրակի ի՞նչպիսի գործողություն կարելի չե սպասել և այլն :

Հետո պատասխանները համադրվում են, յենթարկվում են մասնակցողների միասնական քննությունը և գնահատվում են ղեկավարի կողմից :

44. Հրամատարներին պետք է ներշնչել, վոր նրանք սովորություն դարձնեն սխտեմատիկ կերպով կատարել դաշտի գննությունը և զրա համար դաշտը տեսանելի առարկաներով կամ բնագծերով բաժանեն ըստ խորություն՝ մոտավոր, միջին ու հեռավոր պլանների, իսկ ճակատի յերկայնություն՝ աջ, միջին ու ձախ շերտերի : Իրերե բնդհանուր կանոն, հետախուզությունը զերագասելիորեն պետք է սկսել միջին շերտից և մոտավոր պլանից, վորովհետև մարտական տեսակետից այդ տեղամասը ամենապատասխանատուն և համարվում. բայց իհարկե, մարտական առաջադրություն պայմանները հաճախ կարող են և այլ կարգ պահանջել :

45. Նպատակները ցույց տալու համար փորձառություն ձեռք բերելու համար, պետք է անշեղ կերպով պահանջել, վոր առարկաների և նրապատակների դրությունը ցույց տրվեն զրա հա-

մար ընդունված յեղանակներով (կանոնագրքի II մասի 33—38 հոդ.) :

46. Հետախուզութեան ժամանակ չպետք է արդելել, հիշողութեան համար, տեսածը գրի առնել և տեղանքի սխեմատիկ ուղղանկար կազմել թղթի վրա : Ընդհակառակը, պետք է խրախուսել այդպիսի աշխատանքը, իբրև վարժութիւն ամենահասարակ հաշվետվութեան տոմսեր և հետտեսիլ գծանկարներ կազմելու համար :

47. Պարտադիր և նույնպես վարժութիւններ կատարել, թե ինչպես պետք է ոգտվել ուղղական քարտեզներով, կողմնացույցով, յերկրիտակով և այլ անոթներով, ինչպես որինակ՝ հրաձգային քանոնով, հովհարով և այլն, իսկ գնդացրածիդներին համար, բացի այդ անկյունաչափական անոթներով, այն չափով, վորքան դրանք կարող են ծառայել իբրև ոժանդակ միջոց հետախուզութեան և դիտողութեան ժամանակ :

ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՈՐՈՇԵԼԸ

48. Ամբողջ միջին ու կրտսեր հրամատարական կազմը պետք է կարողանա հեռավորութիւններ վորոշել այն բոլոր յեղանակներով, վորոնք ցույց են տրված Հրաձգային կանոնագրքի II մասի 15-րդ հոդ., և մանաւանդ աչքաչափով, վորն ափելի անհրաժեշտ է մարտադաշտի համար :

49. Համենայն դեպս, չարային մասերում բոլոր հրամատարները պարտավոր են վորձառութիւն ձեռք բերել հեռավորութիւններն աչքաչափով բավական ճշտութեամբ վորոշելու մինչև հրաձգային կրակի վերջնակետ հասողութիւնը. իսկ ջուկի (հրաձգային ու ձեռքի գնդացիների) հրամատարները պետք է վորոշեն գործոն կրակի հեռակայութեան սահմաններում (1-500 քայլ) :

50. Հրամատարական կազմը պետք է միշտ նկատի ունենա, վոր հեռավորութիւնները ճիշտ վորոշելու վորձառութիւնը, մանաւանդ աչքաչափով, կարելի չէ ձեռք բերել միմիայն մշտական վարժութիւններով և այն ել միանգամայն զանազան պարագաներում : Դրա համար յուրաքանչյուր հրամատար պարտավոր է ամեն մի հարմար դեպքից ոգտվել, հեռավորութիւնները վորոշելու վարժութիւնների համար :

51. Պետերն ել իրենց հերթին պետք է ոգտվեն ամեն տեսակի դաշտային պարապմունքներից, վորպեսզի իրենց յենթակա հրամատարներին վարժեցնեն հեռավորութիւնները վորոշելու մեջ : Դրա համար կարելի չէ ոգտագործել շարժումների ժամանակ կանգառումներն ու պարապմունքների ընդհատումները, վորոնց ժամանակ հարմար է առաջարկել հրամատարական կազմին մեկ-յերկու հեռավորութիւն վորոշել : Հետագա տարվելիք հերթական պարապմունքների ժամանակ, պետք է հրամայում է հեռավորութիւնները չափել և, ոգտվելով հետեյալ ընդհատումից, հայտնում է վարժութիւններին մասնակցողներին չափելու հետեանքները և նրանց հետ միասին պարզում է կատարած սխալների պատճառները :

52. Այդ վարժութիւնները միաժամանակ հանդիսանում են իբրև մշտական ստուգում՝ ուսուցման այդ բաժնում յուրաքանչյուր հրամատարի պատրաստութեան աստիճանը վորոշելու համար : Յեթե դրա հետ միասին պարզվում է, վոր մի քանի հրամատարների հետ անհրաժեշտ է ավելի սխտեմատիկ պարապմունքներ տանել, այն ժամանակ այդ պետք է կատարել կարմիր բանակայինների հեռավորութիւնները վորոշելու ուսուցման ցուցումների համեմատ :

53. Վերոհիշյալից անկախ, բոլոր հրամա-
տարները պարտավոր են մասնակցելու կարմիր
բանակայինների հեռավորությունները վորոշելու
պարապմունքներին, նրանց որինակ տալով իրենց
հմտությամբ այդ գործում:

ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՐԱՋԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾՆՈՒԹՅՈՒՆԸ

54. Այդ ձևի վարժությունները հրաձգային
տեխնիկան կապում են մարտական գործողու-
թյունների տակտիկայի հետ: Զուտ հրաձգային
տեսակետից, այդ պարապմունքները հրամատա-
րական կազմի համար հանդիսանում են իրրե
խախտը ժամանակի ակտիվ խախտի միջոց՝ ամ-
րացնելու ձեռք բերած տեսական հրաձգային գի-
տելիքները և նրանց գործնական հրաձգային աշ-
քաչափ՝ կամ ունակությունը վերամշակելու հա-
մար, վորն անպայման անհրաժեշտ է մարտական
պարագայում հրաձգային կրակի մատահելի դե-
կավարության համար:

55. Մարտական հրաձգային խնդիրներ լու-
ծելու վարժությունը պետք է տեղի ունենա ամեն
մի մարտավարական պարապմունքի ժամանակ:
Բայց, բացի այդ, անհրաժեշտ է հատուկ լրացու-
ցիչ պարապմունքներ ունենալ դաշտում և նույն-
խի սենյակում:

56. Սենյակային վարժությունները կատար-
վում են արհեստական ցայտուն պլանի (սովորով
արկղի) վրա, կամ ավելի լավ է տեղանքի ուղե-
ֆա-հեռատեսիլ նկարի վրա: Կատարելության
համար ոգտակար է պլանը լրացնել համատեսա-
րանով (հեռատեսիլ նկարով), նույնպես և հար-
մարանքներով՝ նպատակների (հակառակորդի)
յերեան գալու ու տեղափոխվելու համար:

57. Իրական տեղանքի վրա հակառակորդը
պատկերացվում է այնպես, ինչպես ցույց է տրու-
ված մարտադաշտի հետախուզության վարժու-
թյունների համար (հոդ. 41), սակայն նրան դե-
կավարող անձնավորությունը կապվում է պա-
րապմունքների դեկավարի հետ հեռախոսով կամ
տեսողական ազդանշաններով ու գործում է նրա
ցուցումով:

58. Առհասարակ հրաձգային խնդիրների
լուծման բոլոր տեսակի վարժությունները կա-
տարվում են մոտավորապես հետևյալ կարգով.

ա) դեկավարը, հաշվի առնելով առիա տե-
ղանքը (կամ նրա պատկերը), կազմում է վորեկ
մարտավարական առաջադրություն, վորը նպա-
տակ ունի իրադեկ դարձնելու ավելի խոշոր միա-
վորության կազմի մեջ (կամ առանձին) մարտ
մղող հրաձգային խմբակին (ջոկին, դասակին)
այն պարագային, վորի մեջ նա գտնվում է վար-
ժություններն սկսելու րոպեին:

բ) դեկավարը հայտնում է այդ առաջադրու-
թյունը պարապմունքին մասնակցողներին, յեթե
կարիք կա, քարտեզով, և առաջարկում է նրանց
ամենից առաջ տեղանքի (պլանի) վրա մանրամասն
և ճիշտ նշանակել հիշյալ խմբակը և նրա ամենա-
մոտ հարեաններին: խմբակի համար տեսանելի
հակառակորդի դասավորությունն առաջուց նը-
շանակում է (գորքերով կամ թիրախներով) դե-
կավարի ցուցումով:

գ) ընդհանուր պարագայի հոդի (ֆոնի) վրա
դեկավարը ստեղծում է կոնկրետ մասնավոր կը-
րակային խնդիր (վորոշ նպատակներ ցույց տա-
լով, պատվերներ տալով և այլն) և այդ խնդիրն
առաջարկում է պարապմունքին մասնակցողնե-
րից մեկին կամ մի քանիսին՝ առանձին-առան-

ծին կամ միասին կազմակերպված խմբակի կազմում լուծելու համար :

դ) խնդիր լուծողը (լուծողները) պարտավոր են . առաջին՝ վերոշ վճիռ կայացնել ընդհանուր պարագային համաձայնեցրած ու պատճառաբանած , և յերկրորդ՝ այն բոլոր կարգադրություններն անել , վոր նա հարկավոր և տեղին կհամարի իսկական մարտի պայմաններում (հրամաններ , պայմանական նշաններ , աղբյուրներ , բանավոր կամ գրավոր պատվերներ) :

ե) յուրաքանչյուր խնդրի լուծումն ու կատարումը յենթարկվում և մանրամասն քննության բոլոր մասնակցողների կողմից առանձին-առանձին կամ միաժամանակ , իսկ վերջում՝ գնահատվում և ղեկավարի կողմից :

59. Հիմնական տակտիկական խնդիրը չպետք է բարդ լինի , վորպեսզի չմթնցնի վարժության տեխնիկական ելությունը : Ավելի լավ է , յեթե այդ առաջադրությունը միեւնոյնը լինի հրաձգային խնդիրների ամբողջ շարանի համար : Այդ հանգամանքը ժամանակի մեծ տնտեսում կտա և մասնակցողների հետաքրքրությունը կկենտրոնացնի հրաձգային խնդիրների լուծման տեխնիկայի վրա :

60. Առաջադրությունները (հոդ. 58. կետ «դ.») պետք է իրականին մոտ լինեն : Այդ խնդիրները պետք է վերցնել գերադասելիորեն զանազան հրաձգային գեներով սպառազինված մասն հրաձգային միավորությունների մարտական գործունեյության շրջանից :

61. Վարժություններին մասնակցողներին յուրաքանչյուրին պետք է մարտական դեր տալ՝ սկզբում իրենց պաշտոնի համեմատ , իսկ հետո մեկ կամ յերկու աստիճան բարձր , նկատի ունենալով , վոր անհրաժեշտ է պատրաստել ավելի

բարձր հրամատարական պաշտոն ստանձնելու պատերազմի ժամանակ :

62. Միտողների համար առաջադրությունները կարող են ավելի պարզ լինել , նպատակ ունենալով նրանց դուրս քաշել ցուցահանելու միայն տարրական կանոնադրային կանոններն իմանալը : Հետագայում առաջադիմության համեմատ , վարժվողներին պետք է այնպիսի պայմանների մեջ դնել , վորոնք կկայանան նրանց ինքնագործունեյության շրջանակները և նրանցից կպահանջեն ավելի ու ավելի լայն ձեռներեցության ցուցահանում :

63. Խնդիրները լուծելիս , իրականությանը մոտ լինելու համար , պետք է նախ պահանջել , վոր բոլոր կարգադրությունները հենց նույն ձևով և նույն յեղանակով տրվեն , ինչպես նրանք կարող են տրվել մարտական պարագայում , յերկրորդ՝ վոր մինչև նպատակները յեղած հեռավորությունները և այդ նպատակների չափերը վորոշվեն աչքաչափով կամ հասարակ դաշտային յեղանակներով ու անոթներով , և յերկրորդ՝ թույլ տալ տեղեկանքների համար դիմել կանոնադրերին ու այլ ձեռնարկներին և նույնիսկ ընկերներին , բայց միայն սկզբնական վարժության ժամանակ . իսկ հետագայում պարապմունքներին մասնակցողներին պետք է այնպես ղեկավարել , վոր նրանք վարժությունների միջոցով իրենց մեջ մշակեն սեփական հրաձգային աչքաչափ . այդ պահովում է լուծումների նախամտածված ու ճիշտ լինելը առանց տեղեկանքների , վորովհետև նրանց դիմելը հրաձգային մարտում դժվար իրագործելի չէ :

64. Քննության և գնահատության ժամանակ յլրավոր ուշադրությունը պետք է դարձնել լուծման նպատակահարմարության վրա , վոր

միայն տեխնիկական, այլև մարտավարական պարզապի տեսակետից, լուծման իրազորեկու ճշտության վրա հրաձգային տեսակետից, կարգավորությունների վստահության, արագության ու պարզության վրա, նշած հետևանքներին հասնելու հավանականության աստիճանի վրա, զորամասի հրապաշարի մատակարարման վերաբերյալ հուսադրության վրա և այլն:

65. Յեթե խնդիրը լուծվում է առանձին-առանձին մի քանի անձնավորությունների կողմից, քննության ժամանակ կարելի չէ ոգտադործել համեմատական մեթոդը. այդ մեթոդը հեշտացրնում է քննությունն ու զնահատությունը, աջակցում է սխալներն ավելի պարզ հասկանալուն ու պարզարանում է լուծման հետ կապված հարցերը: Վորոշ գեպքերում մասնակցողների համար բավականին պարզ է դառնում, վոր բավարար լուծումներ կարող են մի քանիսը լինել:

66. Կրակի հավանական գործոնությունը հաշվելու կարող է կարիք լինել միայն հազմադյուտ դեպքերում. այդ գործոնությունը կարելի չէ պարզել հեշտ և կոպիտ կերպով դեկավարի վորոշմամբ (մարտական կրակը ճիշտ հաշվի չի յենթարկվում): Բայց յեթե կարիք լինի, այդ հաշիվը կարելի չէ անել, գեկավարվելով կանոնագրքի II մասի հավելվածի ցուցումներով:

Հրաձգային խնդիրների լուծման նախնական անհատական վարժությունները վերջացնելուց հետո, պետք է աստիճանաբար անցնել այդ նույն բոլոր խնդիրների լուծմանը կազմակերպված խմբակներով. այդ դեպքում մասնակցողներին պետք է հերթով նշանակել մերթ այն զորական միավորության հրամատարի դերում, վորին խընդիր է տրվում, մերթ յենթարկյալ պետի դերում:

67. Այդ մեթոդը ձեռնուռ չէ նրանով, վոր մասնակցողներին ավելի լիակատար պատկերացում է տալիս կրակային խմբակների ու կետերի միահամուռ հրաձգային աշխատանքի բնույթի և հնարավորությունների մասին և վարժեցնում է նրանց այդպիսի աշխատանքին ու համագործակցությանը:

68. Կազմակերպված խմբակներով խնդիրներ լուծելիս, պարապմունքին մասնակցողները կամ հաջորդաբար հավաքվում են խնդիրը լուծող պետերի գտնված տեղերում և բոլորն ել մասնակցում են պետի ընդունած մձուի և արած կարգավորությունների քննությանը, կամ միանգամից ցրվում են իրենց հանձնված զորամասերի (պայմանական) դասավորության տեղերը, և յուրաքանչյուրն առանձին սկսում է խնդիրը լուծել: Ղեկավարը, յերբ հարկավոր գտնի, նրանց մի տեղ է հավաքում ցուցումներ տալու կամ բնդունած վճիռները քննելու համար:

69. Հրաձգային խնդիրների լուծման վարժություններին կարելի չէ հետևյալ ձևը տալ՝ կամ յերկկողմանի, զորամասերով նշանակած դաշտային պարապմունքների, կամ յերկկողմանի հրաձգային խաղի ցայտուն կամ, ծայրահեղ դեպքում, խոշոր մասշտաբի տեղագրական պլանների վրա: Բայց հրաձգային խաղերը, իրենց բարդ կազմակերպության, պայմանականության և յերկարատևության պատճառով, կարող են ոգուտ բերել միայն այն ժամանակ, յերբ գեկավարը ոժտված է մեծ փորձառությամբ և հեղինակությամբ:

ՍՈՍԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

70. Ուսուցման այս բաժնի խնդիրն է՝ յուրաքանչյուր կարմիր բանակայինից անհատապես պատրաստել գիտակից, գիպուկ և ճկուն հրաձիգ (հրացանաձիգ, ավտոմատաձիգ, գնդացրաձիգ, նռնաձիգ), վորն ընդունակ լինի մարտում իրեն հատկացված զենքով հաջող դործելու, վորչ միայն պետի ղեկավարութեամբ, այլ և ինքնուրույն կերպով, յերբ այգայիսի ղեկավարութուն չկա:

71. Յուրաքանչյուր շարային կարմիր բանակային նշանակվում է մարտում վորոչ հրաձգային զենքով դործելու համար: Ուստի նրա ուղղակի զինվորական պարտականութունն է՝ ուսումնասիրել այդ զենքի տեսակն ամեն տեսակետից, սովորել նրա հետ հմտորեն վարվել և նրանով շատ լավ աշխատել մարտադաշտում:

72. Դրա հետ միասին յուրաքանչյուր մարտիկ պետք է բավականին վարժված լինի նաև զենքի մյուս բոլոր տիպարների աշխատանքին, վորոնք գտնվում են վաշտի (հեծելավաշտի, զորախմբի) սպառազինման մեջ և բացի զրանից, նա պետք է ծանոթ լինի նաև գնդի հրետանու հրանոթի մոտի դործողութեանն այնքան, վոր ծայրահեղ ղեկավարում նա կարողանա փոխարինել շարքից դուրս յեկած համարին:

73. Հրացանին, վորպես հիմնական հրաձգային զենքի, նույնպես և ձեռքի նռնակին պետք է բավականին տիրապետեն զորամասի բոլոր շարային և սպաշար կարմիր բանակայինները:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐԸ

74. Շարային կարմիր բանակայինների ուսուցման բոլոր մասնագիտութունների դասընթացը պետք է իր մեջ պարունակի.

ա) Չենքի ուսումնասիրությունը՝ նրա նշանակումը, մարտական հատկութունները, մեխանիզմի կազմությունն ու աշխատանքը, քանդկու, սարքելու, մաքրելու, զննելու և խնամելու կանոնները, նույնպես և նրա մեջ պատահած խափանումները վորոշին ու վերացնելը, բացի այնպիսիներից, վորոնց ուղղումը կարելի չէ կատարել արհեստանոցում.

բ) Համապատասխան զենքի համառոտ ձգաբանական տեղեկությունների ուսումնասիրությունը՝ ձիգի և յետահարվածի յերևույթը, զնդակի թուլչքի գծի ձևը, նշանոցի նշանակումը, ձիգերի ցրման որենքը, զանազան պատճառներից առաջացած զնդակների խոտորումը, զնդակի սպանելու և ծակելու ընդունակությունները.

գ) Հրաձգութեան համար վաշտն ուղտագործելու տեխնիկայի ուսումնասիրությունը՝ մարտադաշտի զիտողությունը, կրակային նպատակներ ընտրելն ու փնտտելը և մինչև այդ նպատակները յեղած հեռավորությունները վորոշելը.

դ) Ձիգի (մի շարք ձիգերի) տեխնիկայի ուսումնասիրությունը՝ կրակի պատրաստվելը, լըցնելը, նշանոցի հաստումը, նշան բռնելը, զարկան իջեցնելը և ձիգերը զիտելը.

ե) Կրակ վարելու տեխնիկայի ուսումնասիրությունը՝ միայնակ և խմբական, անշարժ, յերե-

վան յեկող, չարժվող, բաց ու ծածկված նստա-
տակները զեմ, բնադժերի և մակերեսների վրա,
իր դորքերի արանքներով և գլխավերևից, յեղա-
նակի ու յուստախորթյան զանազան սլաքմաննե-
րում, դադալին գրոհի պարագայում (զիմակնե-
րով) և այլն:

Այդ բոլոր բաժինները պետք է անցնել գու-
յահեռարար (մխաժամանակ), յուրաքանչյուրն իր
սեփական հաջորդականութեամբ, բայց և սերտ
կապ պահպանելով միմյանց հետ, նույնպես և
կարմիր բանակայինի տակտիկական պատրաս-
տութեան հետ:

75. Հոդ. 74-ում հիշված ծրագիրը նկատի
ունի զուտ գործնական նպատակ՝ մարտիկին ներ-
շնչել աշն գիտութեանները, ունակութեաններն
ու վարժութեանները, վոր անհրաժեշտ են նրա
համար իրեն հատկացված զենքով հմտորեն գոր-
ծելու համար: Այդ նպատակին կարելի չէ ավելի
յիականաւոր և հաջող կերպով հասնել, անցնելով
հիշված ծրագիրը, մասնավորապես ծրագրի վեր-
ջին յերկու բաժինները մարտական փամփուշտով
հրաձգութեան և մարտական նոնակներ նետելու
վարժութեանների հետ զուգընթացաբար:

Սակայն պետք է հիշել, վոր հրաձգութեանը
կապված է ժողովրդական միջոցների մեծ ծախ-
սերի հետ (լաշն հրաձգարաններ արտադրելու,
նրանց կահաւորումը, ձգարաններ կառուցելն ու
պահելը, մարտամիտերի և թիրախների ծախսու-
մը, մարտական զենքի մաշվելը) և ուսուցման
ժամանակի մեծ կորուստի հետ. դրա համար ել
հրաձգութեանը հնարավոր է միայն շատ սահմա-
նափակ չափերով:

Այդ հանդամանքը պարտավորեցնում է թե
սովորեցնողներին և թե սովորողներին հատուկ
ու չափութեամբ վերաբերվել յուրաքանչյուր ան-

գամ մարտական փամփուշտով արձակելուն, ձի-
գից քաղելով նրան յուրահատուկ ամբողջ խրա-
տական կողմը, իսկական գործնականութեան սր-
կասը լրացնել զուգահեռաբար տարվող վարժական
պարապմունքներով:

Այս հոդվածում հիշվածը նկատի չէ առնված
ներքևում բերված զանազան մասնադիտութեան-
ները կարմիր բանակայինների ուսուցման գասրն-
թացներում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

76. Մարտիկների սոսկական կազմի հետ հրա-
ձգային պարապմունքներն աշնպես պետք է կազ-
մակերպել, վոր կարելի լինի նրանցից յուրաքան-
չյուրին անհատապես սովորեցնել և աստիճանա-
բար կատարելութեան հասցնել, նրա մտավոր և
Փիղիքական բնութեանկութեանների համեմատ:

Մարտիկի ուսուցումը պետք է շարունակի,
ըստ հնարավորին, անընդհատ նրա բանակի շար-
քերում ամբողջ ծառայութեան ժամանակամի-
ջոցում. աշն ամենը, վոր պահանջում է հաստատ
ունակութեաններ կազմել, նա պարտավոր է կա-
տարել, ըստ հնարավորին, ամեն սր, թեկուզ
կրճատ ձևով:

77. Պարապմունքների գասացուցակը պետք է
կազմի վաշտի (հեծելադաշտի, գորախմբի) հը-
րամաաբը նախորդ մի շարաթվա և ավելի
ժամանակի համար, հաշվի առնելով անցածի
յուրացման հաջողութեանը: Գումարտակի հրա-
մատարի (կամ նրան համապատասխան պետի)
հաստատելուց հետո, դասացուցակը կախվում է
աչքի բնկող տեղում, վորպեսզի յուրաքանչյուր
սովորեցնող, նույնպես և սովորող կարողանա ի-
մանալ հերթական գասի բովանդակութեանը ու
պատրաստվել այդ գասի համար:

Դասակի հրամատարները, իսկ յեթե կարիք կա, և ինքը վաչտի (հեծելաժաշտի, զորամարի) հրամատարը պարտավոր են հերթական դասը փոփոխելու իրենց յենթարկյալ պետերի հետ միասին։ Նրանք պարտավոր են պահանջել յենթարկյալ պետերից յուրաքանչյուր անձիկիս գասի համար ծրագիր կազմելու և հետևել, վոր ծրագրերում հաշվի առնվեն սովորողների անհատական անհանձնատիրությունները։

78. Յուրաքանչյուր սրվա դասը պետք է ծրագրի հերթական, միմիանց հետ չափազանց կետերի համակցություն կազմի, դասացույցակի մի քանի բաժնի կամ բոլոր բաժնիների վերաբերյալ։ Այդ նպատակով և ուսուցման ամբողջականությունը, միևնույն ժամանակ բազմապիսին յե դարձնում պարապմունքները, շատ չի հաղնեցնում սովորողների ուղարկությունը ու նրանց մեջ պահպանում և կենդանի հետաքրքրությունը։

Յուրաքանչյուր դասի համար պետք է նրապատակ դնել քիչ քան սովորեցնելու, վորպեսզի սովորողը չձանրանարևոյի ու հավատար չկորցնի զեպի իր ընդունակությունները, և ձգտել պարզ ու հաստատ յուրացմանը։

79. Որական դասի վորոշ մասերն ավելի յով և անցնել սովորողների զանազան խմբակներում տարբեր կարգով, վորպեսզի ավելի յով սպասարծել պարապմունքների տեղը (սենյակը, բակը, տիրը, հրաձգարանը), նույնպես և սովոր յեղած վարժական անոթներն ու ձեռնարկները։

80. Ուսուցման ժամանակ ամենից անոթ պետք է պահանջել սովորողի կողմից զիտակցություն և իրրև դրա հետևանք յեկացի ձևներեցություն։ Դրա համար ուսուցիչը, պարապմունքն սկսելով, պարտավոր է ամեն անգամ բացատրել պարապմունքի նպատակն ու անհրաժեշտությունը։

նր, նույնպես և թե ինչ է յենթարկյալ ձևը բերելու տվյալ դասի ընթացքում։

81. Ուսուցման յեղանակները պետք է դործնական լինեն։ սկզբում պետք է պարզ ցույց տալ ամբողջ գործողությունը և դրա հետ միասին անհրաժեշտ բացատրություններ տալ, իսկ սովորողին հարկադրել յեղրակացություններ անելու։ հետո, յեթե կարիք կա, բարդ գործողությունը պետք է բաժանել պարզ ձևերի, իսկ սովորողներն ինքնուրույն կերպով պետք է վարժություններ կատարեն։ սովորեցնողը պետք է համբերությունամբ սկզբի սովորողի սխալները, մինչև վոր սովորողները հասնեն յուրաքանչյուր ձևի ճիշտ, իսկ հետո ճարպիկ կատարմանը։ վերջուպես բոլոր ձևերը պետք է միացնել, մի ամբողջ գործողություն կազմել և պահանջել, վոր սովորողները համառոտ շարունակեն այդ գործողությունները սովորեցնողների հսկողություն տակ, սկզբում հասարակ, իսկ հետո ավելի ու ավելի բարդ և զգալի պարագայում, վորն աստիճանաբար պիտի մոտենա մարտական պարագային։

82. Այն ամենը, վոր հարկավոր չի մարտադաշտի համար, պետք է դուրս գցել իրրև ավելորդություն։ Մարտադաշտում իրագործվող ձևերի և գործողությունների ուսումնասիրություն ժամանակ, անհրաժեշտ է ձգտել սկզբում նրանց ճիշտ, իսկ հետո արագ կատարմանը և աստիճանաբար աշխարհի հաստատ վարժությունների հասցնել, վոր այդ վարժությունները պահպանեն իրենց ուժը նաև մարտի ժանր պայմաններում (սովորմանից)։

83. Կարիք չկա ձգտելու վարժությունների միաժամանակ և միակերպ կատարմանը մի քանի սովորողների կողմից, յեթե այդ չի պահանջվում

միասնական աշխատանքի հատուկ պայմաններով : Գործի ելությունը պետք է գերադասել նրա ձեռն :

84. Վորտեզ հնարավոր է , պետք է մացնել սպորտի , մրցակցության ու նախանձորդության երեւոյթները : Սովորողների հառաջադիմությունները պետք է անշուշտ կերպով մատնանշել ու խրախուսել , իսկ յետ մնացողների վրա հատուկ ուշադրութեամբ դարձնել , պարզելով ու վերացնելով նրանց յետ մնալու պատճառները :

85. Պարապմունքների վայրը զլխավորապես պետք է դաշտը լինի : Յեթե , կարիքից ստիպւած , այդ պարապմունքները տարւում են սենյակում , համենայն պէտք չպետք է աչքաթուղ անել իրական մարտական պարապայի և իսկական հետաքրքրութեան պահանջները :

86. Յեղանակից , ինչպես և որպէս ժամանակից չպետք է քաշվել : Ընդհակառակը , նկատի տանելով նրանց իրական բազմադանությունը , պետք է լայն չափով սպասարկել դանդաղ պայմանները :

87. Պարապմունքների համար յուրաքանչյուր վաշտ (հեծելավաշտ , գործախումբ) պետք է ունենա ընդ որ անհրաժեշտ վարժական հրացանների , գործիքների ու ձեռնարկների համալիրը , հաստատուած ցուցակի համաձայն :

88. Զենքով պարապմունքներ սկսելուց առաջ , զժրախտ պատահարներից խուսափելու համար , անհրաժեշտ է ուշադրութեամբ գննել պահեստարանները , սկաւառակները , պահուստները , ժապաւիկները , փամփուշտանոցները , պայուսակներն ու փամփուշտակները , վորպէսզի համոզվել , վոր նրանց մեջ պատահաբար մարտական , փոքրալից կամ սին փամփուշտներ չկան : Այդպիսի փամփուշտները պետք է տալ միմիայն համապատասխան վարժութեաններ

կատարելուց առաջ , սովորեցնողի խիստ հսկում դուրսն տալ : Այդ նույնը վերաբերում է ձեռքի և հրացանային նռնակներին :

Վերահիշյալը կատարելու պարտականութեան ընկնում է պարապմունքներն անմիջապէս տանող բոլոր պետերի վրա , վորովհետև նրանք հանդիսանում են առաջին պատասխանատուները պարապմունքների ժամանակ տեղի ունեցող զժրախտ պատահարների համար :

ՀՐԱՅԱՆԱԶԳԻ ԵԿՈՒՆՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՈՒՅՈՒՄՆԵՐ

89. Ներքևում բերված դասընթացը կազմված է այն նորընտիր կարմիր բանակայինների համար, փորձը մինչև ծառայությունը հրազեն չեն դորձածել: Սկզբնական պատրաստություն ունեցող կարմիր բանակայինների համար ծրագրից չառլան կարելի չէ դուրս ձգել, վաշտի (հեծելաՎաշտի, զորախմբի) հրամատարի հայեցողությամբ, սակայն այն պայմանով, փոր ամբողջ ծրագիրը (հոդ. 74) սխառմատիկ կերպով անցած լինի նրանց հետ, և անտեսած ժամանակը ոգտագործված լինի նրանց զխակիքների, ունակությունների և վարժությունների հետագա կատարելագործման համար:

Շատ ընդունակներին, նրանց հառաջադիմության համեմատ, պետք է ոգտագործել իրեն սովորեցնողների ոգնականների:

ՀՐԱՅԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

90. Հրացանի ուսումնասիրության ժամանակ պետք է զեկափարվել սույն կանոնադրքի 1 մասում բերված նկարագրություններ:

91. Հրացանը, իրեն մարտական զենք, խրհամելու համար, նրա կազմության ուսումնասիրությունը պետք է սկսել վարժական տիպար-

ների վրա և այն հաշվով, փոր սովորողը զենք ստանալու ժամանակ նրա մասին արգեն բավականին հասկացողություն ունենա, սովորած լինի զենքի հետ խնայողաբար վարվել և նրան մաքուր ու սարքին պահել:

Մարտական հրացանները պետք է նորընտիր կարմիր բանակայինների ձեռքը տալ նրանց զորամասը մոտեկու հենց առաջին շարափվա ընթացքում:

92. Ուսումնասիրությունը պետք է կատարել հետևյալ կարգով.

ա) ծանոթություն հրացանի նշանակման և նրա մարտական հատկությունների հետ.

բ) ընդհանուր հասկացողություն հրացանի և փամփուխի կազմության մասին.

գ) հրացանի հետ վարվելու տարրական կանոնները. նրա քանդելը (կիսատ), սարքելը, մաքրելը և պահելը.

դ) հրացանի բոլոր մեխանիզմների աշխատանքի ուսումնասիրությունը, նրա կազմության բոլոր մանրամասնությունների հետ չաղկապված.

ե) լրիվ քանդելու, մաքրելու և սարքելու կանոնները.

զ) հրացանը սարքած և քանդած դրությամբ զննելու կանոնները, հրացանը սարքելու և բոլոր մասերի սարքին լինելու ստուգումը:

93. Հրացանի, նրա նշանակման և մարտական հատկությունների մասին սկզբնական ծանոթություն տալու համար, իրեն ամենալավ միջոց, ծառայում և հենց հրացանը ցույց տալը, զրան համակցելով հրացանով մարտական փամփուխ արձակելը:

94. Այդ յեղանակով ցույց տալու կարգը կարող է հետևյալը լինել.

Չգարան կամ հրաձգարան գալուց հետո (խկ յեթե աղգախիսներ չկան, կիրճում, հո-
 գաթմբի մոտ և այլն), սովորեցնողը տեղավո-
 րում է սովորողներին այնպես, վոր բոլորն էլ
 տեսնեն իր գործողութիւնները: Սովորեցնողը,
 բացատրելով պարապմունքի նպատակը, վեր-
 ցնում է (կամ առիթ և փորձված հրացանաձգին)
 ստուգված ու լավ խմող հրացան և, բացատրե-
 լով իր գործողութիւնները, դանդաղ լցնում է
 հրացանը մեկ փամփշտով և հետո արձակում է
 50—100 քայլ հեռավորութեան վրա դրած թի-
 րախին, վորն իր կենտրոնում պիտի ունենա
 պարզ յերեացող նշանառութեան կետ: Հետո
 հրացանը լցնում է պահունակով և նույն թիրա-
 խին ելի 5 գնդակ և արձակում: Գրանից հետո
 սովորողներին ստանում է թիրախի մոտ և, դի-
 պլոմները ցույց տալով, բացատրում է հրացանի
 մարտական նշանակման ու նրա ամենագլխավոր
 մարտական հատկութիւնների մասին, այսինքն
 դիպուկութեան, արագաձգութեան, գնդակի ծա-
 կելու ուժի և նրա թռիչքի հասողութեան մասին:

Պետք է հենց այդտեղ էլ խրովիլակի վրա
 ցույց տալ սվինով ու կոթով հարված տալը,
 փորպեսզի սովորողների զետակցութեան մեջ
 ամրացնել այն հանգամանքը, վոր հրացանը
 ծառայում է նաև ձեռնամարտի համար:

Մանքութիւն. — Յեթե վորեւս պատճա-
 րով ուսուցման առաջին օրերում վերոհիշ-
 յալը չի հաջողվի, անհրաժեշտ է այդ կատա-
 րել հենց առաջին հնարավորութեան դեպքում
 և մինչև այդ սահմանափակվել միայն բանա-
 վոր բացատրութիւններով:

95. Հրացանի կազմութեան մասին սովո-
 րողներին ընդհանուր ծանոթութիւն տալու հա-
 մար, պետք է նրանց բացատրել, թե ինչ նշա-

նակում ունեն և ինչ աշխատանք են կատարում
 փողը, նշանոցը հատիկի հետ միասին, փակա-
 ղակը, վայրիջուց մեխանիզմը, պահեստարանը,
 սվինը և ագուստը: Փամփուշտն անհրաժեշտ է
 մանրամասն ուսումնասիրել, ուստի պետք է
 ցույց տալ նրան ամբողջովին, արմատացած և
 քանդած ձևով: Այդ միջոցին բացատրել յուրա-
 քանչյուր մասի նշանակումը, ցույց տալ և ջար-
 դել հրապատիճը, ցույց տալ հրածակը, մի պրա-
 դունց վառող այրել և բացատրել, թե ինչ են
 վառողային գազերը և ինչպես են նրանք գոր-
 ծում փողի ներսում:

96. Քանդելը, մաքրելն ու սարքելը սովո-
 րեցնելու համար, սովորեցնողն այնպես է տե-
 ղավորում սովորողների խմբակը, վոր նրանցից
 յուրաքանչյուրը կարողանա տեսնել նրա գոր-
 ծողութիւնները: Հետո նրանց աչքի առաջ
 դանդաղ կատարում է ուսումնասիրվելիք ձեւը,
 փորից հետո պաշարկում է սովորողներին ինք-
 նուրույն կերպով կատարել այդ ձեւն իր հսկո-
 րութեան տակ:

Վորպեսզի սովորողներից չատերը հնարավո-
 րութիւն ունենան անձամբ կատարելու ուսում-
 նասիրվելիք ձեւը, պարապմունքների ժամանակ
 հերթական խմբակին պետք է ավելի շատ վար-
 ժական հրացան տալ (այդ ժամանակ կարելի չի
 մնացած խմբակները նշանակել այլ պարապ-
 մունքների համար):

Սովորողներին միաժամանակ պետք է ծա-
 նոթացնել հրացանի պատկանելիքների, նույնպես
 և մաքրելու և յուղելու նյութերի ու նրանց
 գործադրելու յեղանակների հետ:

97. Մեխանիզմների կազմութեան և աշխա-
 տանքի մանրամասնութիւնները բացատրելիս,
 սովորեցնողը ձեռքի տակ պիտի ունենա առնվազն

2 վարժական հրացան՝ դրանցից մեկը սարքած, իսկ մնացածները քանդած: Քանդած հրացանի առանձին մասերը ցույց տալով և նրանց նշանակումն ու աշխատանքը բացատրելով սարքած հրացանի վրա, կարելի չէ հեշտ ու արագ հասնել սովորողների հասկանալուն ու յուրացմանը: Այդ ժամանակ մեծ ոգուտ են տալիս գեներ տրամատած տեսակները, մոդելները և ցուցադրական զմանկարները:

98. Սկզբում չպետք է պահանջել բերանացի սովորել մասերի անունները. պարապմունքների ընթացքում հաճախակի կրկնությունների ժամանակ անուններն ինքնատիւնքյան կմնան ուսվորողի հիշողության մեջ: Սակայն անհրաժեշտ է, վոր ուսուցման վերջում ավելի կարեւոր և հաճախակի կրկնվող մասերի անունները լիակատար յուրացված լինեն:

99. Հրացանի մասերի ուսումնասիրության հետ միասին պետք է զուգընթացաբար բացատրել սովորողներին այն անսարքությունների մասին, վորոնք առանձնապես խանգարում են հրացանի կանոնավոր աշխատանքին նույնպես և նրա դիպուկությունը: Այդ միջոցին պետք է բացատրել, թե այդ անսարքությունները սովորաբար ինչ պատճառներից են առաջանում, ինչ նշաններից կարելի չէ վորոշել այդ և ինչպես կանխել ու վերացնել նրանց: Նույնը պետք է կատարել և պահուստիկ ու փամփշտի վերաբերյալ:

Հրացանի խփելու վրա նրա զանազան անսարքությունների ազդեցությունը պետք է ցույց տալ պարզ տեսանելի կերպով տիրում կամ հրաձգարանում, մարտական փամփշտներով հրաձգություն կատարելով: Դրա համար, իբրեւ հարմար զեպք, ծառայում է վաշտի (հեծելա-

վաշտի, զորախմբի) հրացանների խփելու ստուգման հրաձգությունը:

100. Հրացանի զննության և նրա մեխանիզմների աշխատանքի ուսուցման կանոնները ուսումնասիրվում են հուլ. 96 բացատրած կարգով: Դրա հետ միասին սովորեցնողը պարտավոր է մատնանշել, թե ստուգման ժամանակ վոր մասերի վրա և, մանավանդ, ինչի վրա անհրաժեշտ է ամենաքիչ ու չափազանց զարմնել և ինչի համար:

ԶԳԱՔԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

101. Զգարանական տարրական որենքների յուրացումը սովորողներին կողմից անհրաժեշտ է նրա համար, վոր նա մարտում կարողանա միանգամայն զիտակցաբար և խելացի կերպով տալ իր պնդում և, կարիք չեղած զեպքում, զործել առանց պետի ցուցումների ու գեկավարության:

Այդ կանոնների համաոտ բացատրությունները արված են սույն կանոնադրքի II մասի համկրկնում:

102. Զգարանական տեղեկությունների դասավանդումն առհասարակ բարդ գործ է և սովորեցնողի կողմից պարապտականություն և պահանջում. ուստի այդ գործը պետք է վարի առավելապես ինքը վաշտի (հեծելավաշտի, զորախմբի) հրամատարը:

103. Այն ամենը, ինչ հնարավոր է, պետք է ցույց տալ մարտական փամփշտներով հրաձգություն միջոցով: Պարզ բնույթ կրող ցուցադրական հրաձգությունները (ձիվը ցույց տալը, նշանոցի դերը, հրաձգության դիպուկության

վրա գանապան պատճառների ազդեցութիւնը և ալլըն) կատարւում է վաշտի (հեծելավաշտի, դարախմբի) հրամատարի ձեռնընկերութեամբ. խոյն ալն հրաձգութիւնները, վորոնք ավելի լարդ պատրաստութիւն են պահանջում (հետագծի ձևը, ցրման մակերեսի չափերը և ալլըն ցույց տալիս), կազմակերպւում է ավազ պետերի կարգադրութեամբ, զնդի մի քանի կամ բոլոր ստորաբաժանների համար միաժամանակ:

Առհասարակ, բոլոր ցուցական հրաձգութիւնների համար, իբրև անհրաժեշտ պայման, պետք է ծառայի խնամքով պատրաստութիւնը, վորն ապահովում է անհաջողութիւններից ու պատահականութիւններից:

104. Սովորողներին հրացանի հետ ծանոթացնելու համար, հենց ստալին ցուցական հրաձգութիւնից սկսելով (հոդ. 94), պետք է ձգարքանական տեղեկութիւնները ուսումնասիրութիւնն սկսել ձիգի յերևույթի բացատրութիւնից:

Մարտական, տրամաւոր և վարժական փամփուշտները սովորողներին ցույց տալուց և նրանց նշանակման ու կազմութեան մասին համառոտ հասկացողութիւն տալուց հետո (յեթե ալլըն առաջուց չի կատարւում), պետք է բացատրել տրամաւոր հրացանի ոգնութեամբ, թե ինչ է կատարւում հրահանը զարկանի հետ միասին իջեցնելիս, թե զարկանի տեղը հրապատիճին զարկելիս ինչպիսի և հրապատիճը բացառւում ու պայթեցնում վառուղի լիցքը. ինչու ալլըն պայթիւնից առաջացած գազերը մղում են զնդակին փողանցքի մէջ և նրան արագ ու առաջաձիգ շարժում հաղորդում, ինչու միաժամանակ յետահարւում է ստացւում, ալլընի հրացանի հըրում հրացանաձգի ուսին: ||

Հենց այստեղ էլ պետք է բացատրել ախտների նշանակւումն ու անհրաժեշտութիւնը: Ալլըն զնդարում կարող է ոգտակար լինել ոգնական ցուցական անոթը. դա մի փայտե զնդակ է մեծացրած չափով. նրա յետեւ ծալրին պտուտակաձև դասավորւած փետուրներ են ամրացւում. փետուրները հարկադրում են զնդակին թռիչքի ժամանակ պտտւել և գլխամասով դեպի առաջ թռչել, առանց գլխիկոնձի տալու: Յեթե ալլըն պիսի անոթ չկա, կարելի չէ հիշեցնել սովորական հոլի հալսաարակչութիւնը:

105. Հետագծի ձևը պարզ, տեսանելի էրպարով ամենալավն է ցույց տալ հետքաթող (թրոիչքի ժամանակ ծխալոր հետք թողնող) պընդակների ոգնութեամբ: Յեթե ալլընի զնդակներ չկան, կարելի չէ ոգտակործել հետեյալ յանգանակը.

Հրաձգարանի ուղղագծի ուղղութեամբ 100, 200, 300, 400, 500 և 600 քայլ հեռավորութիւնների վրա վահաններ են կանգնեցնում ալլընի չափերի, վոր արձակած զնդակների ամբողջ խուրճը նրանց բռնի: Վահանները դասավորւում են սանդղաձև, վորպետի կրակի գծից կարելի լինի տեսնել և հարկածել յուրաքանչյուրն առանձին, առանց մյուսներին խփելու, և հալսաարեցնում են ալլընի, վոր նրանք վրա նշանակած սարկ աչքի բնիկող նշանառութիւն կետերը անպայման մի ուղիղ գծի վրա լինեն՝ բոտ բարձրութեան: Հրաձգութիւն կատարելը հանձնարարւում է փորձւած հրացանաձգի սոձեռն հաստարանից կամ հենարանից: Յուրաքանչյուր վահանի վրա, նշանոցի միեւնոյն հաստուամով և, վորքան հնարավոր է, խնամքով ու միակերպ նշան բռնելով, պետք է հիշգրտւում կամ տասնական զնդակ արձակել:

Հրաձգությունը վերջացնելուց հետո, յուրաքանչյուր վահանի վրա պետք է փորձել և բոլորակով նշանակել դիպումների միջին կետերը: Երման մակերևոնները պետք է դնել (ափելի լավ և միջուկների կենտրոններից) և ներկել լավ տեսանելի ներկով: Գրանից հետո վահանները ցույց են տալիս սովորողներին համապատասխան բացատրություններով:

Վերահիշյալ յեղանակով կարելի չէ սովորողներին միանգամից պարզ հասկացողություն տալ հետագծի ձևի, ձիվերի խուրձի և ցրման մասին:

106. Յեթև հոդ. 105 նկարադրված հրաձգությունը զգալի լինի կատարել, հետագծի ձևը կարելի չէ ցույց տալ փետուրներով գնդակ (փոր հիշված և հոդ. 104), սովորական քար նետելով կամ հրդեհաշիջ խողովակից կամ ջրհանից անընդհատ խփող ջրի հոսանքի միջոցով: Պետք է միայն հիշել, փոր ալյուր ձևով ստացած հետագիծն ափելի ուղղորդ է, քան իսկական գնդակի հետագիծը:

107. Հանձնարարվում է հետագիծը նկարել չափ խոշոր չափացույցով, լավ տեսանելի դժամ նկարով զորանոցի կամ ձգարանի պատի վրա, համեմատական չափով փոքրացրած նպատակների կերպարաններով, ցրման մակերևոններով և այլն: Ոգտակար է նույնպես յուրաքանչյուր վաշտում (հեծելավաշտում, գորախմբում) մոզել ունենալ հորիզոնական տախտակի ձևով, վորի վրա պետք է ամրացնել փայտե մաթակներ և սրանց միջով բարակ յերկաթալարեր անցկացնել՝ նշանադրության դիմն ու հետագծերի խուրձը ցույց տալու համար:

108. Գնդակների ցրման չափերն ու բնույթն ըստ հետափորության կարելի չէ հեշտ կերպով

ցույց տալ հրաձգություն կազմակերպելով լայն ջրային տարածության (լճի) վրա, իսկ ձմեռը ձյունի կամ սառույցի վրա: Յերկրորդ դեպքում պետք է 100—200 գնդակ արձակել (ափելի լավ և հասանցավոր գնդացրով): ալյուր պետք է կատարել, միևնույն նշանոցով մի կետի վրա նշան բռնելով, իսկ հետո մի քանի մարդ չլիք կազմած ուղարկել, ձյունի մեջ մտած գնդակների հետքերը փնտրելու և նրանց տեղերը ձյունի վրա կամ ցցերով նշանակելու համար:

Հետո ալյուր ձևով սրբող նշանակված ցրման մակերևոնի մոտեցնելով սովորողներին, կարելի չէ հեշտությամբ պարզ պատկերացում տալ նրա մասին:

109. Գնդակների՝ ըստ խորության ցրման մասին կարելի չէ հասկացողություն տալ հրաձգարանում հինգ չարք թիրախներ (գտակաշափ) միաժամանակ գնդակոծման միջոցով: ալյուր թիրախները պետք է դնել միմիանց ծածրակի դիմաց 200, 400, 600, 800 և 1000 քայլ հեռավորության վրա և գնդակոծել միևնույն 6 նշանոցով և նշան բռնել միջին չարքի ստորոտին: Յեթև ալյուր թիրախները միևնույն բարձրության վրա լինեն (հարթ տեղանքում) բայց բռնված կլինեն բնական ցրման մակերևոնով և փորձ հարված կկրեն:

110. Նշանոցի նշանակված բացատրելու համար, հանձնարարվում է հեռավալ յեղանակը:

Սովորողներին հիշեցնելով, փոր գնդակը թռիչքի ժամանակ մշտապես լիջնում է փողանցքի տառնցքի ուղղությունից գեպի ցած, պետք է հասկացնել նրանց, փոր վորքան մեծ և միջին նշանը յեղած հետափորությունը, այնքան փոքր ափելի բարձր պիտի ուղղված լինի, վորպեսզի գնդակը կարողանա թռչելով հասնել նշանին:

Բայց փորովհետեւ յուրաքանչյուր հեռավորութեան համեմատ այդ բարձրացումը հիշին անհնարին եւ, ուստի հրացանաձկի դործն հեշտացնելու համար շարժական նշանոց եւ հնարած, վորին կարելի յե հեռավորութեանը համեմատ զանազան բարձրութիւն տալ. յեթե այդ բարձրութիւնը ճիշտ եւ, փողանցքը նշանառութեան ժամանակ ինքն իրեն այնքան կրարձրանա, վորքան այդ հարկավոր եւ, վորպէսզի զնդակը կարողանա նշանին դիպչել: Հետո սովորողներին պետք ե պարզ ցույց տալ վերոհիշյալը. զրա համար պետք ե 10—15 քայլի վրա բարձր թիւրախ կանգնեցնել եւ, նրա ներքեւ յեզրին նշան բռնելով, մի քանի ձիգ կատարել մարտական կամ փոքրալից փամփուշտներով, նշանոցի հաստուծն աստիճանաբար ավելացնելով (որինակ՝ 4, 10, 16, 24): Նշանոցի բարձրութեան ավելանալու հետ միասին դիպման կետի աճող բարձրագունութիւնը՝ նշանառութեան կետից սովորողներին պարզ ցույց կտա ուղղութեան համապատասխան փոփոխութիւնները:

111. Ձանազան սխալների ազդեցութիւնը՝ ձիգերի ճշտութեան վրա (սխալ վերցրած հատիկը, հրացանը թեքելը եւ այլն) կարելի յե նույնպէս ցույց տալ հրաձգութեամբ կամ միայն հրացանով հաստոցից նշան բռնելով. յերկրորդ դեպքում փակադակը պետք ե հանել եւ ամեն անգամ փողանցքի առանցքի ուղղութիւնը նշանակել, փողի միջով նայելով: Գործն արագացնելու համար, կարելի յե հաստոցների վրա յերկու կամ նույնիսկ յերեք հրացան ամրացնել եւ զրանցից մեկով նշան բռնել ճիշտ, իսկ մյուսներով՝ վորոշ եւ րացահայտ սխալներով: Յետեւ սովորողներին առաջարկենք նայել եւ վորոշել, թե հրացաններն ինչպէս են ուղղված նշանին՝

սկզբում նշանոցով, իսկ հետո փողանցքի միջով, նրանց հեշտ ե համոզել, վոր զնդակը կարող ե զխալուկ լինել միայն ճիշտ նշան բռնած հրացանով:

Ծանոթութիւն. — Ձենքը թեքելու ազդեցութիւնը ցույց տալու համար անհրաժեշտ ե վերցնել բավական բարձր նշանոցի հաստուծ (18—20), այլապէս այդ ազդեցութիւնը բավական ցայտուն կերպով չի յերեւալ:

112. Հրացանային զնդակի ծակելու ուժի հետ սովորողներին ծանոթացնելու համար, պետք ե տարբեր տեսակի նյութերից նախապէս պատրաստած ժողովածու ունենալ՝ զնդակներով ծակած ու զնդակները մեջը խրված: Այդպիսի ժողովածուներ պետք ե հաւաքած լինի Հրաձգային կարիներում:

ՀՐԱՁԳԱՅԻՆ ՀԵՏԱԿՈՒՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՐՏԱ- ԴԱՇՏԻ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

113. Հրացանաձիգներին վերնագրում ցույց տված գործողութիւնները սովորեցնելիս, պետք ե, ընդհանրապէս, ղեկավարվել մոտավորապէս այն ցուցումներով, վորոնք բերված են վերեւում հրամատարական կազմի հետ տարվելիք համապատասխան պարապմունքների համար (հոդ. 38—45): Տարբերութիւնը միայն պահանջների ծավալի մեջ ե. հաշվի առնելով այն խնդիրներին բնույթը, վորոնք կվիճակվեն հրացանաձիգին մարտադաշտում, անհրաժեշտ ե մարտիկի մեջ գլխավորապէս ունակութիւնը զարգացնել, թե ինչպէս կողմորոշվել տեղանքի վրա մանր առարկաների ե նպատակների վերաբերյալ, նույնպէս ե այնպիսի փոքր հեռավորութիւն-

ների վերաբերյալ, վերոնք համապատասխանում են հրացանի մարտական գործադրությունը:

114. Անհրաժեշտ է հենց սկզբից բնակացնել հրացանաձգին աշխարհի ուղղակի տեղափոխել գործածելուն, վերոնցով վերջավում են տեղանքի գնացան կետերը, բնագծերն ու ձևերը, անհրաժեշտությունների մասերը, տեղական առարկաները, մարտական նպատակները և այլն, նույնպես և նրանց տեղը ցույց տալու համար քննարկված միջոցներին:

Հետագայում այդ պարագայումները պետք է կենտրոնացնել հրացանաձգների գործնական պարագայումների վրա, վերոնց բնագծում նրանք պետք է հետևից արագ գտնեն հրամատարի բերանացի ցույց տված առարկաներն ու նպատակները, նույնպես և մարտագաղտում ինքնուրույն կերպով կողմորոշվելու վրա, համառոտ զեկուցելով բոլոր նկատածների մասին:

ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՈՐՈՇԵԼԸ

115. Յուրաքանչյուր ստակական հրացանաձգին պետք է համառ վարժություններով հեռուց հետ հասցնել այն աստիճանին, վոր նա կարողանա հրաձգություն համար բախական ճիշտ և արագ հեռավորությունները վորոշել մինչև 1000 քայլի սահմաններում:

116. Աչքաշարով հեռավորությունները վորոշելու վարժությունները յերկու տեսակ են լինում. նախապատրաստական՝ նոր սկսողների և անփորձ կարմիր բանակայինների համար և գործնական՝ բոլոր մնացածների համար:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐժՈՒԹՅՈՒՆՆԵՐ

117. Նախապատրաստական վարժությունների նպատակն է՝ սովորողների տեսողական հիշողություն մեջ տպավորել, իբրև չափելու միավոր, 200 քայլ հեռավորություն մեծությունը գնացան տարածությունների վրա և դրա հետ միասին նրանց տալ այն անհրաժեշտ գործնական յեղանակները և ունակությունները, վորոնք ոգնում են հեռավորություններն աչքաշարով վորոշելուն:

118. Այդպիսի վարժությունների կարգը կարող է հետևյալը լինել.

ա) մի վորևե մեծ տեսած լր ունեցող զիտակետից վաղորդք չափում են 4-5 ուղղություն, մինչև 1000 քայլ յերկարություն: Այդ ուղղություններից յերկուսը (մեկը դեպի արևել կողմը, մյուսը՝ արևելի հակառակ, վորպեսզի առարկաների գնացան յուսավորում ստացվի) ամեն մի 200 քայլի վրա նշանակում են ցցերով (նշանաձողերով), իսկ մյուս ուղղությունների վրա նշանակում են հեռավորությունները մինչև մի քանի տեղական առարկաներն ու կետերը.

բ) բոլոր ուղղությունների վրա յուրաքանչյուր ցցի կամ տեղական առարկայի մոտ նշանակում են առանձին մարդիկ կամ խմբակներ, զանազան մարտական դրություններ և այնպես, վոր նրանք զիտակետից տեսանելի լինեն: Այնպիսով և, յեթե այդ մարդիկ տարբեր հագուստով լինեն (զանազան գույնի բլուզներով, դրատներով և այլն). կամ իրենց մոտ գնացան գույնի դրոշակներ ունենան.

գ) զեկավարը, սովորողներին զիտակետում տեղափոխելուց հետո, նրանց ուղղությունը հրամայելով և նշանակված ուղղություններից մեկի վրա և առաջարկում է նրանց ուղադրությունները յերկու խմբակների միջև յեղած 200 քայլ հեռա-

վորությունները, ամենամոտրիկներից սկսած մինչև ամենահեռուները, նույնպես և տարբեր ուղղությունների վրա յեղած մարդկանց կերպարանները.

դ) հուշողական հարցերի միջոցով պետք է սովորողները հետևյալ յեղրակացությունները հանեն.

1. վոր 200 քայլ տարածության թվացող մեծությունը, քանի հեռանում է դիտողից, այնքան փոքրանում է. 200 և 400 քայլի վրա դասավորված խմբակների միջև յեղած հեռավորությունն ավելի մեծ է թվում, քան 600 և 800 քայլի վրա, կամ ել ավելի հեռու, թեպետ ամեն տեղ հավասար չափած է 200 քայլ.

2. վոր մարդկանց կերպարաններն ու առարկաները քանի հեռանում են, այնքան իրենց մեծությամբ ավելի ու ավելի փոքր են թվում և ավելի քիչ պարզությամբ են յերևում.

3. վոր փոքր առարկաները (պտուկած մարդը, քարը, թուփը, փոքր շենքը) իրական հեռավորությունից ավելի հեռու յեն թվում. իսկ խոշորները (ամբողջ հասակով կանգնած մարդկանց խմբակը, պուրակը, մեծ տունը), ընդհակառակն, ավելի մոտ են թվում:

ե) Հետո ղեկավարը, սովորողների ուշադրությունը դարձնելով մյուս նշանակած ուղղության վրայի մարդկանց խմբակների և տեղական առարկաների վրա, առաջարկում է նրանց հեռավորությունները համեմատել նախորդների հետ և ցույց է տալիս.

1. վոր վառ լուսավորված առարկաներն ավելի մոտ են թվում, քան ստվերում գտնվողները.

2. վոր այն առարկաները, վորոնք իրենց գույնով շատ են տարբերվում շրջապատող տեղանքի ֆոնից, ավելի մոտ են թվում, իսկ տեղանքի ֆոնի հետ ձուլվող առարկաները՝ ավելի հեռու.

3. վոր սարից դեպի ցած դիտողությունը, կարծես թե, հեռացնում է առարկաները, իսկ ներքևից դեպի վեր՝ նրանց մոտեցնում է.

4. վոր տեղանքի զանազան խորությունները (հեղեղաաններ, ձորակներ, գետեր և այլն), վորոնք հանդիպում են դիտելու առարկայի ճանապարհի վրա և դիտողի համար անտեսանելի յեն (կամ յերևում են վրջ ամբողջովին) նույնպես պակասեցնում են հեռավորությունները և այլն:

զ) սովորողներին բավական ժամանակ տրամադրելով, վոր նրանք վերոհիշյալ հատկանիշները լավ դիտեն և նրանց հիշեն, ղեկավարը նրանց ուշադրությունը դարձնում է մնացած ուղղությունների վրա և առաջարկում է նրանց վորոշել մինչև նոր խմբակներն ու տեղական առարկաները յեղած հեռավորությունները, համեմատելով դրանից առաջ ուսումնասիրած հեռավորությունների հետ: Այդ կատարելուց հետո, ղեկավարը հարցնում է յուրաքանչյուրի վորոշումը, իսկ հետո հայտնում է իսկական հեռավորությունները, վորպեսզի հրնարավորություն տա սովորողներին, վոր նրանք համոզվեն իրենց վորոշումների ճշտության կամ սխալների մեջ. դրա հետ միասին ոգնում է սովորողներին պարզելու ստացած սխալների հավանական պատճառները:

Այս կարգով շարունակվում են պարապմունքները մինչև յուր ուղղություններն ոգտագործելը:

119. Ընդհանրապես պետք է ձգտել սովորողների մեջ աշխարհի ունակությունը զարգացնել, փորձեր և իրենց անմիջական տեսողության տպավորութեամբ հենց միանգամից գնահատեն հեռավորությունը, գլխավորապես առարկաների թվացող մեծության ու պարզության հիման վրա: Յեթև նորատակները պարզ դժագրությունը չունեն կամ լավ չեն յերևում, մանավանդ, մեծ հեռավորությունների վրա, այն ժամանակ հեռավորության գնահատումը դժվարանում է: Ուստի պետք է դիմել ոգնական միջոցների, ինչպես որինակ՝

ա) փորձվելիք հեռավորության համեմատութեանը՝ ուրիշ միևէ այդ չափած՝ կամ ափսիհ հեշտ փորձելի հեռավորության հետ:

բ) առարկաների ամենամեծ և ամենափոքր հեռավորության հախանական սահմանների գնահատումը՝ միջին թիվը վերցնելու համար:

գ) փորձվելիք տարածության մասերի բաժանումը, յուրաքանչյուր մասի առանձին գնահատումը և հետո բոլորի միասին գումարումը և այլն:

120. Բացի այդ, նախադարձատական վարժությունների ժամանակ, պետք է ցույց տալ ուրացաարել, թե ինչպես կարելի չէ սղալել հրացանով, ձևերի մասներով և այլ առարկաներով, իբրև հեռաչափով: այդ պետք է կատարել հաօիկի ու դիտողի, մասների և այլ առարկաների չափերը համեմատելով կենդանի կերպարանների և ծանոթ տեղական առարկաների տեսանելի չափերի հետ:

121. Փոքր հեռավորությունները հիշելու մըջտական վարժության համար ուղտակար և ճամբարում, վրանների սեղափորման մօտ, փոքրիկ սյուներ անկել և նրանց վրա դրել մինչև զանազան տեղական առարկաներն ու կետերը յեղած հեռավորությունները, նույնպես և զանազան տեղերում

թիրախներ դնել մարտական նպատակների մոտավոր նմանութեամբ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

122. Գործնական վարժությունները կազմակերպվում են մոտավորապես հետևյալ կերպով:

ա) ընտրած դիտակետից ուղարկվում են դանազան ուղղութեամբ հրացանաձիգները 3-4 խումբակ: Այդ խմբակները, ղեկավարի ցուցումների համաձայն, դասավորվում են աշխարհի տեղերում, փորտեղից հարմար և դիտակետի վրա հրաձգություն վարել և հակառակորդի զերը կատարել: Ուղարկված յուրաքանչյուր խմբակի ալադի հետ հեռախոսային կամ տեսողական (դրոշակներով) կապ և հաստատվում: յեթև այդ անհարին և, ալադին ցուցումներ են տալիս այն ժամանակամիջոցի մասին, փորի ընթացքում պետք է նպատակները ցույց տալ և, մանավանդ, ինչ դրութեամբ՝ կանգնած, ծնկի վրա կամ պռակած, տեղում կամ շարժվելիս: Խմբակների հեռավորությունները պետք է ձիշտ չափել հեռաչափով, քարտեզով կամ դաշտային կարկինով:

բ) խմբակների դասավորությունն ստուգելուց և հեռավորությունները զրի առնելուց հետո, ղեկավարը կանչում է սովորողներին դիտակետի մօտ: Սովորողները չափաք և տեսնեն բոլոր պատրաստություններն ու դասավորված խմբակները, մինչև նրանց յերևալը վարժության ժամանակ, ևս առավել չափաք և նախապես իմանան նրանց հեռավորությունները:

գ) սովորողների հալաքվելուց հետո, ղեկավարը նշան և տալիս հերթական նպատակը ցույց տալու համար: Սովորողները, յուրաքանչյուրն ինքնուրույն կերպով, առանց ընկերի հետ խոր-

հըրդակցելու, փորձում և գրի յեն առնում կամ հիշողության մեջ պահում այդ նպատակի հետափորությունը.

դ) գեկափարի փորձած ժամանակն անցնելուց հետո, նպատակը թափափում և: Վեկափարը հերթով հարցնում է սովորողներին ու նրանց փորձումները գրի յե առնում. իսկ հետո նրանց հայտնում և խիստական հեռափորությունը, պարզելով յուրաքանչյուրի արած սխալը և այդ սխալների համարական պատճառները:

123. Այդ նույն պարապմունքների ժամանակ պետք է վարժեցնել, թե ինչպես փորձել դանդաղան տեղական առարկաների հեռափորությունները, փորձնց միջոցով մարտական պարագայում կարելի չէ հեշտ փորձել կենդանի նպատակների հեռափորությունները: Նույնպես պետք է վարժեցնել, թե ինչպես փորձել հեռացող, մոտեցող և ճակատի յերկայնությամբ կամ շեղակի ուղղությամբ շարժվող նպատակների հեռափորությունները:

124. Մինչև 1000 քայլ հեռափորությունների փորձումը ճիշտ է համարվում այն դեպքում, յերբ արած սխալը 50 քայլից ավելի չէ, 1000-ից դեպի ավելին կամ պակասը, այսինքն՝ 950 փոշ պակաս և 1050 փոշ ավելի. իսկ 1000 քայլից ավելի հեռափորությունների համար՝ յեթե սխալը 100 քայլից ավելի չէ:

125. Վարժությունների ժամանակ պետք է հեշտերից առտիճանաբար անցնել դժվարներին. փոքր հեռափորություններից, պարզ առարկաների նպատակներից և փորձման համար նշանակած մեծ ժամանակամիջոցից գեկափարը պետք է անցնի ավելի դժվար պայմաններին, սովորողներին վարժեցնելով աչքի սրության ու ճշտության, ուշադրության և արագ ըմբռնելու մեջ:

126. Վերահիշյալ նախապատրաստական և

գործնական պարապմունքներից անկախ, հրամատարական կազմը պետք է ոգտվի ամեն տեսակի դաշտային պարապմունքներից՝ կարմիր բանակայիններին գործնականապես ընտելացնելու հետափորությունները փորձելու գործում բազմազան պայմաններում: Դրա համար նախ պետք է բոլոր տակտիկական և հրաձգային պարապմունքների ժամանակ մշտապես պահանջել մարտիկներից նըշանոցը հաստել և, ըստ հնարավորին, հաճախ ըստուգել նշանոցի համապատասխանումը նպատակի խիստական հեռափորությանը. ապա պետք է ոգտվել շարժումների ժամանակ կանգառումներից և պարապմունքի ժամանակ ընդհատումներից՝ կարճատև վարժություններ կատարելու համար, ինչպես նույն և տված հոդ. 51. դրա համար չափած հեռափորությունների մասին պետք է պատասխաններ պահանջել առավելապես նշանոցի հաստման միջոցով:

127. Վաշտերի, դասակների և ջոկերի հրամատարները պարապմունք են հետեւելու այդ գործում կարմիր բանակայինների հաջողություններին ու հառաջագիմություններին. թույլերին պետք է տառնաճանցնել և նրանց հետ նախապատրաստական և գործնական ընդլծկ կրող լրացուցիչ պարապմունքներ տանել:

128. Յուրաքանչյուր դասակում ավելի սուր առաջողություն և հեռափորությունները գնահատելու ընդունակություն ունեցողներից պետք է մի քանի մարդ ընտրել և նրանց հատուկ պատրաստություն տալ, իբրեւ ղեկողի թեկնածուների: Այդ մարդկանցից պետք է առանձին խմբակ կազմել հրամատ գեկափարի գլխափորությամբ, նրանց առաջիկա գործողության համար հատուկ պատրաստություն տալու համար: Նրանց պետք է լավ սովորեցնել, թե ինչպես պետք է հեռափորություն

ներն աչքաշափով վորոշել մինչև հրացանային կր-
րակի վերջնական հասողութունը և ինչպես ոգ-
արվել յերկրիտակով, կողմնացույցով և զորանո-
ցում ունեցած հեռաշափով ու քարտեզով, նույն-
պես և ծանոթացնել զխառնեանքում կատարվող
ծառայության կանոններին հետ:

ՁԻԿ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՑԵԽՆԻԿԱՅԻ ՌԻՍՈՒՅՈՒՄԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ.

129. Հրացանով ձիգ կատարելը, տեխնիքական
մտքով, իր մեջ պարունակում է մի շարք հաջոր-
դական գործողություններ, այն է.

ա) կրակի պատրաստվելը, հրացանը լցնելը և
նշանոցը հաստելը (ձիգի պատրաստվելը).

բ) հրացանի կոթն ուսին դնել տալը, նշանո-
ւթթյունը և հրացանն իջեցնելը (ձիգ կատարելը) և

գ) նոր ձիգի համար հրացանը նորից լցնելը,
կամ նրան պարպելը, կամ հրահանը պահպանել
փոքրին պնելը:

Վերոհիշյալ հաջորդականությամբ էլ բացա-
րվում է ուսուցման կարգը ներքևում:

130. Վերևում թված գործողություններից
յուրաքանչյուրը պետք է ստանձնին սովորեցնել,
բայց այդ գործողությունների ուսուցումը պետք է
սանել զուգահեռաբար և միևնույն ժամանակա-
միջոցում, փորով և կարելի չէ համեմատել պարտո-
մունքների բազմապիսությանը: Վորոշ հաջողու-
թյուն ունենալուց հետո, անհրաժեշտ է անցնել
գործողությունների հաջորդական կատարմանը
(բոլոր ստանձնին վարժությունները իրար հետ մի-
ասին), սկզբում միայն վորոշ, իրար հետ անմի-
ջական կապ ունեցող գործողությունների, իսկ հե-
տո նաև բոլոր գործողությունների, ախիքն ձիգ
կատարելուն ամբողջապես:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր յուրաց-
ման համար ամենազգվարը նշանադրությունն ու
հրահանն իջեցնելն է, ախիքն այն գործողու-
թյունները, վորոնք ամենից շատ կարեոր նշանա-
կություն ունեն դրանց ուսումնասիրությանը հենց
սկզբնական շրջանում պետք է ամենից շատ ուշա-
դրություն դարձնել:

Ծանոթություն.— Չախիքներին ու ձախ աչ-
քով ափելի լավ տեսնողներին թույլատրվում է
սովորեցնել ձախ ձեռքով ձիգ կատարելուն:

131. Ընդհանուր մեթոդը, վորը պիտի կիրառի
սովորեցնողը գործողություններից յուրաքան-
չյուրի բաժնակի ուսուցման ժամանակ, հետև-
յալն է.

ա) բացատրել սովորողներին ամբողջ խմբակին
ստաջիկա դասի նպատակը, իսկ հետո անձամբ
իր վրա ցույց տալ ուսումնասիրելիք գործողու-
թյունն ամբողջովին շփեցրած, վորպեսզի սովո-
րողները հասկանան, թե նրանք ինչի պիտի ձգտեն,
և վերջի վերջո նրանցից ինչ է պահանջվում:

բ) Կրկնել նույն գործողությունները զանգույ,
նրանց վորոշակի մասնատելով մի շարք հաջորդա-
կան կամ զուգահեռական պարզ գործողություն-
ների կամ շարժումների, և բացատրել սովորող-
ներին, թե ինչու նրանցից յուրաքանչյուրը պետք է
կատարել այդպես և վրչ այլ կերպ:

գ) Հետո իր մոտ կանչել ափելի քնդունակ ու-
վորողներից մեկին ու սախակ նրան ցույց տվածը
կատարել սկզբում մաս-մաս, իսկ հետո, նայած
հառաջադիմությանը, ամբողջը միասին. այդ ժա-
մանակ սովորողներից պետք է պահանջել ամենից
առաջ կատարման կանոնավորություն ու ճշտու-
թյուն, իսկ հետո ճիշտություն և վերջապես ա-
րողություն: Հիշյալ հաջորդականությունն ան-

հրաժեշտ է, վորպեսզի սովորողը վնասակար ունակութիւններ չյուրացնի, վորոնք չատ զօվար են վերացվում հետագայում:

դ) առաջին սովորողի հետ ցանկալի հաջողութեանը հասնելուց հետո, հետեւյալին կանչել ու աղբյւր շարունակել, մինչեւ վոր ամբողջ խմբակը սովորեցնողի ձեռքով անցնի:

132. Մնացած սովորողներն ալ ժամանակ հետեւում են սովորեցնողի գործողութիւններին ու բացատրութիւններին և վարժվում են ցույց տված ձևերը կատարելու մէջ միմիանց ստուգելով:

133. Սխալները պետք է ուղղել վոչ թե ձեռքերով, ալ բանավոր բացատրութիւններով կամ, ամէլ լավ է, իր վրա անմիջապէս ցույց տալով, վորպեսզի սովորողը տեսնի ալ ձեռքն ինչպէս հայելու մէջ և կարողանա իր սխալները ինքնուրույն կերպով և զիտակցորեն վերացնել:

Ծանոթութիւն. — Զեվերը ցույց տալու համար սովորեցնողը պետք է ցույց տա իր անձնակա՛ն հրացանով և վոչ թե սովորողների ձեռքից հրացան վերցնի:

134. Ուսուցումը պետք է տանել՝ սկզբում թեթեւցրած, իսկ հետո, վորտէ՛ պատրաստութիւն ձեռք բերելուց հետո, լրիվ յերթական հանդերձանքով: Առանձին գործողութիւնները յաւաքելուց հետո, պետք է պահանջել հրացանի իսկական լրցնելը (վարժական փամփուշտներով), նշանակված նշանոցի իսկական հաստելը և ցույց տված նրապատակին ճիշտ նշան բռնելը: Յեթե նպատակը ցույց չի տված, սովորողը պարտավոր է ինքն իրեն համար նպատակ բռնել, բայց յերբէք չպետք է նշան բռնել դատարկ տարածութեան վրա:

135. Զիշ կատարելու համար բոլոր գործողութիւնների արագ ու ճկուն կատարումը պետք է մշտական վարժութիւնների և մարզանքների մի-

ջոյով սովորութիւն դառնա և համարյա անդիտակցարար ու մեքենայորեն իրագործվի: Այդ պայմանի շնորհիվ մարտում հրացանագիր ջղային դրութիւնն ամէլիք քիչ կազդի հրաձգութեան դիպուկութեան վրա, իսկ զենքով մեքենայորեն գործողութիւնն ամէլիք քիչ կխանդարի նպատակի և իր հրաձգութեան հետեանքների դիտողութիւնը:

136. Ուսուցման ձեռքը ցույց են տրված ներքեվում: Սակայն չի արգելվում ոգտվել նաեւ կանոնադրով չնախատեսված ալ յեղանակներով, այն թե, գործատի հրամատարի յեզրակացութեամբ, ալ յեղանակները չեն խախտում կանոնադրի հիմնական պահանջները և խոստանում են սովորողների ու սովորեցնողների ժամանակի և ուժերի տնտեսում:

ԶԻՊԻ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ԶԵՎԵՐԻ ՌԻՍՈՒՑՈՒՄԸ

ԿՐԱԿԻ ՊԱՏՐԱՍՏ ԶԵՎԸ.

(Հրաձգային կալնուսագրքի II մասի 105-110 հոդ.)

137. Ուսուցումն սկսելիս, պետք է բացատրել, վոր կրակի պատրաստվելու ժամանակ ամենագլխաւորն է՝ մարմնին կայունութիւն, իսկ զենքին ալիսի դրութիւն տալ, վոր հարմար լինի նրան լցնելու, նշանոցը հաստելու, նշան բռնելու և ձիգ կատարելու համար: Հետագայում յուրաքանչյուր հիմնական դրութիւնը ցույց տալիս, անհրաժեշտ է մատնանշել, վորոնք են նրանց առավելութիւններն ու թերութիւնները, և հետեւապէս մարտի ժամանակ ինչպիսի զեպքերում պետք է կիրառել ալ դրութիւնները:

138. Հրացանագիրը հրացանը ձեռքին բոլոր դրութիւններում պետք է իրեն պահի ազատ, առանց ձգվածութեան. ամէլորդ լարվածութիւնը

վոչ թե ավելացնում ե, այլ, ընդհակառակը, պակսեցնում ե թե հրացանաձգի իրեն և թե հրացանի կայունությունը ձիգի ժամանակ, արագ հոգնելու պատճառ և դանում և խանդարում և ձկունություն ձեռք բերելը :

139. Մի վորեն դրությունից կրակի պատրաստ դրությունն անցնելու ձեռքի մեջ բոլորովին կարիք չկա միակերպություն պահանջել : Ընդհակառակը, յուրաքանչյուր սովորողին պետք է իրավունք տալ այդ նոր ձևին անցնելը կատարել աշխատել, ինչպես ավելի հարմար և արագ կլինի իրեն համար, միայն թե առանձնաբեր լինի հրացանաձգի իրեն և զենքի վերջնական դրություն կանոնավորությունը, նույնպես և հարեանների վերաբերյալ անմիտանդությունը :

Սովորեցնողը, սպասելով իր փորձառությունից, պարտավոր և ոչնչի յուրաքանչյուր սովորողին նրա Ֆիզիքական առանձնահատկություններին համապատասխան ունակություններ ձեռք բերելու :

140. Ուսուցումը պետք է սկսել կանգնած դրությունից, վորովհետև այդ ավելի պարզ և և դրա հետ միասին ավելի հարմար և սովորողին բացատրել կրակի պատրաստվելու հիմնական պահանջները : Այդ ժամանակ ձեռքերը մի քանի անգամ ցույց տալով և սովորողի սխալները համառորեն ուղղելով, պետք է պահանջել՝ նախ մաքմանի և ուսերի հարմար դարձումը (նշանի վերաբերյալ կիսադարձ զենքի աջ), ապա վորտ չենպի մի կողմը դուրս հանելը մարմնի ձեռնառու կայունություն հասնելը (մասափորապես կեսից մինչև յերեք քառորդ բալլ, նայած հասակին) և յերրորդ՝ հրացանը ճարպկորեն բռնել ձախ ձեռքով փողակալի տակից ապուստի փորքների մոտ (հրացանի ծանրություն

կենտրոնը) և միաժամանակ կոթը պահել աջ արմունկով կողի մոտ :

Միաժամանակ պետք է ցույց տալ, թե ինչպես հրացանը վորտի մոտ դնել հրաձգությունը վերջացնելուց հետո, հրացանի վերաբերյալ զգուշություն պահպանելով :

141. Ծնկից կամ նստած կրակի պատրաստվելը սովորեցնում են 140 հոդ. բացատրությունն նմանությունով : Այդ ժամանակ պետք է պահանջել, վոր սովորողը վարժվի հենել ձախ ձեռքի արմունկը (նստած կրակի պատրաստվելու համար յերկու արմունկներն ել) վոչ թե ծնկոսկրին, այլ ծնկի փափուկ մասին, կամ արմունկը մի քիչ առաջ լինեցնել, վորովհետև այլապես հրացանն արձակելու ժամանակ բավականին կայուն չի լինի : Նույնպես պետք է պահանջել, վոր, հրաձգությունը դադարեցնելուց հետո, սովորողն առանց հիշեցնելու պառկել, հակառակորդի աչքից ու կրակից թափանցի (սակայն չարունակի նրան դիտել), իսկ յեթե վաղեմազգ և նախատեսվում, տեղից արագ վերկենա, մի քիչ հրացանի վրա հենվելով :

142. Հրացանը վաղանցիկ խուսափելու համար, պարտաձգություն վարժությունն անցնելն ավելի լավ է սկզբում սովորեցնել առանց զենքի. սովորողը պետք է նախապես ունակություն ձեռք բերի, ձախ ծնկով, ձախ ձեռքով և ձախ արմունկով հաջորդաբար գետնին հենվելով, արագ պառկել կողքի վրա, նպատակի վերաբերյալ կիսադարձ զենքի աջ : Այդ դործողությունն մեջ վորտ ձկունություն ձեռք բերելուց հետո, անցնել նույն դործության կատարմանը հրացանով. սակայն սովորողին միշտ պետք է հիշեցնել՝ զգուշ լինել, վորպեսզի հրացանը պահպանել ուժեղ հորվածներից ու կեղտոտվելուց :

Միաժամանակ սովորողին պետք է վարժեցնել

պառկած տեղից արագ ծնկի դալ՝ ձիգ կատարելու համար և վտոքի կանգնել՝ անակնկալ վազելապղծի համար :

143. Ուսուցման ժամանակ կրակի պատրաստ-վելու վորոշ դրություններն ընդունում են կակո-նած (ծնկից, նստած, պառկած) կրակի պատրաստ պատվերի կամ հրամանի միջոցով :

144. Կրակի պատրաստվելու, նույնպես և հրա-ցանն ուսին դեմ տալու և նշանառության կանոն-ները (տես ներքևում) յուրացնելուց հետո, ան-հրաժեշտ ե սովորողներին վարժեցնել, վորպեսզի նրանք այդ դրությունները գործադրեն զանազան տեղական հենարաններին ու ծածկարաններին հարմարվելով : Այդ պարապմունքի համար հան-ձնարարվում է գործառն տեղավորման շրջանում հատուկ հրաձգային ամրոց ունենալ, վորի մեջ պետք է արհեստական կերպով պատրաստված լի-նեն ամեն տեսակի մանր անհարթություններ և ա-ռարկաներ՝ իսկական մարտադաշտում հանդիպե-լիք առարկաների նմանությամբ, այսինքն՝ թմբեր, փոսեր, արկերից առաջացած ձաղարներ, առու-ներ, հողաթմբեր, հրակնատներով և առանց հրա-կնատների խրամատներ, ցանկաբառեր, կոճեր, ծառերի բներ և այլն :

145. Պարապմունքները պետք է տանել մոտա-վորապես հետևյալ կարգով .

ա) սովորողներին հրաձգային ամրոց բերելով (կամ ավելի լավ է տեղանքի հարմար տեղամասի վրա), նրանց բացատրել պարապմունքի նպատակը և հիշեցնել, վոր պետք է ուղտվել յուրաքանչյուր տեղական պայմանից, ամենից առաջ հրաձգու-թյան դիպուկությունն ու հարմարությունն ավե-լացնելու համար, իսկ հետո ել հակառակորդի աչ-քից ու կրակից իրեն ծածկելու համար : Ուստի հենարանն ու ծածկարանը պետք է ծածկեն հրա-

ցանաձգին այնչափ, վորչափ նրան այդ չի խանգա-րում նպատակը պարզ տեսնելուն և նրան նշան բռնելուն :

բ) սովորողներին ցույց տալ այն նպատակնե-րը, վորոնց պետք է գնդակոծել, կամ գոնե այն ուղղությունը, վորի վրա գտնվում է հակառա-կորդը, և հրամայել նրանց հրաձգության համար պատրաստվել, այս կամ այն հենարանին կամ ծած-կարանին հարմարվելով :

գ) առաջարկել սովորողներից յուրաքան-չյուրին առանձին գնահատել առաջադրության կատարումը, ցույց տալ նկատված սխալները և կատարման ավելի ձիւտ յեղանակը .

դ) վերջում անձամբ ցույց տալ, թե ինչպե-ս պետք է կատարել առաջադրությունը, և բոլորին հարկադրել ցույց տվածը նորից կատարել :

Դասը շարունակելով, ուղտադործել բոլոր նը-շած հենարանների ու ծածկարանների տեսակնե-րը, փոխելով, յեթե կարիք լինի, հրաձգության ուղղությունը :

146. Եթե պայմաններն ստիպում են այդ բաժ-նի վերաբերյալ պարապմունքները տանել շենքի մեջ, դրա համար զանազան տեսակի հենարան-ներ ու ծածկարաններ կարելի յե հեշտ պատրաս-տել գորանոցում ձեռքի տակ յեղած առարկա-ներից :

147. Հրաձգության համար վայրին հարմարվե-լու ուսուցումը չպետք է սահմանափակել նախնա-կան դասերով : Հետադաշտում անհրաժեշտ է սովո-րողներին համառորեն մարզել այդ գործում, ուղ-տվելով յուրաքանչյուր հարմար դեպքից, դաշտա-յին պարապմունքներ, ինքնախրամատման վար-ժություններ, մարտական հրաձգություններ կա-տարելիս և այլն :

(Հրաձգային կանոնագրքի II մասի 111 հոդ .)

148. Այս գործողութիւնը սովորողներին պետք է սովորեցնել սկզբում նստած կամ կանգնած դրութեամբ վերեւ հենարանի վրա դրած հրապարակով : Այդպիսի պայմաններում հոգնածութիւնը չի վանում սովորողի ուշադրութիւնն այդ գործողութիւնների բոլոր մանրամասնութիւնները յուրացնելուց :

149. Այդ ձևը պետք է սովորեցնել բաժնակի . սկզբում սովորեցնել փակադակը բանալը մինչև նրա դեմ աննկը , հետո փամփուշտի պայուսակից կամ փամփշտակալից փամփուշտներով լի պահուսակն արագ հանելը և նրան փողատուփի փորատների մէջ արագ մտցնելը , հետո փամփուշտներն առանց հապաղումների պահեստափնի մէջ արագ ուղարկելը և , վերջապէս , պահուսակը դուրս չբարձրելը և փակադակը փակելը , բռնակը պեպի աջ դարձնելով :

Այդ ժամանակ պետք է հատուկ ուշադրութիւն դարձնել սովորողների մէջ հաստատ սովորութիւն և ունակութիւն մշակելու վրա , վոր նրանք պահուսակը փորատների մէջ ուղիղ ու աւելորդ դնեն և , բութ մատով ճիշտ ուղղաձիգ դրութեամբ սեղմելով , փամփուշտները պահեստառանի մէջ մտցնեն . այդ պետք է կատարել վերեւի փամփուշտն սեղմելով անմիջապէս պահուսակի մոտ , մինչև վոր նա ընկնի գառիչ անդրադարձիկի թաթի տակը : Հենց այս գործողութիւնների վրա հմուտ կատարելը սովորաբար խափանումներ է առաջացնում լցնելու ժամանակ :

Առանձին գործողութիւնների հմուտ կատարմանը հասնելուց հետո , նրանց իրար հետ կապել , հաջորդաբար և առանց կանգառումների կա-

տարելով , սկզբում դանդաղ ու ճիշտ , իսկ հետո արագ , համարյա ավտոմատորեն :

Միաժամանակ պետք է սովորեցնել մեկ փամփուշտով լցնելը և կիսատ պահեստառանը մինչև վերջը լցնելը :

150. Լցնելը վերջացնելուց հետո , սովորողը պետք է աջ ձեռքի թաթը ճիշտ դնի կոթի ձախ : Պետք է ճիշտ ամուր բռնել՝ ձեռքի ամբ ձախ աջ կողմից : Յեթե հրացանն այլ կերպ բռնած լինի , նշանառութեան ժամանակ հրացանը կարելի չէ հեշտ թեքել դեպի ձախ , յեթե ձեռքի թաթը ձախ տակն է գցած , կամ դեպի աջ , յեթե թաթը շատ է վերեւից բռնած :

Ցուցամատը պետք է անցկացնել կամրջակի միջով , վորքան հնարավոր է , ավելի խոր , բայց դեռևս ուղիղ պահել առանց ձգանիս ցուցամատով զիպչելու :

151. Կրակի պատրաստվելու ձևերը յուրացնելուց հետո , պետք է նրանց ավելացնել և լցնելը , ձգտելով , վոր այդ յերկու գործողութիւնները միանան և մի ամբողջութիւն կազմեն . հրացանը դեպի առաջ շարժելու բոպէյին , աջ ձեռքը պետք է փակադակի բռնակը մեքենայորեն բռնի : Հետագայում կրակի պատրաստվելու գործողութիւնը պետք է կապել և նշանոցի հաստումը :

152. Անհրաժեշտ է լցնելու հետ միաժամանակ սովորեցնել հրացանը սարպելը , հրահանը մարտական վոտքից պահպանել վոտքին ու պահպանել վոտքից մարտական վոտքին դնելը :

ՆՇԱՆՈՑԻ ՀԱՍՏՈՒՄԸ .

(Հրաձգային կանոնագրքի II մասի 112—116 հոդ .)

153. Նշանոցի հաստման ուսուցումը պետք է անցնել , նշանոցի դերն ու կազմութիւնը բացատրելուց հետո , մատնանշելով նրա կարևորու-

թիւները դիպուկ հրաձգութեան համար: Անգրագետները մինչ այդ պետք է սովորած լինեն թվերը կարդալ, գոնե անհրաժեշտ սահմաններում:

Ծանոթութեամբ.—Թվերը կարդալու համար ոգտակար է ձեռքի տակ ունենալ նշանոցի մոդելները մեծացրած չափերով, խոշոր բաժանումներով ու մակագրերով, փորոնց կարդալը հեշտ լինի:

154. Սկզբում նշանոցի հաստումը հարմար է ցույց տալ նստած կամ կանգնած դրութեամբ, և հրացանը հենարանի վրա դրած:

155. Ուսուցումը պետք է սկսել նշանոցի անրիկի մղակներին կանոնավոր կերպով սեղմելուց և անրիկը շրջանակի վրայով առաջ ու յետ շարժելուց: Հետո սովորողներին պետք է լավ վարժեցնել անրիկը նշանոցի կոճղակի աստիճանների վրա ձիւտ հաստելու մեջ, աշխնքն մինչև 1-200 քալ հեռավորութեան վրա: Վերջապես պետք է անցնել նշանոցի հաստմանը կանգնեցրած շրջանակով, ցույց տալով, թե ինչպիսի դրութիւն պետք է տալ հրացանին և նշանոցի շրջանակին:

156. Այդ դորձողութիւնները յուրացնելուց հետո, դրանց կատարելու ժամանակը պետք է աստիճանաբար կրճատել, ձգտելով նշանոցի հաստումը հասցնել հնարավոր արագութեանը: Դրան պետք է ոժանդակել, փոքր մրցումներ կազմակերպելով:

Սովորողները պետք է վարժվեն նշանոցը շուտ փելով հաստել նշանոցի կոճղակի բոլոր աստիճանների վրա, առանց աչքերը նպատակից հեռացնելու, նույնիսկ քայլելիս և վազելիս:

157. Վերջում անհրաժեշտ է նշանոցի հաստումը կապել հրացանը կրակի պատրաստելու և լցնելու հետ. հերթական փամփուշտը փամփշտանոցի մեջ մտցնելով, սովորողը պարտավոր է նը-

շանոցը մեքենայորեն բռնել նրան հաստելու կամ ստուգելու համար, և միայն դրանից հետո ձեռքը փոխադրել կոթի ձախ վրա:

ՁԻԳ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՌԻՍՈՒՅՈՒՄԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՈՒՅՈՒՄՆԵՐ.

158. Հրացանն ուսին դեմ տալու, նշանառութեան և հրահանն իջեցնելու ուսուցումը պետք է անցնել, ոգտվելով սկզբում նշանառութեան հաստացով, կամ վորեւէ այլ հարմարանքով, փորը թույլ է տալիս հրացանը նշան դրած դրութեամբ ամրացնել, առանց հրացանը ձեռքում պահելու անհրաժեշտութեան: Միայն դիպուկ ձիւքի տարրական կանոնները և դրա հետ միասին ձիւք կատարելու պատրաստութեան ձևերը յուրացնելուց հետո, նպատակահարմար է անցնել նույն վարժութիւններին առանց հաստոցի, հենարանից, իսկ հետո ել ձեռքից:

159. Վարժութիւններն սկսելուց առաջ, անհրաժեշտ է ստուգել, արդյոք սովորողները կարողանում են ձախ աչքը խփել, աջ աչքն ազատ բաց պահելով: Ով չի կարողանում, կարելի չէ թույլ տալ կրակելը սովորել յերկու աչքն ել բաց:

ՌԻՍՈՒՅՈՒՄ ՆՇԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՍՏՈՑԻ ՎՐԱ

ՀՐԱՅԱՆՆ ՌԻՍԻՆ ԴԵՄ ՏԱԼԸ ՅԵՎ ՆՇԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ.

(Հրաձգային կանոնագրքի II մասի 119-122 հոդ.)

160. Հրացանը նշանառութեան հաստոցի մեջ ամրացնելուց, փակադակը հանելուց ու խալցը փողատփի մեջ դնելուց հետո (խտրոցը մի անոթ է, փոր թույլ է տալիս աչքը մեքենայորեն ուղղել աշխես, փոր նշանոցի դիտոցի մեջ կանոնավոր

հատիկ յերևա), սովորեցնողը հրացանն ուղղում է պատուհանին կամ մի այլ լույս տեղին ու բացատրում է, վոր հրացանը նպատակին ուղղելու համար ամենից առաջ պետք է նշան դնել. դրա համար պետք է գլուխը կռացնել և աջ թուշը կոթին կրպցնել, ձախ աչքը խփել (ուս հարկավոր է), աջ աչքով նայել նշանոցի դիտոցով հատիկի դադաթին, գլուխը (աչքը) այնպես պահել, վոր հատիկը յերևա նշանոցի դիտոցի մեջտեղում և իր գագաթով հավասարվի դիտոցի յեզրերին:

Դրանից հետո հրամայում է յուրաքանչյուր սովորողին հերթով կանգնել հաստոցի մոտ, իր հասակին համեմատ վտռերը չռել, նշան բռնել և նայել խտրոցի ծակով, թե ինչպես է յերեվում իրականում ճիշտ վերցրած հատիկը:

161. Վորպեսզի համոզվել, թե սովորողներն իսկապես պարզ հասկացել են ցույց տվածը, կարելի չէ սգտադրոճել նշանոցի դիտոցի և հատիկի ցուցական մոդելը. պետք է նրանց բացատրել, թե այդ անոթն իրենից ինչ է ներկայացնում և ինչպես ոգտագործել, և առաջարկել յուրաքանչյուրին մոդելի վրա հերթով ցույց տալ, թե ինքն ինչպես է տեսել հատիկը դիտոցում խտրոցի միջով:

Այդ նույն անոթի վրա (ինչպես և խտրոցի ուղնությամբ) հնարավոր է պարզել սովորողին նույնպես և հատիկի այն սխալ դրությունները, վորոնցից նա պարտավոր է խուսափել:

162. Ուսին դեմ տալը յուրացնելուց հետո, պետք է անցնել նշանառության ուսուցմանը: Առաջին դասը կարող է մոտավորապես հետևյալը լինել.

ա) նշանառության հաստոցի մեջ հրացանն ամրացնելով, նրանից 10—15 քայլի վրա թիրախի կամ պատի վրա ամրացնել նշանակետը, վորը 2—3

սմ տրամագիծ ունեցող սև խնձորի ձև ունի (սպիտակ ֆոնի վրա). հետո հրացանը պետք է ուղղել խտրոցի միջով այդ կետի տակին և առաջարկել սովորողներին անձամբ հերթով նայել նշանառությանը.

բ) բացատրել, վոր ցույց տված գործողությունը կոչվում է նշանառություն, իսկ նշանոցի դիտոցով հատիկի գազաթին և նշանառության կետին հրացանաձգի նայելու գիծը կոչվում է նշանառության գիծ.

գ) կրկնել, ցույց տալով նույնը, բայց առանց խտրոցի:

Ծանոթություն.—Սովորեցնողը պետք է համոզվի, վոր սովորողները հասկացել են ցույց տվածը: Դրա համար կարելի չէ, հրացանը տարբեր կետերին նշան բռնելով, հարկադրել սովորողներին, վոր նրանք նայեն նշանոցի դիտոցով և հետո թիրախի վրա ցույց տան, թե հրացանն իսկապես ուր է ուղղված:

163. Հետագայում սովորողներին հաստոցի մեխանիզմներով աչխատելը սովորեցնելուց հետո, պետք է անցնել նրանց անհատական նշանառության մարզանքին՝ սկզբում փոքրիկ բոլորակներով և յեռանկյունիներով (գազաթով դեպի ներքև) 10—20 քայլ հեռավորություններից, իսկ հետո աստիճանաբար կետերը փոխարինելով մարտական նշանների կերպարաններով և հեռավորությունն աստիճանաբար ավելացնելով մինչև նորմալ չափերը:

Միաժամանակ պետք է սովորողներին վարժեցնել նշանակետի բնարության խնդիրների լուծմանը, նայած զանազան հրաձգային պայմաններին:

164. Հերթական սովորողի նշանառությունն ստուգելիս, ոգտակար է նրա բնկերների մաս-

նակցութիւնը. այդպիսի յեղանակն աշխուժացնում է պարապմունքը և միաժամանակ—գործնութիւնն և տալիս սովորողների ամբողջ խմբակին: Համենայն դեպս յուրաքանչյուր սխալը պետք է պարզել և ուղղել: Անհրաժեշտ է նույնպէս ցույց տալ այդ սխալի համանական հետեանքները (հոգ. 133): Սովորեցնողը պարտավոր է սովորողներին մշտապես ներշնչել այն միտքը, վոր հրացանով կարելի չէ դիպուկ խփել միմիայն անսխալ նշանաւորութեան ժամանակ:

165. Վորպեսզի հաւաստիանալ ու սովորողներին իրենց համոզել, վոր նրանք կարող են միակերպ նշան բռնել նշանակած կետին հաստոցի միջոցով, ոգտակար ե ժամանակ առ ժամանակ դիմել հետեյալ յեղանակին.

ա) թիրախի կամ պատի վրա մի թերթ մաքուր թուղթ կպցնել, նրա դիմաց 10-15 քայլի վրա հաստել նշանաւորութեան հաստոցի մեջ ամբարացրած հրացանը և նրան ուղղել թղթի մի վորեւէ կետին.

բ) թիրախի մօտ կանգնեցնել սովորողները մեկին ձեռքի մի ցուցիչով (մի բոլորակ և 10 սմ. տրամագծով, 2-3 սմ. խնձորով, մեջտեղում գընդասկի գլխի չափի ծակով և բռնելու համար կոթով) և նրան հրամայել ցուցիչը դնել հիշյալ թղթի վրա.

գ) հերթական սովորողին առաջարկել նշան բռնել և, առանց հրացանի դրուքայունը խախտելու, ցուցիչի բոլորակը նստեցնել հատիկի վրա, վորի համար ցույց տվողին պետք է հրաման տալ «դեպի վեր, վար, աջ» և այլն, մինչև վոր ցուցիչը կանգնի նշանաւորութեան գծի վրա. դրանից հետո հրաման է տալիս՝ «նշանակիր». այդ հրամանով նա պետք է սուր մատիտով ցուցիչի ծակի միջով թղթի վրա մի կետ դնի: Հիշ-

յալ գործողութիւնները կրկնվում են յերեք անգամ հրացանի միենույն դրութեամբ.

դ) դրա հետեանքով թղթի վրա յերեք կետ և ստացվում: Յեթե այդ կետերը ցրված են բարձրութեամբ, այդ ցույց է տալիս, վոր սովորողը չի կարողանում միակերպ հաւասար վերցնել, իսկ յեթե կետերը ցրված են լայնութեամբ, այդ նշանակում է, վոր նշան բռնողը չի հաստել հատիկը միակերպ նշանոցի դիտոցի մեջտեղում.

ե) վորպեսզի ստուգել, թե սովորողը նշանաւորութեան ժամանակ միենույն սխալը մշտապես չի կատարում, սովորեցնողը համեմատելու համար կարող է նրա կետերին ավելացնել և իր սեփական վերաւագման կետը, վոր ստացվում է նույն յեղանակով. բայց պետք է նկատի ունենալ, վոր ամբարացրած հրացանով չարժական ցուցիչին նշան բռնելիս, սխալները թղթի վրա յերեւում են հակառակ կողմի վրա՝ խոչոր հատիկը ցածրացնում է նիւը (կետը), փոքր՝ բարձրացնում է, հատիկը դիտոցի ձախ կողմին մօտիկ բռնելիս, նիւը դեպի ձախ է տեղափոխվում և այլն:

166. Միակերպ նշանաւորութեան ստուգման վերահիշյալ յեղանակը կարելի չէ կատարել առանձին.

ա) հայելու կիրառմամբ: Սեղանի վրա պետք է մի թերթ թուղթ ամրացնել հորիզոնական դրութեամբ, թղթի վրա դնել ցուցիչը (ավելի լավ է ծանր և առանց կոթի), իսկ ցուցիչի յետևում է մի քիչ բարձր մի հայելի ամրացնել 45 աստիճան թեք՝ դեպի նշան բռնողի կողմը: Այդ դեպքում նշանաւորութիւնը կատարվում է վոչ թե անմիջապէս ցուցիչին, այլ հայելու մեջ ցուցիչի անդրադարձմանը: Այդպիսով վերանում է ցուցիչը ձեռքով բռնելու հոգնեցուցիչ անհրաժեշտու-

թյունը և ավելի յի ճշտում նշանադրության կետը նշանակելը .

բ) յերկու քղի վրա կախած ցուցիչի կիրառմամբ՝ քղերը պետք է անցկացնել թղթի վերևում ամրացրած ճախարակի վրայով կամ ճարմանդի միջով, իսկ քղերի ծայրերն անմիջապես սովորողի ձեռքերում պիտի լինեն : Այդ յեղանակը սովորողին թույլ է տալիս ցուցիչն առանց ողնականի տեղափոխել, իսկ կետը նշանակելու ճշտությունն այդ դեպքում կախված է հարմարանքի կառուցվածքից :

Գոյություն ունեն նույնպես մեխանիկական, նույնիսկ ելեքտրական ցուցիչների շատ սխառմաներ, վորոնք մեծ հարմարություններ են տալիս և ավելի յեն նրբացնում ստուգումը, բայց նրանց առավելությունները չեն արդարացնում նրանց մեծ արժողությունը և բարդ կազմությունը : Բայի դրանից շուտ էլ փչանում են :

167. Միակերպ նշանադրության մեջ սովորողների նվաճումների հաշվառման համար, ոգտակար է յուրաքանչյուրի համար հատուկ թերթ (կամ ընդհանուր թերթի վրա վանդակ) ունենալ, վորի վրա էլ նշանակել հաջորդական վարժությունների հետևանքները և այդ վարժությունների կատարման ժամանակը : Սովորողների կողմից ստացած յուրաքանչյուր յերեք կետը այդ դեպքում ոգտակար է թղթի վրա ուղիղ դժերով փացնել (յեռանկյունիներ) :

168. Իրական հեռավորությունների վրա դոնվող նպատակներին հաստոցից միակերպ նշանադրության ստուգումը կարելի յե նույն յեղանակով կատարել : Բայց դրա համար անհրաժեշտ է հատուկ անոթներ ունենալ, վորոնք ավտոմատորեն նշանակում են նշան դրած հրացանի դրու-

թյունը՝ հրահանի իջեցման յուպեյին (Տիմենի, Մենիկովի, Լիցնարի և այլն) :

169. Հաստոցից նշան բռնելու վարժությունները, մանավանդ իրական հեռավորությունների վրա, շատ ոգտակար են սովորողների աչքի մարդանքի համար : Այդ վարժությունները, ուսուցման հաջորդ ծրագրից անկախ, պետք է շարունակել ամբողջ ծառայության ընթացքում :

Պարապմունքներն աշխուժացնելու համար պետք է վարժությունները կապել զանազան հրաձգային խնդիրների յուծման հետ, ինչպես որինակ՝ հեռավորությունները վորոշելու, նշանոց ու նշանակետ ընտրելու հետ և այլն, և դրանց մրցայության ընդլիժ տալ :

ՀՐԱՀԱՆԻ ԻՋԵՑՈՒՄԸ

(Հրաձգային կառնկագրքի II մասի 122 հոդ .)

170. Հրահանն իջեցնելու տեխնիկայի ուսուցումը՝ նշանադրության հաստոցի վրա ամրացրած հրացանով պետք է նպատակ ունենա՝ սկզբում ցույց տալ և պարզել սովորողներին այդ գործողության կատարելու տեխնիկան : Իսկ գործնական վարժությունները պետք է կազմակերպել առանց հաստոցի, սովորական հեռավորություններից ու ձեռքից, դրանց միացնելով կրակի պատրաստվելու և նշանադրության վարժություններին :

171. Ուսուցումն սկսելիս, սովորեցնողը յուցատրում է .

ա) դիպուկ ձիղի համար բավական չե միմիայն ձիղտ նշանադրությունը, այլ անհրաժեշտ է, վոր հրահանն իջեցնելու մոմենտին այդպիսի նշանադրությունը շխախտվի. դրա համար հարկավոր է հրահանը սահուն իջեցնել, ձգանը միակցամից ձգել և այդ մոմենտին շնչառություներ պահել .

բ) միևնույն ժամանակ հրահանի իջեցումը պետք է վնասվան և կարճ լինի: Դանդաղկոտում թյունն սղողում է հրացանի կայունության վրա և, առհասարակ, անտեղի յե մարտում, յերբ նպատակները յերևում են կարճ ժամանակով ու արագ ել անհետանում են:

Դավթիքութուն. — Այն հրացանաձիգներին, վո-
րոնք հակում ունեն ձգանքը ցունց տալու և
դժվար են յենթարկվում սահուն իջնցնելու ու-
սուցմանը, պետք և վարժեցնել կարճ, թեկուզ
և կտրուկ հրահանն իջնցնելուն, վոր պետք և
տեղի ունենա ձիւտ նշանառության մոմենտին :

172. Վորպեսզի սովորողը հնարավորութիւն ունենա յուրացնել սահունութեան և միեւնոյն ժամանակ իջեցնելու վճռականութեան միտքը, սովորեցնողը հրամայում և նրան հրացանը վարժական փամփուռներով լցնել, նշան բռնել (հաստոցից) և ցուցամատը դնել ձգանի վրա. սովորեցնողն ինքը կանգնում և նրանից մի փոքր յետ, նրա կողքին, իր մատը դնում և սովորողի մատի վրա և, սեղմելով սովորողի մատը, անձամբ ցույց և տալիս, թե ինչպես պետք և հրահանն իջեցնել Դրանից հետո սովորեցնողը ստուգման համար ստիպում և սովորողին նույն ձևով սեղմել իր մատը: Այդ յեղանակն ալելի լավ և ամեն տեսակի բանավոր բացատրութիւններից. այդ անհրաժեշտ և կատարել յուրաքանչյուր սովորողի հետ:

173. Ցուցնելու համար

173. Յուդեամատի զարգացման համար չափ ոգտակար է համապատասխան մարզանք կատարել, այսինքն ցուցամատը ծալելու և բանալու վարժություններ, մնացած մատները պինդ բռնեցը սեղմած դրուժթամբ: Այդպիսի վարժությունները, վորքան հնարավոր է, պետք է հաճախ կատարել:

174. Անհրաժեշտ է սովորողներին ցույց տալ,

Թե հրահանն իջեցնելիս, ինչպես պետք է շնչառությունը պահել․ հրացանն ուսին դնո՞ւ առլիս պետք է արտաշնչել, իսկ հետո մի քիչ ողնեղջնեղ էլ և, ձգանին սեղմելն սկսելիս, շունչը պահել մինչև հրահանն իջեցնելը։ Մշտապես դիտելով և հիշեցնելով, պետք է հասնել այնպիսի դրության, վոր սովորողի համար շունչը պահելը սովորություն դառնա և նա անգիտակցաբար կատարի։

ՈՒՍՈՒՅՈՒՄ ԱՌԱՆՑ ՀԱՍՏՈՑԻ

ԿՈԹՆ ՈՒՍԻՆ ԴԵՄ ՏԱԼԸ

175. Կրակի պատրաստվելու ձևը պետք է
ցույց տալ ամբողջովին. միաժամանակ նաև պետք
է բացատրել, Վոր ա՛յդ ձևի կատարման համար
հարկավոր են մի շարք դործողություններ, այն
է՝ հրացանը նպատակի ուղղությամբ մեկնել,
ձախ ձեռքով նշանոցի տակից բռնած, հետո կոթը
դնել ուսի փորոքին, աջ ձեռքի ցուցամատը կը-
ռացնել ձգանի շուրջը, գլուխն այնպես պահել,
վոր հատիկը յերեւա նշանոցի դիտոցի հենց մեջ-
տեղում և նրա յեզրերին հալխասը (կանոնավոր
հատիկ վերցնել) :

Յուրաքանչյուր գործողությունն առանձին
յուլյոյ տալ, բացատրել, թե ինչո՞ւ յե
տեղիս կատարվում, և ապա անցնել ուսուց-
մանը :

176. Ուսուցման ժամանակ սկզբում պահանջել:

ա) վոր սովորողը հրացանը միանգամից ուսի փորձքին դնի աշխարհի բարձրութեան վրա, վոր հարմար լինի նշան դնելու համար: Այդ բարձրութիւնը կախված է հրացանագէի մարմնի կազմութիւնից և նշանոցի բարձրութիւնից.

բ) վոր սովորողը կոթն ուսի փորոքում ա-

մութ պահի. աջ ձեռքի թաթով ամուր սեղմի կոթի ճիտը և շիկի հրացանը.

դ) վոր ձախ ձեռքով բռնի հրացանը նշանոցի տակից կամ ձգանի կամրջակին ավելի մոտ, նախած հրացանաձգի թևի յերկարությանը և ձախ արմունկի համար յեղած հենարանին:

Հետո անհրաժեշտ և ձգտել, վոր հրացանն ուսին զեմ տալու գործողությունը կատարվի արագ, ճկուն ու մեքենայաբար և չփանի հրացանաձգի ուղղորթությունը նպատակը զիտելուց:

177. Անհրաժեշտ և թևերի ուժը զարգացնել, փորպետզի սովորողը հասնի հրացանն ուսին զեմ տված պահելու կայունությանը: Դրա համար անհրաժեշտ և հրացանով համապատասխան մարմնամարզական վարժություններ կատարել, ինչպես որինակ՝ հրացանն ուսին զեմ տված պահել յերկար ժամանակ առանց ձախ ձեռքի ողնության, հրացանը կոթի ձախ բռնած բարձրացնել մեկնած (աջ կամ ձախ) ձեռքով և հետո կոթը զեմ տալ ուսին և այլն: Այդպիսի գործողությունները կարելի չե կատարել կուլեկաթի կերպով, սովորողների մեջ ժրջություն առաջացնելով:

Ծանոթություն. — Այդ զեպքում անհրաժեշտ և զգուշ լինել, փորպետզի հրացանը չփշանա, մանավանդ թույլ շտալ հրացանը սլինով զետնին կամ հատակին հենել:

ՆՇԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀՐԱՀԱՆԻ ԻԶԵՅՈՒՄ

(Հրաձգային կանոնագրքի II մասի 122 հոդ.)

178. Նշանառությունը և հրահանի իջեցումը յերկու գործողություն են, վորոնց զժամը և բաժանել իրարից հրաձգության ժամանակ, և միևնույն ժամանակ այդ ուսումնասիրելու համար ամենագոյն գործողություններն են: Մինչդեռ ղեկավար հրաձգության արվեստը ամենամեծ չա-

փով կախված և նրանց ճիշտ, արագ, ճկուն կատարել կարողանալուց և զլիափորապես նրանց իրար հետ ճիշտ համաձայնեցնելուց:

Այդ ունակությունը ձեռք և բերվում հաստատ և յերկարատև վարժությունների միջոցով:

179. Նշանառության և հրահանի իջեցնելու վարժությունները պետք և կատարել զլիափորապես զաշտում այնպիսի նպատակների վրա, վորոնք համապատասխանում են մարտական իրականությանը և գտնվում են իսկական հեռավորությունների վրա: Յեթե այդ վարժություններն անհրաժեշտաբար հարկ և լինում չինության մեջ կատարել կամ ընդհանրապես փոքր հեռավորությունների վրա, այդ զեպքում նպատակները ևս պետք և համապատասխան չափով փոքրացրած լինեն, փորպետզի սովորողների համար սովորություն չդառնա արհամարել իրենց կատարած սրխալները, յենթադրելով, թե նրանք, նպատակի մեծության հետ համեմատած, աննշան են:

Ծանոթություն. — Սենյակային վարժությունների համար ամենից շատ կարելի չե կիրառել նշանառության հեռատեսիլ պատկերներ, վորոնք վորոշ չափով մոտեցնում են տեսողական տպավորություն իրականության պայմաններին:

180. Գերադասելի չե առաջին դասերն անցկացնել սովորողի նստած դրությամբ և հրացանը հենարանի վրա դրած, վորն ամենակայուն դրությունն և: Հաջողության հասնելուց հետո, պետք և անցնել այլ դրություններին զժամարության համեմատ, մինչև կանգնած դրությամբ առանց հենարանի կատարելը ներառյալ:

Ծանոթություն. — Ոգտակար և սովորողներին վարժեցնել, թե ինչպես պետք և հրացանի փոկով ոգտվել:

181. Սկզբնական վարժությունների ժամանակ, սովորողին վարժեցնել հատիկը նշանակելու հասցնել, աստիճանաբար ներքևից դեպի վեր բարձրացնելով: Հետագայում աստիճանաբար կրճատել հատիկը բարձրացնելու թափը, սովորողի մեջ ունակություն զարգացնել, վոր, հրացանն ուսին դեմ տալու հետ միասին, նշանառության դիժը միանգամից ուղղված լինի նշանակելուն (վերաձիգ նշանակություն), և առանց հատիկը շարժելու նշանառության դիժը հաստատ պահել մինչև հրահանի իջեցումը:

182. Եսպես կարելոր է, վոր յուրաքանչյուր սովորող լավ լիմանա իր հրացանի ձգանի իջնելը: Յերբ սովորողը վարժված է իր հրացանի ձգանին, նա կարող է ձգանին սեղմելն առաջոց սկսել, քանի դեռ հատիկը նշանակելուն չի հասել, և սեղմելը վերջացնել հարկավոր մոմենտին, յերբ հրացանը ճիշտ նշան դրած և կայուն դրության մեջ կլինի:

183. Պետք է հաստատապես պահանջել, վոր սովորողը սովորություն դարձնի հետևել հատիկին, հրահանն իջեցնելու մոմենտին, և ձիգից հետո բարձր ձայնով դեկուցի (հետևյալ բառերով՝ դեպի ձախ, դեպի վեր, դեպի ցած, ճիշտ է և այլն), թե հատիկը վոր կողմն է թեքվել: Սովորեցնողը պարտավոր է անշեղ կերպով ստուգել, թե վորքան է ճիշտ դեկուցումը, ստուգելով սովորողների նշանառությունը անոթների միջոցով:

Սովորեցնողի աչքին անմիջապես ուղղված նշանառության ստուգումը խստորեն արգելվում է:

184. Գործադրության մեջ յեղած ընդ որ առթիւները կարելի է յերեք տիպի բաժանել. ա) սովորական հայելիներ, բ) նշանառության ան-

դրադարձնող ապակիներ և գ) լրացուցիչ (կողմի) նշանցային դիտոցներ ու հատիկներ:

185. Սովորական հայելին գործածելիս, կանոնաբար կամ ամրացնում են պատի կամ սյունի վրա հրացանաձգի աչքի բարձրությամբ. սովորեցնողն ու սովորողը տեղավորվում են յերեսով դեպի հայելին, մի քիչ շեղակի՝ առաջինը դեպի աջ, իսկ յերկրորդը դեպի ձախ, վորպեսզի միմիանց անդրադարձումը տեսնեն հայելու մեջ. այդ դեպքում սովորեցնողը պահում է աչքի առաջ փորացրած թիրախը և նայում է նշանակելու միջի ծակով, իսկ սովորողը նշան է բռնում այդ կետի անդրադարձմանը: Կայունության համար ավելի լավ է թիրախն ամրացնել հայելու չրջանակին՝ շարժական քանոնի ոգնությամբ:

Այսպիսով սովորեցնողը տեսնում է հատիկի գաղաթը, նշանոցի դիտոցի և սովորողի աչքի փոխադարձ դրությունը հակառակ կողմից և հետևաբար կարող է վերստուգել նշանառության ճշտությունը. միայն պետք է, վոր սովորեցնողի աչքը (թիրախը) և հրացանի հատիկը հայելուն մոտիկ գտնվեն և լավ լուսավորված լինեն:

Հայելու միջոցով ստուգումը հարմար է իր պարզությամբ. ստուգման համար համարյա թե կարիք չկա վոչ մի նախապատրաստական գործողությունների, իսկ ստուգումն արագ է ընթանում: Բայց նրա գործադրությունը հնարավոր է միայն 3—4 քայլ հեռավորությունների վրա նշանառության վարժություններ կատարելիս, քայլ և այնպես սովորողի սխալները հազվագյուտ դեպքում են յերևում բավականին ճշտությամբ:

186. Նշանառության անդրադարձնող ապակիները (ծխադուխ կամ գունավոր) այնպիսի առթիւներ են, վորոնք ամրացվում են հրացանի վրա նշանոցի դիտոցի յետևում այնպես, վոր ապակին

նշանառութեան գծի հետ 45 աստիճանի անկյուն կազմի: Ապակին չի խանգարում սովորողին նը-
շան բռնել ամեն մի նպատակին՝ զանազան հեռա-
փորութիւնների վրա, սովորական դիտողի մի-
ջով և հատիկի վրայով. իսկ սովորեցնողը, տեղա-
փոխելով նրա կողքին, կարող է ապակում տես-
նել հրացանաձգի նշանառութեան գծի անդրա-
դարձումը:

Մի քանի անոթներ խորոց ունեն, փորոնք ա-
վելացնում են գիտողութեան ճշտութիւնը ստու-
գողի իրեն կողմից:

Այդ տիպի անոթները աչքի յեն բնկնում ի-
րենց պարզ կազմութեամբ և գործադրութեամբ:
Նրանց պլնավոր առավելութիւնն աչն է, փոր
նրանք պիտանի յեն այնպիսի նպատակների վրա
նշանառութեան ստուգման համար, փորոնք գրո-
նրվում են իսկական հեռափորութիւնների վրա:
Նրանց պակասութիւնն աչն է, փոր հրացանաձգի
կողքի սխալները յերեւում են ստուգողին դեպի
հակառակ կողմը. իսկ յեթե նպատակը հորիզո-
նից բարձր կամ ցածր է տեղափոխած, ստուգո-
ղին այնպես է թվում, թե հրացանը թեքված է:

Սակայն գոյութիւն ունեն գրանց. նման ա-
նոթներ յերկու հայելի ունեցող (որսոսկոպներ),
փորոնք այդ վերջին պակասութիւնները չունեն.
նրանք ոգտվելու համար շատ հարմար են, բայց
բարդ, մեծածափալ ու թանկարժեք են:

187. Լրացուցիչ նշանցալիս դիտոցն ու հա-
տիկն ամրացվում են հրացանի վրա՝ հիմնական
դիտողից ու հատիկից աջ և կազմում են լրացու-
ցիչ նշանառութեան գիծ, հրացանի նշանառու-
թեան գծին զուգահեռական. հենց այդ գծովն էլ
ոգտվում է սովորեցնողը սովորողին ստուգելու
ժամանակ, տեղափոխելով նրա աջ ուսի յետևում:

Այդ անոթը թույլ է տալիս նշանառութիւնն

ստուգել նաև իսկական հեռափորութիւնների վրա
և ձեռնտու յե մանավանդ նրանով, փոր սովորեց-
նողին հնարափորութիւն և տալիս անմիջապես
գիտել նպատակը և վոչ թե նպատակի անդրա-
դարձումը, և տեսնել սովորողների կա-
տարած սխալները իսկութեամբ և վոչ թե հա-
կառակ ձևով: Այդ անոթը կարելի յե գործադրել
նաև մարտական փամփուշտներով հրաձգութեան
ժամանակ: Բայց նրա գործադրութիւնը բարդ և
դանդաղ է. յուրաքանչյուր անգամ պետք է հաս-
տոցի ոգնութեամբ մեծ խնամքով հարմարեցնել
նշանառութեան ոգնական գիծը հիմնական գծի
հետ այնպես, փոր այդ գծերը ճիշտ հատվեն նշա-
նակետում: Ահա այդ հանգամանքը շատ է նվա-
զեցնում անոթի առավելութիւնը և նրան քիչ գոր-
ծածական է դարձնում:

188. Զգանն իջեցնելը ճիշտ նշանառութեան
հետ համաձայնեցնելու ունակութիւն ձեռք բե-
րելու համար կարող են փորոչ ոգուտ տալ այնպես
կոշված խաչիկները: Այդ յերկու բացահայտ
կերպով, փոխադարձաբար ուղիղ անկյունով
հատվող գծեր են, փորոնք գծված են մոմաթղթի
վրա, կամ պատրաստվում են յերկաթալարի
(թելի) յերկու կտորից, փորոնք ամրացվում են
փորք փայտե կամ յերկաթալարի շրջանակի մեջ.
խաչիկներն ամրացվում են պատուհանի տպակուն
կամ սպիտակացրած պատին:

Յերբ սովորողը նշան է բռնում յերկու գծի
հատման կետին, նա հեշտութեամբ կարող է տես-
նել արձակելու միջոցին հատիկի շեղումները նը-
շանառութեան գծից և դրանով կարող է դատել իր
կատարած սխալների ուղղութեան և մեծութեան
մասին: Սխալների ավելի ճիշտ հաշվառման հա-
մար, խաչիկի թե ուղղաձիգ և թե հորիզոնական

գծերի վրա կենտրոնից սկսած վորոշակի և համասար հեռավորությունների վրա նշաններ են անում (հանդույցներ կամ խաչեր) :

189. Նշանառություն և հրահանի իջեցման ստուգման համար, իբրև ավելի լավ և վոչ մի գործիքով անփոխարինելի յեղանակ, ծառայում է, իհարկե, իսկական հրաձգությունը՝ կոտորիկներով, փոքրալից և մանավանդ մարտական փամփուշտներով : Այդպիսի հրաձգության համար ցուցումները դրված են ներքևում «Հրաձգության վարժական գործնության (պրակտիկա)» գլխում :

ՀՐԱՅԱՆԸ ՊԱՐՊԵԼԸ ՅԵՎ ՀՐԱՀԱՆԸ ՊԱՀՊԱՆԻՉ ՎՈՏՔԻՆ ԴՆԵԼԸ

(Հրաձգային կանոնագրքի II մասի 136-138 հոդ.)

190. Այդ գործողությունների ուսուցումը հարմար և կապել հրացանը լցնելու ձևերի ուսուցման հետ, ինչպես այդ ցույց է տված 152-րդ հոդվածում : Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել, վոր սովորողները կարողանան հրահանը դնել պահպանիչ վոտքին և ընդհակառակը, պահպանիչ վոտքից մարտական վոտքին : Հարկավոր է, վոր սովորողները վարժվեն այդ գործողությունները կատարել նույնպես ճիշտ, արագ և ճկուն, ինչպես և մնացած գործողությունները հրացանով :

ԶԻԳ (ՄԻ ՇԱՐԲ ԶԻԳԵՐ) ԿԱՏԱՐԵԼՈՒ ԲՈԼՈՐ ԴՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՅՈՒՄԸ

191. Զիգ կատարելու բոլոր անհրաժեշտ գործողությունների բաժնակի ուսուցումը վերջացնելուց հետո, պետք է սովորողներին լավ վարժեցնել, վոր այդ գործողություններն անընդհատ և անբաժան կատարեն : Այդպես կատարելու ճշ-

տությունը, ճկունությունը և արագությունը պետք է հասցնել ավտոմատիզմի, վորպեսզի հետագայում, հրացանի հետ վարվելու ժամանակ, հրացանաձգի ուշադրությունը չչեղվի այն գործողություններից, վորոնք պահանջում են հրացանաձգից փոակցություն, այսինքն մարտագալտի գիտողությունից, հեռավորությունները վորոշելուց և նշանոցի ու նշանակետերի, նույնպես և ձիգի համար բոպեյի ընտրությունից և այլն :

192. Դրված նպատակին հասնելու ամենալավ միջոցն է՝ սովորողներին հաստատապես վարժեցնել պարզ խնդիրներ լուծելու մեջ. այդ ժամանակ սովորեցնողը պետք է ճիշտ ցույց տա նրա պատկները, հրաձգության համար տեղն ու դրությունը, նշանոցի բարձրությունը, նշանակետը, հրաձգության ժամանակը և բանեցնելու համար նշանակված փամփուշտների քանակը. դրա հետ միասին պետք է պահանջել ճիշտ, ճկուն և արագ կատարել վերոհիշյալը : Սկզբում պետք է սահմանափակել մեկ ձիգ կատարելու վարժությունը, իսկ հետո անընդհատ, իրար հետևող մի շարք ձիգ կատարելու վարժություն՝ մինչև 5-10 և նույնիսկ 15 ձիգ :

193. Հիշյալ վարժություններն անցնելու հետ միաժամանակ և նրանց հետ սերտ կապ պահելով, պետք է սկսել սովորողներին վարժեցնել սկզբում սին և փոքրալից, իսկ հետո մարտական փամփուշտներով հրաձգության մեջ : Այդպիսի վարժությունների համար ցուցումներ բերված է ներքևում հատուկ գլխում :

194. Հետագայում նախապատրաստական ուսուցումը պետք է վերածել ավելի բարդ առաջադրությունների, բայց սովորողների տարրական մարզանքը մնում է իբրև անհրաժեշտություն :

Յուրաքանչյուր հրացանաձիգ պարտավոր է մըշտապես վարժվել և կատարելագործվել, վորպեսզի կարողանա հրացանին տիրապետել, հակառակ դեպքում, նրա ձեռք բերած ունակութիւնը ժամանակի ընթացքում կարող է թուլանալ:

ԿՐԱԿ ՎԱՐԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՈՒՑՈՒՄՆԵՐ

195. Սույն բաժնի խնդիրն է՝ սովորեցնել յուրաքանչյուր սովորողին մարտական պարագայում հարմարվել հրաձգութիւն զանազան տեսիւնիքական ու տակտիկական պայմաններին: Այս բաժնին իր մեջ պարունակում է ցուցումներ հրաձգութիւն ուսուցման վերաբերյալ տարվելիք պարագայում ընդերքի համար.

ա) անակնկալ յերեացող և արագ թաղնվող նպատակներ լրա հրաձգութիւն կատարելու և առհասարակ, արագութիւն վերաբերյալ.

բ) շարժվող նպատակների վրա.

գ) քամի յեղած ժամանակ.

դ) արեւի և պայծառ լուսավորութիւն ժամանակ.

ե) դիշերը, մութը և արհեստական լուսավորութիւն ժամանակ, նույնպես և մառախուղի ժամանակ, ծխածածկութիւն միջով և այլն.

զ) դադարին գրոհի հանդիպելիս (դիմակնեւում).

ը) ընդհանրապես պաշտպանութիւն և հարձակման պարագայում:

196. Հիշյալ ծրագրի համեմատ պարագայում ընդերք պետք է արդէն սկսել հրացանաձգին ձիւքի տեսիւնիքային սովորեցնելու շրջանում և շարունակել ստորեւ բերված մարտական փամփուշտներով գործնական, իսկ հետո մենագարկ

մարտական հրաձգութիւն դասընթացն անցնելու հետ զուգահեռաբար:

ԱՐԱԳ ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

(Հրաձգային կանոնագրքի II մասի 128—131 հոդ.)

197. Հրացանաձգին արագ հրաձգութիւն սովորեցնելն անհրաժեշտ է յերկու տարբեր մարտական պահանջներին բավարարելու համար.

ա) վորպեսզի հրացանաձգի մեջ ունակութիւն մշակել՝ ձկուն հատ-հատ վերաձիգ գընդակներով հարվածել մանր մարտական նպատակները, վորոնք անակնկալ կերպով յերեւան են դալիս մարտադաշտում և նույնպես անակնկալ կերպով թագնվում (հակառակորդի մարտիկների կերպարաններ, հրամատարական կազմի անձինք, զնդացիներ և այլն).

բ) վորպեսզի հրացանաձգին սովորեցնել, կարիք յեղած ըռպէյին, փոքրիչատե յերկար ժամանակ և մեծ լարվածութեամբ անընդհատ նշանոցային կրակ դարդացնել, հակառակորդին (խմրական նպատակին) ամենակարճ ժամանակամիջոցում ամենամեծ նյութական կորուստներ և բարոյական ցնցումներ հասցնելու համար:

198. Առաջին խնդրի (հոդ. 197 կետ ա.) լուծման համար իբրեւ միջոց ծառայում են մասամբ արագ արձակելու տարրական վարժութիւնները, վորոնց մասին խոսվեց վերեւում: Ուսուցման սույն շրջանի վարժութիւններն անհրաժեշտ է լրացնել, պահանջելով սովորողից ուշադրութեամբ դիտել իրեն հսկողութեանը հանձնած մարտադաշտի շերտին, արագ ցուցահանել և դընհատել անակնկալ յերեացող նպատակները, այդ նպատակների հեռավորութիւնները վորոշել և արագ ընտրել ճիշտ նշանոցի հաստումն ու նշանակելու:

199. Հոգ. 198-ում ցույց տված վարժությունները պետք է պայմանավորված լինեն պարզ, բայց փորոշակի մարտավարական խնդիրներով. այդ դեպքում սովորողի գործողությունների սկիզբն ու վերջը փորոշվում է, ըստ հնարավորին, նպատակի յերևալով և անհայտանալով, բայց վոչ թե նրան նշանակած վարկյանների թվով կամ սովորեցնողի կողմից հրամաններ տալու միջոցով:

200. Կրճատ հեռակայությունների վրա վարժություններ կատարելու համար, յերևան յեկող նպատակներ սարքելը, առհասարակ, դժվարություններ է ներկայացնում. ուստի իբրև նպատակներ կարող են հարմար կերպով ծառայել սովորական փոքրացրած թիրախները, վոչ պետք է կպցնել փայտե տախտակների վրա և քղերի ոգնությամբ ղեկավարել:

Բայց ավելի խրատական և անհրաժեշտ է վարժություններ կատարել իսկական հեռակայությունների վրա: Այդ դեպքում նպատակները պետք է ներկայացնել հատուկ նշանակած մարդկանցով կամ թեթև շարժական թիրախներով:

Համենայն դեպս նպատակների յերևան դալու և թաղնվելու ղեկավարությունը պետք է սովորողի ձեռքում լինի:

201. Պետք է սխտեմատիկ կերպով ուժեղացնել նպատակների յերևան դալու անակնկալությունը՝ տեղի և ժամանակի վերաբերմամբ, կրրճատել նրանց յերևալու ժամանակամիջոցը և ավելացնել պահանջկոտությունը սովորողի գործողությունների արագությունը վերաբերմամբ. այդպիսով հիշյալ բնույթ կրող խնդիրների լուծման ժամանակ պետք է սովորողին հասցնել հնարավոր ճկունությունը:

Խնքնստիճյան հասկանալի յե, վոչ արագությունը չպետք է նվազեցնի ձիգի ճշտությունը:

նը. սովորեցնողը պետք է դրանում համոզվի, սովորողին ստուգելով, յեթե այլ միջոցներ չկան, վարժական փամփուլաներով վարժությունների ժամանակ վերստուգիչ անոթների ոգնությամբ:

202. Սովորողների կողմից յերկարատև նշանոցային կրակ վարելու ընդունակություն մարդանքը ավելի պարզ վարժություններ է պահանջում: Դրա համար բավական է, վոչ սովորողները հաստատապես վարժվեն սովորեցնողի կողմից առաջուց ցույց տված տեղական խմբական նպատակների կամ բնագծերի դեղակոծման մեջ (վարժական փամփուլաներով), հասանելի արագությամբ և դիպուկությամբ, հրաձգություն սկսելով «կրակ» հրամանով և դադարեցնելով «կրակի դադար» հրամանով (կամ սուլիչով):

203. Այդպիսի վարժությունների տեղությունը մարզվելու նպատակով պետք է աստիճանաբար ավելացնել մինչև 1½—2 բուպե և ավելի, վոչ համար յուրաքանչյուր սովորողին պետք է տալ մի քանի պահուցակ վարժական փամփուլաներով: Այդ միջոցին պետք է միաժամանակ ձրդտել հրաձգության արագությունը, տոկունությունը ու բավականաչափ դիպուկությունը, առանց աչքաթող անելու, ըստ հնարավորին, յուրաքանչյուր ձիգի ճշտություն ստուգելու անհրաժեշտությունը:

Մակոք ուրյուն. — Սովորողներին միաժամանակ պետք է ծանոթացնել խմբական հրացանային կրակի և խմբական նպատակների դեղակոծման ձևերի և կանոնների հետ, նկատի ունենալով սովորողներին նախապատրաստել չաբային գորամասերի կազմի մեջ ուսուցման չրջանի համար:

204. Մարտական իրականության համեմատ, առհասարակ պետք է հրացանաձիգ արագ հրա-

ձգության բոլոր վարժությունները սահմանափակել ուղիղ ձեռքի հեռավորությամբ: Ուստի պետք է սովորեցնել նրան ձեռք և գիտակցորեն որդյով մշտական նշանոցով:

205. Վորպեսզի սովորողներին զրգել արագ հրաձգության մեջ կատարելագործվելուն և ներանց հաջողությունները բարձրացնելուն, ոգտակար և վարժություններին մրցական բնույթ տալ և ժամանակ առ ժամանակ փոքր մրցություններ կազմակերպել:

ՇԱՐԺՎՈՂ ՆՊՕՏԱԿՆԵՐԻ ՎՐԱ ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ

(Հրաձգային կանոնագրի II մասի 124 հոդ.)

206. Շարժվող նպատակների վրա հրաձգության վարժությունները նկատելուն սովորողների մեջ ունակություն զարգացնել՝ մոտեցող կամ հեռացող նպատակների գնդակոծման ժամանակ նշանոցը ձեռք փոխել կամ նշանակեալ, ըստ բարձրության փոխադրել: Իսկ դեպի մի կողմը շարժվող նպատակների վրա հրաձգության ժամանակ, ձեռք հաշվել նշանակեալ նպատակից առաջ դուրս բերելու չափը, վոր պետք է համապատասխան լինի մինչև նպատակը յեղած հեռավորությանն ու շարժման արագությանը:

207. Մոտեցող կամ հեռացող նպատակների գնդակոծման վարժությունները պետք է կատարել անմիջապես դաշտում, իսկական հեռավորությունների վրա և նպատակները, ըստ հնարավորին, կենդանի մարդկանցով (ծիւփորներով, սայլերով) նշանակել: Այդ ժամանակ սովորողները պետք է յուրացնեն նշանոցն ու նշանակեալ փո-

խելու կանոնները, վոր բացատրված են հրաձգային կանոնագրի II մասի 63—65 հոդվածներում:

208. Դեպի մի կողմը կամ շեղակի ուղղությամբ շարժվող նպատակների գնդակոծմանն ուսուցումը պետք է սկսել՝ նախ ցույց տալով վորոշ կետում նպատակներին գնդակով սպասելու յեղանակը (Հրաձգային կանոնագրի II մասի 68 հոդ.), իսկ հետո անցնել նպատակին հատիկով անրնդհատ ուղեկցելուն (նույն կանոնագրի 67 հոդ.): Այդ միջոցին սովորողին հիշեցնել, վոր նշանակեալ նպատակից առաջ դուրս տանելու չափը պետք է աչքան մեծ լինի, վորքան նպատակն ավելի հեռու յե գտնվում և վորքան նա արագ և շարժվում դեպի մի կողմը: Որինակ, 500 քայլ հեռավորության վրա վազող հրացանաձգին գնդակոծելիս, գնդակը նրանից $1\frac{1}{2}$ քայլ յետ կմնա, այսինքն աչքան, վորքան մարդը կարող է վազել $1\frac{1}{2}$ վայրկյանում (գնդակի 500 քայլ թռչելու ժամանակամիջոցը): Ուստի նրան հարկաձուլու համար պետք է նշան բռնել մոտավորապես $1\frac{1}{2}$ քայլ (3 կերպարան) առաջ՝ դեպի նպատակի շարժման կողմը:

209. Դեպի մի կողմը շարժվող նպատակների վրա հրաձգության սկզբնական վարժությունները կարելի յե կատարել սենյակում կամ բակում, ոգտվելով շարժվող փոքրացրած թիրախներով՝ նրա նպատակները ներկայացնելու համար: Հետագայում պետք է անդալման դուրս գալ դաշտը՝ իրական հեռավորությունների վրա, իսկական կենդանի նպատակների (ծիւփորների, սայլերի) դեմ վարժություններ կատարելու համար:

Հրաձգության մեջ վարժվելու համար, պարապմունքների ժամանակ պետք է ոգտվել յուրաքանչյուր հարմար դեպքից, նշան գնելով մոտակից շարժվող պատահական նպատակներին:

210. Շարժվող նպատակների գնդակոծման ժամանակ ճիշտ նշան բռնելու և հրահանն իջեցնելու ստուգումը կարելի չէ կատարել սովորական կարգով՝ նշանառության անդրադարձնող ապակիների և կողքի նշանոցների ոգնությամբ:

ՔԱՄՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

211. Զիզի ճշտության վրա քամու (հակընդդեմ, ուղեկից, կողքի և չեղակի) ազդեցության հետ սովորողները պետք է ծանոթացած լինեն ձգարանական տեղեկությունների ուսումնասիրության պարապմունքների ժամանակ և ցուցական հրաձգությունների ոգնությամբ: Ուսուցման սույն շրջանում սովորողները պետք է լրացուցիչ վարժություններ կատարեն. ա) քամու ուժն ու ուղղությունը վորոշելու և բ) նրա ազդեցությունը հակազդելու համար:

212. Ամենայն մեթոդն այն է, վոր նշանառության և հրահանի իջեցման վարժությունները կատարվեն դաշտում, քամի յեղած ժամանակ, զանազան նպատակների դեմ, զանազան ուղղությամբ և զանազան հեռավորությունների վրա. այդ վարժությունների ժամանակ սովորողը պետք է հաշվի առնի գնդակների հավանական խոտորումը, իսկ սովորեցնողը պետք է անպայման ստուգի անոթների ոգնությամբ կատարած հաշվառման կանոնավորությունը և ձիզի ճշտությունը:

213. Յեթե հնարավորություն չի լինում ողտադործել վորոշ ժամանակ իրական քամին, գործնական վարժությունների համար պետք է դիմել պայմանական առաջադրություններին:

Որինակ: Մինչև նպատակը յեղած հեռավորությունը 800 քայլ է, քամին փչում է ձախից և

ուժեղ է: Հարց. վորտեղին նշան բռնել, վորպեսզի նպատակին դիպցնել: Պատասխան. միջակ կողքի քամին 400-ից մինչև 1200 քայլ բոլոր հեռավորությունների վրա խոտորում է գնդակին նշանակետից դեպի մի կողմը այնքան կերպարանի չափով, վորը համապատասխանում է նշանոցի աստիճանի համարին (հաշվելով առաջին աստիճանը 4-ը, յերկրորդը՝ 6-ը և այլն), տվյալ դեպքում յերեք կերպարանի չափ: Ուժեղ քամին խոտորում է յերկու անգամ ավելի: Դրա համար պետք է նշան բռնել դեպի աջ 6 կերպարանի չափով, հաշվելով նշանի կենտրոնից (թույլ քամու ժամանակ՝ 11/2 կերպարան):

ՊԱՅՅՄԱՌ ԱՐԵՎԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

214. Արև ուր ընտրելով, պետք է վերցնել այնպիսի հրացան, վորի հատիկի և դիտոցի վրայի սև ներկը (մղտադունումը) մաշված է, ամրացնել նշանառության հաստոցում և առաջարկել սովորողին նշան բռնել պարզ տեսանելի կետին: Հետո հատիկն ու դիտոցը արևից ծածկել մի վորեւեքանով և սովորողին առաջարկել նշանառություն ստուգել:

Սովորողները, համեմատելով, պետք է համոզվեն, վոր յեթե հատիկի և դիտոցի մետաղը բաց է, ուրեմն արևի պայծառ, մանավանդ չեղճառազայթները փայլ են տալիս հատիկի և դիտոցի վրա լուսավոր կետերի նման. այդ փայլը հեշտությամբ կարելի չէ ընդունել իբրև հատիկի դադարձ ու դիտոցի յեզր և սխալ նշան բռնել, վորի հետևանքը կլինի գնդակի վրելումը:

215. Հետո պետք է ցույց տալ վերահիշյալ անհարմարությունը վերացնելու մեջոցը, այ-

սինքն հատիկն ու դիտոցը սե ներկով ներկել. նրանց ծուխ տալ կրակի վրա. իսկ յեթե անհնարին է գործադրել այդ յերկու մեջոցը, պետք է նրանց ծածկել վերևից փամփշտի պահուսնակներով:

Պետք է բացատրել, վոր յեթե այդ յեղանակն էլ անհնարին է, պետք է աշխատել նշան բռնել իսկական հատիկով ու դիտոցով և վոր թե նրանց թվացող գծադրությամբ:

216. Յեթե արևը ցածր է և անմիջապես ընկնում է սովորողի աչքի մեջ, այդ ևս դժվարություն է ներկայացնում: Այդպիսի դեպքերում միակ միջոցն է գլխարկի շրջիկով ծածկվել (ցույց տալ, թե ինչպես այդ ավելի լավ կատարել):

ԳԻՇԵՐ ԺԱՄԱՆԱԿ ՀՐԱՉԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ

(Հրաձգ. կառնուագրքի II մասի 126 և 127 հոդ.)

217. Գիշերը հրաձգություն կատարելու յեղանակները պետք է սովորեցնել դիրքերի պաշտպանության և ամրացման հերթական պարապմունքների ընթացքում: Հնարավոր է սովորողներին նախապես ծանոթացնել այդ յեղանակների հետ ցերեկվա պարապմունքների ժամանակ. ընթաց պարապմունքներն անհրաժեշտ է գիշերը տանել, վորպեսզի սովորողները տողորվեն գիշերվա աշխատանքի զգացմունքով և գրան բնտանան:

218. Առաջին պարապմունքի համար ավելի լավ է ընտրել վոր չափ մութը գիշեր: Սովորողներին պետք է տանել հարմար տեղամասը դեռ լուսով, դիրք գրավել, բացատրել պարապմունքի նպատակը և մատնանշել այն դեպքերը, յերբ

գիշերային հրաձգությունը հրացաններով, առհասարակ, կիրառելի չէ մարտում:

219. Պետք է սկսել առջևում ընկած տեղամասի հետախույզությունից, վորպեսզի պարզել հակառակորդի ավելի հավանական և մոտավոր մատուցյները, վորոնք պահանջում են կրակային պաշտպանություն:

220. Հետո գործնականում ցույց տալ, թե ինչպես պետք է նախապատրաստվել գիշերն այդ մատուցյները զնդակոծելու համար. սովորողները, սովորեցնողի ղեկավարությամբ, պարտավոր են հողաթմբերում պատրաստել վաքեր, հենարաններ, խճմարներ և այլն՝ հրացաններին պահանջված ուղղությամբ կայունություն տալու համար, պատրաստել մթության մեջ տեսանելի նշանակետեր (սպիտակ ներկած ցցեր կամ ցցերին ամրացրած սպիտակ թղթի կտորներ). միջոցներ կազմակերպել հակառակորդի զրոհներն իր ժամանակին ցուցահանելու և այլն:

221. Ազնամուղջը մոտենալիս, մարդիկ ուղարկել հակառակորդին ներկայացնելու համար, նրանց անհրաժեշտ ցուցումներ տալով գործողությունների համար: Մութն ընկնելուց հետո հրամայել սովորողներին իրենց տեղերը գրավել. ստուգել պատրաստած բոլոր հարմարանքները և կենտրոնանալ առջևում ընկած տեղանքի դիտողության վրա. ուղղորդությամբ ականջ դնել ամեն մի ձայնի և խշխշոցի և ամեն մի նպատակի մասին զգուշացնել սովորեցնողին:

222. Հակառակորդի յերևալու համար վորոշված ազնամուղջով «կրակ» հրաման է տրվում: Այդ հրամանով սովորեցնողները պարտավոր են ողտադործել բոլոր կատարած պատրաստությունները, վորը և կծառայի նրանց համար իրեն ողտակար գործնական վարժություն:

223. Վերոհիշյալի նման պարապմունքներ են կազմակերպվում սովորողներին ծանոթացնելու հրաձգության պայմաններին լուսնի լուսավորության և գետինը ձյունով ծածկված ժամանակ, նույնպես և լուսարձակի և լուսատու հրթիռների լույսի ժամանակ: Այդ դեպքում պետք է սովորողների ուշադրությունը դարձնել այն հանդամանքին, վոր այդպիսի պարապում նպատակների հեռավորությունը խարուսիկ է լինում:

224. Հրաձգության յեղանակները մատախուղի ժամանակ, ծխածածկութի միջով և այլն միանգամայն նույնն են, ինչ վոր մութը ժամանակ:

ԳԱԶԱՅԻՆ ԳՐՈՂԻ ՀԱՆԴԻՊԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

225. Սովորողներին հակադադային դիմակը հազած հրաձգություն կատարելու ունակություն տալու համար, պետք է նրանց այդպիսի աշխատանքի քաշել աստիճանաբար, հրաձգության պարապմունքների բոլոր շրջաններում, մարտադաշտի դիտողության վարժություններից սկսած մինչև մարտական փամփուշտներով հրաձգության վարժությունը:

Այդ վարժությունները սովորական վարժություններից վոջնչով չեն տարբերվում. ուստի սովորողները փոքր հեռավորությունների վրա (մշտական նշանոցի սահմաններում) պետք է սովորեն և վարժվեն դիմակը հազած աշխատելու ճիշտ այնպես, ինչպես և առանց դիմակի:

226. Այդ նույն պարապմունքների ժամանակ սովորողներին պետք է ծանոթացնել բոլոր հատուկ կանոնների հետ, վորոնք հանձնարարվում են դադերի վնասակար ազդեցությունից ինչպես

հրացանաձիգներին իրենց, նույնպես և դենքը պահպանելու համար:

ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՅԻ ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

227. Անհատական հրաձգային ուսուցման այս բաժինը հնարավորություն է տալիս ի մի դուժարել հրացանաձիգի ամբողջ նախորդ վարժական աշխատանքը և այդ աշխատանքը միացնել հրացանաձիգի մարտական պատրաստություն մյուս բաժինների հետ, նույնպես և վարժեցնել նրան հրաձգային աշխատանքին՝ իր ջոկի կազմի մեջ:

228. Բացառապես այդ բաժնի պարապմունքների ձևը կազմում են սովորողների անհատական վարժությունները ջոկի կազմի մեջ. այդ պարապմունքների ընթացքում պետք է խնդիրներ լուծել մենագարի հրացանային իրակի կիրառման վերաբերյալ, վորը համաձայնեցրած պիտի լինի իր ջոկի ընկերների կրակի հետ, մարտական պարապայի զանազան դեպքերում, ի կատար ածելով այդպիսի կիրառման հետ կապ ունեցող բոլոր գործողությունները, ինչպես որ ինակ՝ տեղանքի հետախուզությունը, տեղավորությունները, հրաձգության համար տեղեր ընտրելը, մարտադաշտի դիտողությունը, նպատակի գնահատումն ու ընտրությունը, նպատակների հեռավորությունների վորոշումը, հրաձգություն ինքը, նույնպես և փամփուշտի պաշարի հաշվառումն ու լրացումը և այլն:

229. Այդպիսի խնդիրները լուծելու վարժությունները պետք է կատարել իրական տեղանքի վրա, մարդկանցով կամ շարժական թիրախներով նշանակած հակառակորդի դեմ: Ոգտակար է սովորողներին սին փամփուշտներ տալ:

Ծանոթութիւն. — Այդպիսի վարժութիւնները մարտական փամփուռներով կատարելու կարգը, բացատրված է առանձին «Հրաձգութիւն վարժական գործնութիւն» բաժնում, մենագրակ մարտական հրաձգութիւն անվան տակ:

230. Նախքան վարժութիւններն սկսելը, անհրաժեշտ է ցույց տալ սովորողներին հրաձգային ջոկի պաշտպանողական ու հարձակողական գործողութիւնների ձևերը արդեն սովորած կարմիր բանակայիններով: Յուշական ուսուցումը պարտավոր է կատարել անձամբ վաշտի (հեծելավաշտի, զորախմբի) հրամատարը:

Ուսուցումն անմիջապէս զառակներին հանձնելուց առաջ, անհրաժեշտ է սովորեցնողներին հետ նախապէս մշակել այն խնդիրները, վոր պետք է առաջարկվեն սովորողներին:

231. Սովորեցնողը, առաջադրութիւնը հայտնելով, սկզբում պարտավոր է իր վրա վերցնել ավելի բարդ հարցերի լուծումը, իսկ սովորողներին տալ համապատասխան հրաձգային պատվերներ, դիտմամբ սահմանափակելով սովորողի ինքնուրույնութիւնը (հրաձգութեան պետի անմիջական ղեկավարութեամբ): Բայց հետո, հետըզհետե հաջողութեան հասնելիս, պետք է սովորողին այնպիսի դրութեան մէջ դնել, վոր նա ավելի ու ավելի ստիպված լինի ինքնուրույն կերպով վճիռներ կայացնել ու գործել իր ձեռներեցութեամբ, առանց ղեկավարող կարգադրութիւնների սպասելու (հրաձգութիւն առանց ղեկավարութեան):

232. Առաջին առաջադրութիւնների համար իբրեւ հիմք ավելի լավ է վերցնել պաշտպանութիւնը, վորպէս ավելի պարզ դրութիւն: Այդ

ղեկըրում պարապմունքը կարելի չէ տանել մոտավորապէս հետեյալ կարգով.

ա) Սովորեցնողը վաղորդք խրատական տեղամաս է ընտրում և մարդիկ ուղարկում հակառակորդին ներկայացնելու համար. հետո բացատրում է պարապմունքների նպատակը և հայտնում մարտավարական յենթադրութիւնը. ապա, նշանակելով ջոկերի ճիշտ դասավորման տեղը, կանչում է 2—3 սովորող և նրանց հրամայում է վորոշ ուղղութեամբ հրաձգութեան համար հարմար տեղեր գրավել:

բ) Ստուգելով յուրաքանչյուրի դասավորութիւնը, սովորեցնողն իր մոտ կանչվածներից հերթով պահանջում է հաշիվ տալ հրաձգութեան վաշտի հետախուզութեան հետեանքների մասին, զնահատել յուրաքանչյուր տեղական առարկան (այդ առարկան մեզ համար ոգտակար է, թե վնասակար) ամենափոքր հեռավորութիւններից սկսած մինչև տեսանելի կետերը և այլն.

գ) Ապա, սովորողների համար աննկատելի կերպով, նշան է անում 600—800 քայլի սահմաններում նպատակներից մեկը ցույց տալու համար: Նպատակը տեսնող առաջին սովորողը պարտավոր է ղեկուցել նրա յերեւալու և հեռավորութեան մասին. զրանից հետո միասնական բնութեամբ կատարվում է նպատակի գնահատումը թե արդէք կարիք կա նրա գեմ կրակ բանալ, նայած նպատակի կարեւորութեանը, նրա մեծութեանը, նրա հարվածելիութեան հավանականութեանը և այլն.

դ) Հետո, յեթե վճռված է կրակ բանալ, սովորեցնողը հարկավոր պատվերներ է տալիս և ստուգում է այդ պատվերների ճիշտ կատարումն ու հրաձգութեան ճշտութիւնը (նշանոցը, նշանակետը և այլն).

ե) Նպատակի թաղցնելուց հետո, սովորեցնողը ներկա յեղած սովորողների հետ միասին քննության և առնում նրանց գործողությունները: Դրանից հետո նոր առաջադրություն և ստեղծում (նոր նպատակներ ցույց տալիս) և պարապմունքը շարունակում նույն յեղանակով: միաժամանակ աստիճանաբար ավելացնում և սովորողների ինքնուրույնության, լրջմտության և հարեանների հետ համերաշխ գործելու պահանջները, առանց ամենափոքր հարցերն աչքաթող անելու: Այդ յեղանակով կարելի չի սպասել պաշտպանության ժամանակ ջոկի կազմում յեղած հրացանաձգի գործողությունների բոլոր բնորոշ գեպքերը:

233. Նույն ձևով կազմակերպվում և խրնդիրների լուծումը նաև հարձակման ժամանակ: Նույնպես անհրաժեշտ և կանգ առնել նաև յուրաքանչյուր հարցի վրա, պահանջելով ամենագործոն մասնակցություն նախ հերթական սովորողների, իսկ հետո և բոլոր ներկա յեղածների կողմից:

234. Յեթե հնարավորություն չկա պարապմունքները կազմակերպել հարմար տեղամասում, կարելի չի ոգտագործել զորանոցին մոտիկ վայրը, առաջադրությունները սահմանափակելով հրացանաձգի մարտական գործողություններով՝ բնականաբանում և պահակային ծառայության պարտականությունները կոտարելու ժամանակ:

Յեթե լավ սարքավորած հեռատեսիլ պլաններ կան, այդպիսի պարապմունքները կարող են ոգտակար լինել նույնիսկ շենքի ներսում:

235. Նկարագրած պարապմունքների ժամանակ, հաջողության հասնելու համար անհրաժեշտ և սովորեցնողների կողմից սխտեմատիկ և լուրջ

աշխատանք: Միմիայն այդ պայմանով պարապմունքները կարող են հետաքրքրութուն առաջացնել սովորողների մեջ և շատ ոգտակար սղակ կազմել ուսուցման փարժությունների բնդհանուր շրջանի մեջ:

ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՆՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՈՒՅՈՒՄՆԵՐ.

236. Հրացանով հրաձգություն կատարելու վարժական գործնություն ստանալու համար, յուրաքանչյուր հրաձգային գեներով սպառաղինված մարտիկ, բանակի շարքերում գործոն ծառայության ընթացքում, պետք և անցնի ներքեում բերված վորոշ հրաձգության դասընթացը մարտական փամփուլաներով: այդ դասընթացը տարբերվում և գորքի տարբեր տեսակներում:

Վերոհիշյալ նկատառումների համաձայն (հոդ. 75), այդ դասընթացը կանոնադրում սահմանափակված և խիստ անհրաժեշտության սահմաններով: Ուստի անհրաժեշտ հաջողություններն ապահովելու համար զորամասերին թույլատրվում և դասընթացը լրացնել, բացի վերոհիշյալ նախապատրաստական պարապմունքներից, այնպիսի վարժություններով, վորոնք մասամբ փոխարինում են այդպիսի գործնությունը, որինակ՝ կոտորելներով, սին և փոքրալից փամփուլաներով հրաձգությամբ:

237. Ինչպես ասված և վերեում, հրաձգության գործնությունը թեպետ և հանդիսանում և իրրե ուսուցման ամենակարեոր միջոց, բայց և այնպես չպետք և և չի կարող անջատ լինել ուստի անհրաժեշտ և այդ գործնությունը կապել ու համաձայնեցնել առհասարակ սովորողի

բոլոր հրաձգային պատրաստութեան ընթացքի հետ: Այդպիսի համաձայնեցման համար դեկտեմբերի 20-ը ցուցումները տրվում են ուսուցման համապատասխան բաժինները բացատրելու ժամանակ:

ԿՈՏՈՐԻԿՆԵՐՈՎ ՀՐԱՋՊՈՒԹՅԱՆ
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

238. Այդպիսի հրաձգութիւնը կատարվում է սովորական վարժական հրաջաններով, հատուկ ակոսավոր փողիկի միջոցով, վեր դրվում է փամփշտանոցի մեջ. իսկ փամփշտի փոխարեն ծառայում է սովորական հրապատիճն ու կոտորիկը: Հրապատիճը տեղը դնելու և հանելու համար կոյուքիւն ունի հատուկ անոթ:

Ծանոթութիւն. — Այդ նպատակի համար կոյուքիւն ունեն նույնպէս հատուկ վարժական փոքր տրամաչափի հրաջաններ, վերոնք կրակում են հատուկ փողբիկ փամփուշտներով:

239. Կոտորիկն աննշան ծակելու ուժ ունի: Կոտորիկի առաջը կտրելու համար բավական և ունենալ թեթեւ հողաթումբ, ավազով կամ թեփով լի տուրակ, յերկաթե կամ տախտակե վահան և այլն:

240. Լավ պատրաստած փողիկը 20—25 քայլ հեռավորութեան վրա բավականին ճիշտ է խրվում, յետեւ նրան պատշաճ կերպով վերաբերվել և կոտորիկների տրամաչափումն ու յուզելը խնամքով կատարել:

Ծանոթութիւն. — Հատուկ հրաջանները դիպուկ են խփում մինչև 100, նույնիսկ 200 քայլ հեռավորութիւնների սահմաններում:

241. Հիշյալ տվյալների հիման վրա կոտորիկներով հրաձգութիւնը շատ աննշան ծախսեր

է պահանջում և ամեն տեղ կարելի չէ հաջողութեամբ կատարել, նույնիսկ մարդաբնակ շենքերում, ամեն ժամանակ, մյուս պարագմունքների հետ զուգընթացաբար. հենց դրանում և այդ հրաձգութեան ձեռնառու կողմը:

Բայց նկատի ունենալով հեռավորութիւնների փոքրութիւնը, մարտական ճիգի ձայնի և յետահարվածի բացակայութիւնը, այդ հրաձգութիւնը քիչ և նմանում մարտական փամփուշտներով հրաձգութեանը: Կոտորիկներով հրաձգութիւնն ոգտակար է միայն իբրեւ սպորտական հրաձգային զվարճութեան հարմար ձև, փոքր հրաձգութեան վերաբերյալ հետաքրքրութիւն և առաջացնում սովորողների մեջ և անջակցում է ճիշտ նշանառութեան ու հրահանք ստանալ իջեցնելու մեջ վարժվելուն:

242. Կոտորիկներով հրաձգութեան ժամանակ իբրեւ նշափակ կարող են ծառայել ընդհանրապէս ընդունված ձևի թիրախները, 20—40 անգամ փոքրացրած, նույնպէս և զանազան կենդանի նպատակների պատկերացումը, ինչպէս նրանք յերևում են իրական մարտում:

243. Կոտորիկներով հրաձգութեան համար պարտադիր վարժութիւններն են սահմանվում: Վաշտի (հեծելավաշտի, զորախմբի) հրամատարներին թույլատրվում է ոգտվել սովորողներին մարդանքի այդ յեղանակով, բոտ իրենց հայեցողութեան:

ՍԻՆ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐՈՎ ՀՐԱՋՊՈՒԹՅԱՆ ՎԱՐժՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

244. Սին փամփուշտը միմիայն մարտական փամփշտի ձայն և հանում, առանց յետահարվածի և դիպումների: Ուստի այդպիսի փամ-

փուլաներով կատարած հրաձգության գործնությունը կարող է միայն իբրև միջոց լինել հրացանաձգի ականջն ու ջղերը ձիգի ձայնին ընտելացնելու և հրացանաձգի համար սովորություն դարձնելու այդ ձայնին անտարբեր վերաբերվել:

245. Սին փամփուլաներով հրաձգությունը կարելի չէ կատարել մարտական հրացաններով նույն հիմունքներով, ինչպես և վարժական հրացաններով. սակայն պետք է մի քանի նախազգուշական միջոցներ պահպանել. սին ձիգը մինչև 10 քայլ հեռավորության վրա ընդունակ է ալքրվածք և նույնիսկ ինզուլյուն պատճառել: Պարտադիր և նույնպես հրաձգությունից անմիջապես հետո փողանքը մաքրել, վերովհետև սին փամփուլի վառողը մեծ չափով նպաստում է ժանդ առաջանալուն:

246. Սին փամփուլաներով հրաձգությունը պետք է գործադրել ըստ կարիքի. ա) յերբ սովորողները առաջին անգամ գործ են ունենում ձևերի հրազենի հրաձգության հետ և բ) յերբ հրացանաձիգներին չի հաջողվել իրենց ջղերը զսպել, սկզբնական հրաձգության վարժությունները կատարելիս (տ. ներքևում 268 և 269 հոդ.):

Ոգտակար է նույնպես սին փամփուլաներ տալ սովորողներին մարտական հրաձգությունների համար պատրաստության ժամանակ, ձիգի մասին ակնհայտ դադափար տալու համար:

247. Սին փամփուլաների ոգտադործումը, բայց թողնված փամփուլաների սահմաններում, վերապահվում է գործման հրամասարի հանցողությանը:

ՓՈՔՐԱԼԻՅ ՓՍՄՓՈՒՇՏՆԵՐՈՎ ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԷ

248. Փոքրալից փամփուլար (Տարասովի

տիպարի) մարտական փամփուլի նման հատկություններ ունի, բայց մարտականից շատ թույլ է: Փոքրալից փամփուլարը ձիգի ժամանակ այնքան էլ ձայն չի տալիս, յետահարված չի առաջացնում և զնդակին տալիք ամենամեծ հեռավորությունը 700 քայլից ավելի չէ: Մինչդեռ գրնդակը (արճիճի, թեթև, մեջը դատարկ) չի կարող 10 քայլից ավելի հեռավորության վրա ծակել 2,5 սանտիմետր հաստության տախտակի վահանը. իսկ վոստոսյունի ժամանակ, յեթև լիցքի վառողը շատ է, հեշտությամբ տափակում կամ կտոր կտոր է լինում և անխտանգ է դառնում: Ձիգի ճշտությունը բավարար է մինչև 50 քայլ հեռավորության վրա:

249. Հրաձգությունը հնարավոր է վոշ միայն վարժական, այլև մարտական հրացաններով: Սակայն անհրաժեշտ է պահանջել թե հրացանաձգությունից առաջ և թե հրաձգության ժամանակ հրացանը առատ յուզել, իսկ հրաձգությունից հետո հրացանների փողերն անմիջապես մաքրել. առաջին անհրաժեշտ է փողը արճճկալելուց զերծ պահելու համար, իսկ յերկրորդը՝ ժանգից պահպանելու համար:

250. Հրաձգությունը կարելի չէ կատարել նույն կարգով, վոր սահմանված է մարտական փամփուլաներով հրաձգության համար, միմիայն հեռավորությունները պետք է համապատասխան չափով կրճատել ու թիրախները փոքրացնել: Հեռավորությունը, իրականի հետ համեմատած, 10 անգամ փոքրացնելիս, դիպումների նորմալ համապատասխանությունը պահպանելու համար պետք է թիրախների չափերը 5 անգամ փոքրացնել:

Ծանոթություն 1.— Նշանոցի հաստումն ընտրելիս, յուրաքանչյուր 10 քայլը պետք է

ընդունել 100 քայլ, այսինքն 40—50 քայլից հրաձգության ժամանակ ոգտվել 4 նշանոցով, իսկ 20—30 քայլից՝ 2 նշանոցով:

2. Նշանակետը պետք է տանել մի քիչ դեպի ձախ, վորովհետև, յետահարված չլինելու պատճառով, հետևապես և հազցւած ավինի աղբեցության բացակայության շնորհիվ, դիպումները մի փոքր դեպի աջ են խոտորվում: Պետք է նույնպես նկատի ունենալ, վոր զնդակն ուժեղ կերպով յենթարկվում է կոպրի քամու աղբեցությանը:

3. Փոքրալից փամփուշտները յերբեմն տալիս են փառոցներ և հասարական ձիւկեր այն պատճառով, վոր վառողի լիցքի ծախալը աննշան է, պարկուճի ներսի տարողության հետ համեմատած: Այդ կանխելու համար, հանձնարարվում է ամեն անգամ լցնելուց ատաճ փամփուշտը թափ տալ, վորպեսզի վառողը հախալի հրապատիճի մոտ:

251. Փոքրալից փամփուշտներով հրաձգության ձեռնտու կողմը հետևյալն է. հրաձգությունը եփան է (եփան փամփուշտ, լայնածախալ հրաձգարանների կարիք չկա, հրաձգարանների հեշտ կահավորումը և թիրախների համար կատարվելիք քիչ ծախսը) և հնարավոր է հրաձգություն կատարել զորքերի բնակության տեղերում, միայն թե պահպանել տարրական նոխազուշական միջոցները:

252. Վերահիշյալից յերևում է, վոր այդպիսի հրաձգության վարժությունը, թեպետ և ամբողջովին չի փոխարինում մարտական փամփուշտներով հրաձգությանը, բայց դրան լավ է լրացնում, մանավանդ այն ժամանակաշրջանում, յերբ կլիմայական կամ այլ հանգամանքների պատճառով, հարկ է լինում ընդհատել մարտական փամփուշտներով հրաձգությունը: Փոքրալից

փամփուշտներով հրաձգությունն ոգտակար է նույնիսկ փորձված հրացանաձիգների մարզանքի համար:

253. Փոքրալից փամփուշտների բաց թողնված ամբողջ պաշարը պետք է հավասարապես բաշխել վաշտերի (հեծելավաշտերի, զորախմբերի) միջև, վորպեսզի այդ պաշարն ոգտագործվի սովորողներին վարժությունների համար, նրանց հրամատարներին հայեցողությամբ:

ՄԱՐՏԱԿԱՆ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐՈՎ ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՎԱՐժՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

254. Մարտական փամփուշտներով վարժական հրաձգությունը կարելի չէ կատարել միմիայն հատկապես սարքած ձգարաններում, կահավորված բաց հրաձգարաններում և զորքերին պարբերաբար, հատկապես հատկացված ժամանակավորապես ոգտվելու համար տեղամասերում, վորոնց չափերը պետք է այնքան մեծ լինեն, վոր վարժությունների համար հարմար լինեն և հրաձգության համար անվտանգ: Զորքերը պարտավոր են խոտորեն յենթարկվել սահմանված կանոններին, վոր ապահովում են հրացանային զենդակներով պատահական հարվածներից, ինչպես զորքերին իրենց, այնպես և չրջակա բնակչությունը (տես «Կարգը հրաձգարանում» գլուխը):

255. Մարտական փամփուշտներով հրաձգության դասընթացը բացատրված է ներքևում: Այդ դասընթացը բաժանված է յերկու հաջորդական ատորձանների, Կարմիր Բանակի մարտիկների փոփոխական կազմի պարտադիր ծառայության տարիքի թվին համեմատ: Առաջին ատորձանը հաշված է առաջին անգամ հրաձգություն սովորողների համար և այնպես և կառված, վոր սո-

վորողը, հաջողութեամբ անցնելով բոլոր ցույց տված վարժութիւնները, կարող եւ ստանալ թեկուզ և չվերջացրած, բայց բավականին հրաձգային պատրաստութիւն՝ մարտում հրացանով հաջողութեամբ ոգտվելու համար: Յերկրորդ աստիճանը, վոր նշանակված ե յերկրորդ տարվա ուսուցման համար ու բաղկացած ե ավելի դժվար վարժութիւններից, հրացանաձգին ավելի բարձր պահանջներ ե առաջարկում ե ծառայում ե լրիվ հրաձգային պատրաստութեան համար:

256 Յուրաքանչյուր աստիճանն իր մեջ պարունակում ե յերեք խմբակ վարժութիւններ:

1) Սկզբնական (մարզական) հրաձգութեան ներքի խմբակ, վորոնց նպատակն ե սովորողների ունակութիւնները զարգացնելու ե կատարելագործելու՝ մարտական փամփուշտներով ճիշտ նշանոցային ձիգ կատարելու համար, կրակի պատրաստվելու՝ բոլոր հիմնական դրութիւններից հրաձգութեան համար ամենաբարեհաջող պայմաններում:

2) Գործնական հրաձգութեան ներքի խմբակ, վորոնք զարգացնում են ունակութիւնը՝ զանազան մարտական նպատակներ հարվածելու ամենակարճ ժամանակամիջոցում ե փամփուշտների ամենաքիչ ծախքով, հարմարվելով զանազան տեխնիքական պարագաներին, սկզբում վորոշ, իսկ հետո նաև անորոշ հեռավորութիւններից, իր տեղից ե վազելավազքից հետո, հակազդային դիմակով ե այլն:

3) Մեծագարկ մարտական հրաձգութեան ներքի խմբակ, վորոնք խաղաղ ժամանակի համար մատչելի սահմաններում սովորողներին բազմազան փորձառութիւն եւ տալիս, ձեռք բերած հրաձգային արվեստն ոգտագործելու այնպիսի մարտական խնդիրներ լուծելու համար, վորոնք

հանդիսանում են հրացանաձգին իրական մարտադաշտում:

257. Յուրաքանչյուր հրաձգութիւն իրենից ներկայացնում ե մի առաջադրութիւն, վոր պարտավոր ե սովորողը կատարել վորոշ թվով փամփուշտներով, դասընթացի մեջ հիշված պայմանները պահպանելով:

258. Իբրև ընդհանուր կանոն, բոլոր հրաձգութիւնները պետք ե կատարել անհատական կարգով, այսինքն յուրաքանչյուր սովորողն առանձին, նրա մշտական հրամատարի ղեկավարութեամբ, վոր պատասխանատու յե նրա ուսուցման համար: Դրան հասնելու համար ցանկալի յե հրաձգային շերտում յուրաքանչյուր դասակին 1-3 հրացանաձգի համար տեղ վերապահել ե հրաձգութիւնն այնպես կազմակերպել, վոր յուրաքանչյուր դասակ կարողանա հրաձգութիւնն անկախ կատարել, առանց հարեան դասակներին խանգարելու: Այդ առանձնապես անհրաժեշտ ե այնպիսի վարժութիւններ կատարելիս, վորոնք նշանակված են սովորողների ինքնուրույն վճիռների ե գործողութիւնների մեջ վարժվելու համար:

259. Ամբողջ դասընթացը պետք ե անցնել առանց շտապելու, ուշադրութեամբ, վարժութիւնների միջև այնպիսի ընդհատումներ անելով, վորոնք պետք ե բավական լինեն՝ թե յուրաքանչյուր վարժութիւնը մանրազնին պատրաստելու համար (վարժական կամ փոքրալից փամփուշտներով) ե թե լրացուցիչ պարապմունքների համար:

Յուրաքանչյուր սովորող միևնույն օրը չպետք ե կատարի մեկից, իսկ ծայրահեղ դեպքում յերկուսից ավելի վարժութիւններ:

260. Վարժութեան խրատական նշանակութիւնն ոգտագործելու համար, հրաձգութեան

հետևանքները (դիպումներն ու վերադիմումները) պետք է ցույց տալ սովորողին յուրաքանչյուր ձեռքից անմիջապես հետո: Վորպեսզի կարելի լինի, վարժությունը կատարելիս, դանդաղությունից խուսափել, հրաձգարանը պետք է համապատասխան կերպով կահավորել, այսինքն հնարավորություն ստեղծել դիպումները ցույց տալու և նշելու, առանց ցուցողների ծածկարանից դուրս գալու, կամ, յեթե հնարավորություն կա, դործագրել դնդակի դիպումից ընկնող թիրախներ:

261. Սովորողների հագուստի տարազը, ըսկզբնական և մարզական հրաձգությունները կատարելիս, պետք է թեթևացրած լինի, իսկ դործնական և մարտական հրաձգությունների ժամանակ՝ յերթական, լրիվ մարտական հանդերձանքով:

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀՐԱՉԳՈՒԹՅՈՒՆ

262. Սկզբնական հրաձգությունների ընդհանուր նշանակությունը բացատրված է 256-րդ հոդվածի 1-ին կետում: Այդ հրաձգություններն անցնելը պարտադիր է առհասարակ հրաձիգ զենքով զինված բոլոր նորընտիր կարմիր բանակայինների համար, դրանց թվում նաև այնպիսիների, վերոնց նկատի չե առնված վորոշ մասնագիտական պաշտոնի նշանակելու:

263. Հրաձգություններն սկսելուց առաջ վաշտերի (հեծելավաշտերի, խմբերի) հրամատարները պարտավոր են վաղորդք՝

ա) Սովորողների հրացաններն անձամբ գնել և զենքի արհեստանոցի ոգնությամբ վերացնել բոլոր նկատված թերությունները, յեթե այդ չի կատարված դրանից առաջ զինապետի կողմից, գործմասի հրամատարի կարգադրությամբ:

բ) Վաշտի (հեծելավաշտի, խմբի) ամենալավ

հրացանաձիգների ոգնությամբ բոլոր հրացանների խփելը խնամքով ստուգել:

դ) Սովորողներից յուրաքանչյուրին ծանոթացնել մարտական փամփուշտով ձիգ կատարելուն՝ 94-րդ հոդվածում բացատրած կարգով:

264. Առհասարակ բոլոր սկզբնական հրաձգությունները պետք է անցնել փոքր հեռավորություններից (100—200 քայլ) ձգարաններում կամ կարճ և բաց հրաձգարաններում: Վերջին զենքում պետք է խուսափել դիպուկ հրաձգությանը խանգարող անբարեհաջող յեղանակից:

265. Իրրև նպատակներ պետք է կիրառել ստիտակից կամ ավելի լավ և ֆաներից պատրաստած յվահաններ այնպիսի չափերով, վոր նույնիսկ վոչ միանգամայն ձիշտ ձիգերը կարելի լինի վահանին զիպցնել ու հաշվի առնել: Վահանի վրա մի շարք համակենտրոն չրջաններ են քաշում 5, 10, 15 և այլն մինչև 50 սանտիմետր շառավիղով: Շրջանների կենտրոնում ստացվում է պարզ տեսանելի սև գույնի խնձոր 10 սանտիմետր տրամագծով՝ 100 քայլի վրա հրաձգության համար, կամ 20 սանտիմետր տրամագծով 200 քայլի վրա հրաձգության համար: Սովորողների հառաջադիմության համեմատ, խնձորը կարելի չե փոխարինել մարտական նպատակները ներկայացնող զանազան կերպարաններով:

266. Հրաձգության հետևանքները պետք է ցույց տալ սովորողին բավական ճշտությամբ (ափելի լավ է թույլ տալ թիրախներն անձամբ գնել) և նրան մանրամասն բացատրել նրա կատարած սխալները, նրանց հավանական պատճառները և աղայալուծ նրանց վերացնելու միջոցները:

267. Յեթե վրիպումները համառորեն կրկնվեն, պետք է ստուգել հրացանաձիգին (իսկ յեթե կարիք կա և նրա հրացանի խփելը), վերացնել հայտնաբերած ուսուցման թերությունները և

հետո հրացանագիրն ստիպել վարժությունները նորից կրկնել: Այդպես պետք է վարվել, մինչև վոր հրացանագիրը կատարի առաջադրությունը:

268. Անհրաժեշտ է հիշել, վոր սկսնակ հրացանագիր անհաջողությունները մեծ մասամբ բացատրվում են նրանով, վոր նա հանդիստ չի վերաբերվում ձիգի ձայնին ու յետահարվածի հրումին: Հրացանագիրը, հրացանն արձակելիս, ինքն այդ չնկատելով, ակամա փակում է աչքերը, ցունց է տալիս ձգանը կամ առաջ է տալիս ոջ ուսը, իսկ յերբեմն ել և ամբողջ մարմինը (դուռն է տալիս), վորի հետևանքով ձիգի մոմենտին հրացանը խոտորվում է դեպի վեր, վար, կամ դեպի մի կողմը: Յեթե հիշյալ սխալներն անշուշտ են, մարտական ձիգի ժամանակ նրանց պարզելը հեշտ չէ, ևս առավել վոր դրան խանգարում է փողարքերնի վեր ցատկելը ձիգից հետո: Այդ սխալները հայտնաբերելու համար իրրե միջոց կարող է ծառայել վարժական կամ սին փամփուշտը, վորը պետք է դնել հրացանի մեջ մարտական փամփուշտի փոխարեն հրացանագիր համար անհատելի կերպով. այն ժամանակ յետահարվածի անսպասելի բացակայությունը հնարավորություն է տալիս միանգամից յերևան հանել սովորողի սխալները:

Յերբեմն հրաձգության անհաջող հետևանքների ժամանակ, վոչ ձգանը ցունց տալը, վոչ ել դուռն տալը տեղի չեն ունենում: Այդ դեպքում անհաջողության պատճառը լինում է այն, վոր սովորողը, ձիգից վախենալով, կենտրոնանում է միայն այն բանի վրա, վոր իրեն չմասնի, նպատակն ու հատիկը աչքաթող է անում, և նրա հրացանը, դեռ ձիգից առաջ, խոտորվում է դեպի մի կողմը: Այդ յերևույթը կարելի չէ ցուցահանել կողքի հայելու (ավելի բավ է որսոսկողի) ոգությունը:

Ձիգի ժամանակ սովորողի ջղախուժյունը յերբեմն կարող է առաջանալ վրիպելու վախից (մանավանդ յեթե դրա համար հալածում են) և հաճախ հենց ինքնասիրությունից:

269. Ձիգից վախենալու դեմ պայքարի ամենալավ միջոցն է՝ սովորեցնողի հանդիստ աղքեցությունը (վերաբերմունքը) սովորողի կամքի վրա, նույնպես և հրաձգության հաճախակի վարժությունները մերթ սին, մերթ մարտական փամփուշտներով, մինչև վոր հրացանագիրն իրեն դսպի և ձիգին բնականա: Ուշադիր վերաբերմունքով կարելի չէ ամեն մեկին բնականացնել ձիգին:

270. Անհաջողության այլ պատճառներից պետք է մատնանշել սովորողի Ֆիզիքական թուլությունը (հրացանը չարունակ չարժում է մի կողմից դեպի մյուսը, մանավանդ, կանգնած դրությունումը ձեռքից հրաձգության ժամանակ): Այդ պակասությունը կարելի չէ վերացնել, յեթե սովորողին հարկադրել համառորեն ու սխտեմատիկ կերպով պարապվել մարմնամարզությանը (հոդ. 177):

271. Սովորեցնողի հանգստության բացակայությունը, հրաձգության վայրում տեղի ունեցող շփոթությունն ու անկարգությունը և այլն նույնպես բացասաբար են աղղում հրաձգության հաջողության վրա: Նման պատճառները վերացնելը սովորեցնողի կամ ուսուցման հսկողի գործն է:

272. Սկզբնական հրաձգությունները կատարելու համար, յուրաքանչյուր սովորողի համար տարեկան 40 հատ մարտական փամփուշտ է բաց թողնվում: Այդ փամփուշտներն անցնում են վաշտերի (հեծելավաշտերի, խմբերի) հրամատարներին անմիջական կարգադրության տակ, նրանց հաջեցողությամբ իրական կարիքի համեմատ բանեցնելու համար:

273. Սկզբնական հրաձգությունների համար

Հաստատուն ծրագիր չի սահմանվում: Համա-
կերպվելով դորամասի հրամատարից ստացած
հրաձգային պարամունքների ծրագրի հետ,
նույնպես և վայրի, ժամանակի և փամփուշտների
փաստորեն բաց թողնելու պայմանների հետ, յու-
րաքանչյուր վաշտի (հեծելավաշտի, խմբի) հրա-
մատար պարտավոր է սկզբնական հրաձգություն-
ների ծրագիրն ինքնուրույն մշակել ու ներկայաց-
նել գումարտակի հրամատարին (կամ նրան հա-
մապատասխան անձնավորությունը) ի հաստա-
տություն:

Այդ խնդիրը հեշտացնելու համար ներքևում
բերվում են մի շարք վարժություններ, վորոնք
կարող են իրեն հիմք ծառայել սկզբնական հրա-
ձգությունների դասընթացի համար:

274. Սկզբնական հրաձգությունների մոտա-
վոր ծրագիրը:

ՎՍՐԺՈՒԹՅՈՒՆ № 1

ա) Վարժության նպատակն է՝ սովորողին
հնարավորություն տալ մարտական ձիգին բնու-
թյանը և ամենահեշտ պայմաններում նպատակին
գիպցնելուն հասնելու:

բ) Հրաձգության պայմանները՝

Հեռավորությունը—100 բալլ:

Նշանոցը— 4

Թիրախը—վահան 100×100 սանտ., կենտ-
րոնում սե խնձոր (10 սմ.)

Նշանառություն կետը—խնձորի ներքևի
յեզրը:

Դրությունը—նստած, ձեռքի տակ յեղած
Հաստոցից կամ պառկած, հենարանից:

Ձիգի համար ժամանակը չի սահմանափակ-
ված:

Փամփուշտների թիվը—վաշտի հրամատարի
նշանակածի համաձայն:

Լցնելը—հատ-հատ փամփուշտով:

Ցույց տալը—յուրաքանչյուր ձիգից հետո:

գ) Առաջադրությունը—վաշտի հրամատարի
Հայեցողությունը:

դ) Կատարելու կարգը:

1) Սովորեցնողը հավաքում է իր չուրջը հեր-
թական խմբակի սովորողներին ու բացատրում է
նպատակը: ապա հիշեցնում է, վոր նպատակին
գիպցնելու համար պետք է ամենից առաջ ճիշտ
նշան բռնել ու հրահանն աշխատել իջեցնել, վոր
հրացանը ձիգի մոմենտին չփոխի իր դրությունը:
Խսկ դրա համար հարկավոր է ձիգին հանգիստ
վերաբերվել և բոլոր ձևերը նույնպես ստանա-
լուն կատարել, ինչպես միշտ կատարել են վար-
ժական փամփուշտներով: Հրաձգությունը հե-
տացնելու համար սովորողներին առաջին անգամ
առաջարկվում է ամենահարմար և կայուն դրու-
թյուն՝ նստարանի վրա նստած (կամ պառկած,
հենարանից), ճիշտ աշխատել, ինչպես հրացաննե-
րի խփելը ստուգելիս: Յեթե բոլորը ճիշտ կատար-
վի, և հրացանաձիգը ձիգից չվախենա, գիպումն
ապահովված կլինի, վորովհետև յուրաքանչյուրի
հրացանը ճիշտ է խփում, վորը և ցույց է տվել
հրացանի խփելու ստուգումը:

2) Այս բոլորը բացատրելուց հետո, սովո-
րեցնողը հրամայում է հերթական փոխի սովորող-
ներին իրենց տեղերը բռնել: Սովորողներն ինքնա-
ստուգման համար, հրացանները լցնում են վար-
ժական կամ սին փամփուշտներով ու հերթով մի
մի ձիգ են կատարում, խսկ յեթե կարիք լինի,
և մի քանի ձիգ:

3) Դրանից հետո մարտական փամփուշտներ են
տալիս, և յուրաքանչյուր սովորող, հերթով խը-
նձորի տակին նշան բռնելով, մեկ ձիգ է կատար-

րում, վորից հետո հերթական փոխը սովորեցնողի գլխավորութեամբ գնում ե. թիրախների մոտ, վորտեղ սովորեցնողը ստուգում ե յուրաքանչյուրի հառաջադրութիւնը և անհրաժեշտ բացատրութիւններ ու ցուցումներ ե տալիս:

4) Գնդակներէ ծակատները նշան անելուց հետո, վերոհիշյալ կարգով կատարւում ե յերկրորդ ձիւղը, հետեանքներն ստուգելով, ե հետո հաջորդ ձիւղերը, վորքան նշանակած կլինի:

Յեթե սովորողներէ մեկն ու մեկը առաջին յերկու գնդակը բաւարար ե դիպցրել նպատակին, այդ որը նրա հրաձգութիւնը գաղարեցւում ե: Մնացածներին պետք ե թույլ տալ չորս գնդակ արձակել: Յեթե չորս ձիւղն ել բաւական չլինի, պետք ե փոքր ընդմիջում անել, սովորողին թույլ տալ հանգստանալու ե, անհրաժեշտ բացատրութիւններէ ու ցուցումներէ հետո, նրան ես յերկու փամփուշտ տալ ե նրա հրաձգութիւնը շարունակ դիտել: Յեթե այդ ել անհաջող անցնի, սովորողին փոխադրել նախապատրաստական վարժութիւնների ե սին ու փոքրալից փամփուշտներով հրաձգութեանը, մինչեւ սխալները հայտնաբերելն ու արմատախիլ անելը: Դրանից հետո պետք ե վարժութիւնը կրկնել մինչեւ տրամադրուած ժամանակը հաջող կատարելը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ № 2

ա) Վարժութեան նպատակն ե՝ հասնել դիպումների կուտակութեանը (միակերպութեանը):

բ) Հրաձգութեան պայմանները.

Հեռավորութիւնը, նշանոցը, թիրախը, նշանակետը, ձիւղի համար ժամանակը ե լցնելու կարգը նույնն ե, ինչ վոր № 1 վարժութեան համար:

Դրութիւնը—պտուկած, հենարանից: ||

Փամփուշտների թիւը—4.

Ցույց տալը—բոլոր 4 ձիւղից հետո.

դ) Առաջադրութիւնը—3 ամենաշուտ ծակատը պետք ե տեղավորվեն 15 սմ շառավիղ ունեցող շրջանի մէջ, վոր գծվում ե դիպման միջին կետի շուրջը:

դ) Կատարելու կարգը.

1) Սովորեցնողը, բացատրելով վարժութեան նպատակն ու կատարելու կարգը, առաջ ե կանչում հերթական փոխը ե, յուրաքանչյուր սովորողին իր թիրախի դեմ կանգնեցնելով, հրաման ե տալիս՝ «պտուկած հրաձգութեան համար պատրաստ»: Իսկ յերր սովորողները պատրաստվեն՝ «հատ-հատ փամփուշտով, աջից (կամ ձախից) կրակ»: Սովորողները նշանակած հերթով, առանց շտապելու մի-մի փամփուշտ են արձակում: Դրանից հետո նորից հրաման ե տրվում՝ «կրակ» ե այլն, մինչեւ վոր յուրաքանչյուր հրացանաձիգ բոլոր չորս փամփուշտն արձակի:

2) Դրանից հետո սովորեցնողը, յուրաքանչյուրի հրաձգութեան հետեանքների հետ ծանոթանալու համար, փոխը տանում ե վահանների մոտ: Առանց հաշի առնելու բոլորից հեռու դիպած մեկ գնդակը, մնացած յերեք դիպումների հիման վրա, վերստուգիչ բոլորակի ոգնութեամբ նա ստուգում ե, թե արդյո՞ք կատարված ե առաջադրութիւնը: Դրա համար գտնում ե դիպման միջին կետը ե սովորողին ցույց ե տալիս դրա խոտորման չափը ե ուղղութիւնը՝ դիպման միջին կետի նորմալ դրութիւնից, ապագայում դեկավրովելու համար:

3) Ով առաջադրութիւնը չի կատարել, պետք ե նրանց առանձնացնել, պարզել ու վերացնել անհաջողութեան պատճառները, վորից հետո վարժութիւնը նորից կրկնել տալ: Յեթե կուտակութիւնը բաւարար չե, պետք ե նորից վարժութիւններ կատարել:

4) Այդ նույն յեղանակով կատարվում է հաջորդ փոխերի հրաձգությունը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ № 3

ա) Վարժության նպատակն է՝ հասնել գրնդակների դիպուկությանը, ախնքն կարողանալ դիպումները կենտրոնացնել նպատակի կենտրոնում:

բ) Հրաձգության պայմանները նույնն են, ինչ փոր յերկրորդ վարժության համար, բայց փամփուռների թիվը 3, նշանակետը՝ սովորողի ընտրությամբ (նախորդ հրաձգության հետևանքների համեմատ), իսկ դիպումները ցույց տալը՝ յուրաքանչյուր ձիգից հետո:

գ) Առաջադրությունը՝ յերեք ամենալավ դիպումները պետք է տեղավորվեն խնձորի կենտրոնից 15 սմ շառավիղով դժած չըջանի մեջ:

դ) Կատարելու կարգը նույնն է, ինչ փոր № 2 վարժությունը կատարելիս, բայց հրաձգության հետևանքների հետ ծանոթանալու համար, փոխը պետք է տանել վահանների մոտ յուրաքանչյուր ձիգից հետո:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ № 4, 5 36վ 6

ա) Վարժության նպատակն է՝ դիպուկությանը հասնել կրակի պատրաստվելու զանազան դրություններից:

բ) Հրաձգության պայմանները.

Հեռավորությունը—200 քալ:

Նշանոցը—4

Թիրախը—125×150 սմ. վահան, 20 սմ. սև խնձորով կենտրոնում:

Նշանակետը—խնձորի ներքևի յեզրը:

Ձիգի համար ժամանակը չի սահմանափակված:

Լցնելը—հատ-հատ փամփուռով:

Ցույց տալը—յուրաքանչյուր ձիգից հետո:

Վարժություն № 4. կրակի պատրաստվելու դրությունը—պտուկած, ձեռքից. փամփուռների թիվը 3 է, առաջադրությունը—2 ամենալավ դիպումները պետք է դուրս գան չըջանից, փոր դժվում է խնձորի կենտրոնից 30 սմ շառավիղով:

Վարժություն № 5. կրակի պատրաստվելու դրությունը—նստած և ծնկից, փամփուռների թիվը 4 է, յուրաքանչյուր դրության մեջ յերկուսական, առաջադրությունը—յերեք ամենալավ դիպումները պետք է տեղավորվեն 30 սմ շառավիղ ունեցող չըջանում:

Վարժություն № 6. կրակի պատրաստվելու դրությունը—կանգնած, փամփուռների թիվը 3 է, առաջադրությունը—յերկու ամենալավ դիպումները պետք է տեղավորվեն 30 սմ շառավիղ ունեցող չըջանում:

Կատարելու կարգը նույնն է, ինչ փոր № 3 վարժության կատարման ժամանակ:

275. Առաջին աստիճանի դասընթացն անցած հրացանաձիգների համար, սկզբնական հրաձգությունները փոխարինվում են մարզական հրաձգություններով: Մարզական հրաձգությունները կազմակերպվում են նույն հիմունքներով, ինչպես և սկզբնական հրաձգությունները, միայն այն տարբերությամբ, փոր դիպուկության և կուտակության վերարերմամբ հրացանաձիգներին ավելի բարձր պահանջներ են տրվում:

276. Մարզական հրաձգությունները կատարելու համար, յուրաքանչյուր սովորողի համար բաց է թողնվում 20-ական փամփուռ:

277. Մարզական հրաձգությունների ծրագիրն ամեն տարի սահմանվում է յուրաքանչյուր դորամասի համար առանձին, վերահիշյալ սկզբնական հրաձգությունների ծրագրի համեմատ: Ցանկալի յե այդ ծրագիրը նախապես քննության առնել

վաշտերի և գումարտակների հրամատարների ժողովներում զորամասի հրամատարի նախագահութեամբ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՐԱՋԳՈՒԹՅԱՆ

278. Հրացանով զործնական հրաձգությունների ընդհանուր նշանակումը վորոշված է 256-րդ հոդվածի 2-րդ կետում: Ծրագրերը բերված են ներքևում: Նրանց կատարումը պարտադիր է աստիճանի համաձայն հրացանով զինված հրաձիգների համար. ա) I աստիճանի հրաձգություններին ծրագրեր՝ միմիայն սկզբնական հրաձգություններն անցածների համար և բ) II աստիճանի հրաձգություններին ծրագրեր՝ I աստիճանը լիովին անցածների համար:

Ռազմադպրոցական հիմնարկներում անցնելու զործնական հրաձգությունների ծրագրերը սահմանվում են ռազմադպրոցական հիմնարկների վարչության կողմից «Հրաձգության վարժակալի գործնություն» բաժնի նմանությամբ:

279. Գործնական հրաձգությունների յերկու աստիճանի ծրագրերից յուրաքանչյուրն իրեն մեջ պարունակում է մի շարք հաջորդական, դժվարությունն աճող առաջադրություններ՝ աշխարհի կերպարանային թիրախներ հարվածելու համար, վորոնք ներկայացնում են մարտական նպատակները: Յուրաքանչյուր աստիճանի աշխարհի առաջադրությունների շարքը կազմված է յերկու տիպի վարժություններից.

ա) Վարժություններ, վորոնք մարդում են հրացանաձիգն առանց շտապելու, դիպուկ նշանուցային կրակ վարելու ճիշտ վորոշած հեռավորություններից, կրակի պատրաստվելու վորոշ դրություններում, վահանների վրա կպցրած կերպարանների դեմ. վահանները պետք է աշխարհի չափեր ունենան, վոր կարելի լինի հրացանաձիգին

ցույց տալ, ըստ հնարավորին, յուրաքանչյուր ձիգի հետեանքը, յեթե ձիգը նույնիսկ չառի ճիշտ չլինի:

բ) Կիրարկելի ընույթ կրող վարժություններ, վորոնք մոտենում են հրացանով հրաձգության տեսնիկան իրական (զորաչարժային) մարտի պայմաններին. աշխարհի վարժությունների ժամանակ հրաձգությունը կատարվում է առանց վահանի կերպարանների դեմ, վորոնք յերեան են դալիս կարճ ժամանակով (իբր թե հրացան արձակելու կամ վաղելադրի համար), հրացանաձիգը պիտի վայրին հարմարվի, նպատակները փոփոխեն, հարձակողական վաղելադրեր կատարվեն և հրացանաձիգն ինքը պիտի վորոշի փոփոխվող հեռավորությունները:

Այդ վարժությունների ժամանակ հրացանաձիգներին մարտական պարագայում կրակ վարելուն ընտելացնելու համար, նրանց պետք է դասավորել աշխարհի կարգով, վոր մոտենում է ջուկի մարտական դասավորությանը, առանց վորոշ դժուր հավասարելու. նույնպես և թիրախները պետք է դասավորված լինեն վոչ թե կանոնավոր դժերով, այլ հակառակորդի փոքր զորամասի մարտակարգին համապատասխան, և քողարկված լինեն:

280. Յերկրորդ աստիճանը, ընդհանրապես, առաջինին նման է, բայց տարբերվում է նրանով, վոր նպատակներն ավելի փոքր են, հեռավորություններն ավելի մեծ և կիրարկելի վարժություններն ավելի շատ են:

281. Յուրաքանչյուր աստիճանի առաջադրություններին մի մասը (յերկուսից վոչ պակաս), վաշտի (հեծելավաշտի, խմբի) հրամատարի ընտրությամբ, յուրաքանչյուր հրաձիգ պիտի կատարի անսպաժան հակադադային դիմակը հաղած:

282. Առհասարակ բոլոր գործնական հրա-
ձգությունները պետք է կատարել առավելագույն
ուսուցման ամառային շրջանում, առանց յեղա-
նակն ընտրելու, բացառապես բաց հրաձգարան-
ներում կամ ժամանակավորապես հասկացված
տեղամասերում: Ծայրահեղ անհրաժեշտության
դեպքում, թույլատրվում է ձգարանում (տիրում)
անցնել միմիայն այն վարժությունները, վորոնք
նշանակված են դիպուկության մեջ մարզանքի հա-
մար (հոդ. 279 կետ ա.):

283. Առաջին աստիճանի գործնական հրա-
ձգություններն անցնել թույլատրվում է յուրա-
քանչյուր վաշտին (հեծերափաշտին, խմբին)
սկզբնական հրաձգությունների վարժություններն
անցնելուց հետո:

284. Յերեան յեկող նպատակների վրա հրա-
ձգություն կատարելուց առաջ, նորընտիր հրացա-
նաձիգները պետք է բավականին վարժված լինեն
մարտադաշտի դիտողության ձևերին, իսկ անո-
րոշ հեռավորություններից հրաձգություններ կա-
տարելուց առաջ, բացի դրանից, պետք է վարժ-
ված լինեն նաև աչքաչափով հեռավորություն-
ները վորոշելուն, վայրին հարմարվելուն և վա-
ղեմազք կատարելուն:

285. Հրաձգություններն սկսելուց անմիջա-
պես առաջ (կամ նրանց հետ միաժամանակ), ող-
տակար է կազմակերպել ամբողջ զորամասի հա-
մար հատուկ ցուցական հրաձգություն (մի շարք
հրաձգություններ), նպատակ ունենալով, սովոր-
ողներին պարզապես բացատրել կամ հիշեցնել.

ա) Հրացանների ձիերի ցրման նորմալ չա-
փերն ու ընդթիվ ալն հեռավորությունների
սահմաններում, վորոնցից նախատեսվում է վար-
ժություններ կատարելը:

բ) Նույն հեռավորություններից դիպումների

նորմալ հալանահանությունը, ծրագրում ցույց
տված նպատակների վրա կրակելիս:

գ) Դիպման միջին կետի խոտորման չափերը
նշանառության կետից, վոր տեղի յե ունենում
նշանոցը հեռավորության համեմատ վոր ճիշտ
հաստիքուց, քամուց և արևի վառ լուսավորու-
թյունից:

286. Գործնական հրաձգություններից յուրա-
քանչյուրի կատարման պայմաններն ու կարգը
մանրամասն բացատրված են ներքևում բերված
ծրագրերում:

Յուրաքանչյուր վարժության պետք է մաս-
նակցեն կրտսեր և միջին հրամատարներն իրենց
մասերի հետ միասին, որինակ տալով սովորող-
ներին և ստուգելով տվյալ պարագայում հրա-
ձգության պայմանները, հետագայում ճիշտ դե-
կավարելու համար: Հրամատարների աշխատի
մասնակցությունը հրաձգություններին նրանց
համար հանդիսանում է այն ցուցումների կատա-
րումը, վոր ցույց է տրված 30-րդ հոդվածի ա
կետում. հրամատարական կազմի այն անձինք,
վորոնք վորեկ պատճառով չեն մասնակցել գործ-
նական հրաձգությանը իրենց ստորադրյալ կարմիր
բանակայիններին հետ միասին, հրաձգություն-
ներն անցնում են զորամասի հրամատարի հայե-
ցողությամբ:

287. Յեթե հրացանաձիգը կատարում է ա-
ռաջադրությունը, առանց իրեն տված բոլոր
փամփուռները ծախսելու, այդ դեպքում նա
տվյալ հրաձգությունը չի շարունակում, իսկ
մնացած փամփուռները վերադարձնում է. այդ
փամփուռները հաշվի յեն առնվում և գործա-
դրվում են հետագայում հենց նույն կամ մի ու-
րիշ ավելի թույլ հրացանաձիգ լրացուցիչ մար-
զանքի համար:

288. Յեթե, ընդհակառակը, հրացանաձիգը

չկարողացաւ առաջադրութիւնը կատարել, անհրաժեշտ է պարզել անհաջողութեան պատճառները, վորքան հնարավոր է, նրանց վերացնել և հետո վերջին հերթերից մեկում հնարավորութիւն տալ այդ նույն հրաձգութիւնը նորից կրկնել:

Ծանոթութիւն.—Յեթե դատակի հրամասարը, հետեւելով հրաձգութեանը, տեսնում է, վոր հրացանաձիգը մոտ էր առաջադրութիւնը կատարելուն, կամ դրան խանգարեց պատահականութիւնը, նա կարող է թույլ տալ հենց տեղնուտեղը լրացուցիչ կերպով բաց թողնել 1-2 փամփուշտ տնտեսած փամփուշտները:

289. Յեթե կրկնակի հրաձգութիւնն էլ անհաջող է անցնում, անհրաժեշտ է միջոցներ ձեռք տունել ավելի հիմնականորեն ստուգելու հրացանաձիգին (իսկ յեթե հարկավոր է, և զենքի խփելը), բայց չպետք է նրան խանգարել դասընթացը շարունակելու ընկերների հետ հավասար, նկատել առնելով չկատարած վարժութիւնը կրկնել հարմար դեպքում ի հաշիվ տնտեսած փամփուշտներին:

290. Հրացանաձիգների կողմից վորեւ պատճառով բաց թողած հերթական հրաձգութիւնը պետք է դարձյալ կատարել առաջին հենց հնարավոր դեպքում. յեթե այդպիսիները (նույնպէս և 289 հոդ. հիշվածները) շատ հաճաքվեն, պետք է նրանց հրաձգութեան համար հատուկ տեղ ու ժամանակ տալ:

291. Հրացաններով դործնական հրաձգութիւնների կատարման համար, յուրաքանչյուր հաստիքավոր հրացանաձիգի համար տարեկան վորոշ թիւով մարտական փամփուշտ է բաց թողնվում, վորը տարբեր է զորքերի դանադան տեսակների ու ծառայութեան համար (տ. գլ. «մարտական փամփուշտներ բաց թողնելը»): Այդ փամփուշտները:

փուշտները արվում են զորամասի հրամատարի տրամադրութեան տակ:

ԳԵՐԱԶԱՆՑ ՀՐԱՅԱՆԱԶԻԳՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒ-

ԹՅՈՒՆԸ

292. Ժամանակակից մարտը պահանջում է հրաձգային մասերի կազմի մեջ ունենալ այնպիսի բարձր հրաձգային պատրաստութիւն ունեցող մարտիկներ, վորոնց ոգնութեամբ կարելի լինի հարվածել կարեւոր նպատակները, վորոնք, իրենց հեռավորութեան և փոքրութեան պատճառով, անմատչելի յեն սովորական, նույնիսկ լավ պատրաստված մարտիկների համար:

293. Յուրաքանչյուր վաշտում (հեծելավաշտում) պետք է պատրաստված լինեն այդպիսի զերազանց հրացանաձիգներ, վորքան հնարավոր է, շատ:

Նրանց պատրաստութիւնը պիտի ընթանա հաջորդ հոգվածներում ցույց տված կարգով:

294. Այն նորակոչները, վորոնք զորամաս մտնելու ժամանակ արդեն հմուտ հրացանաձիգներ են յեղել, նրանց հրաձգութիւնն ստուգելուց հետո, սկզբնական հրաձգութիւնների և 1 աստիճանի առաջին չորս վարժութիւնների փոխարեն, հատուկ դասընթաց են անցնում, վորը նպատակ ունի նրանց մարզելու նուրբ դաշտային հրաձգութեան մեջ: Այդ դասընթացն անցնելու համար պետք է ոգտագործել այն փամփուշտները, վոր հատկացվում են սկզբնական հրաձգութիւնների և դործնական հրաձգութեան չորս վարժութիւնների համար: Բացի դրանից, զորամասի հրամատարի հայեցողութեամբ, փամփուշտներ են բաց թողնվում տնտեսած փամփուշտները:

Այդ մարդական հրաձգությունների դասընթացը սահմանում է զորամասի հրամատարը, զորամասի Հրաձգային կոմիտեյի կողմից նախատեսվող հետո:

295. Յերբ նրանք անցնում են մյուս հրացանաձիգների հետ միասին առաջին աստիճանի վերջին չորս վարժությունները (անորոշ հեռավորություններից), նրանցից այնպիսիները, վերոնք այդ բոլոր վարժությունները հաջող կատարեն, դրա համար հատկացված քանակից ավելի պակաս փամփուշտ բանեցնելով, ստանում են լավ հրացանաձիգի կոչում:

296. Մյուս բոլոր հրացանաձիգները, վերոնք գործնական հրաձգությունների դասընթացն անցնում են ընդհանուր կարգով, նույնպես լավ հրացանաձիգի կոչում են ստանում, յեթև բավարարում են վերևում հիշված վերջին չորս հրաձգությունների պայմաններին:

297. Լավ հրացանաձիգի կոչում ստացաները՝ բոլորը մարզվում են նուրբ հրաձգության մեջ, դրա համար ոգտագործելով այն փամփուշտները, վոր հատկացվում են ծառայության 2-րդ տարվա մարդական հրաձգությունների համար, II աստիճանի գործնական հրաձգությունների առաջին յերեք վարժությունների համար և բացի դրանից, զորամասի հրամատարի հայեցողությամբ, նրանց փամփուշտ և բաց թողնվում տնտեսած փամփուշտներից:

Այդ մարդական հրաձգությունների դասընթացը սահմանվում է 294 հոդվածի համաձայն:

298. Լավ հրացանաձիգները II աստիճանի գործնական հրաձգությունների վերջին հինգ վարժությունները (անորոշ հեռավորություններից) մյուս հրացանաձիգների հետ միասին անցնելուց հետո, նրանցից այնպիսիները, վորոնք

հաջող կկատարեն այդ վարժությունների բոլոր առաջադրությունները, պահպանելով հոդ. 295 հիշված բոլոր պայմանները, ստանում են գերազանց հրացանաձիգի կոչում:

299. Գերազանց հրացանաձիգի կոչումը կարող է հատկացվել նաև այն հրացանաձիգներին, վորոնք իր ժամանակին լավ հրացանաձիգի կոչում չեն ստացել, բայց III աստիճանի գործնական հրաձգությունների դասընթացն ընդհանուր կարգով անցնելից բավարարում են 296 հոդվածի պայմաններին վերջին հինգ հրաձգությունների ժամանակ:

300. Գերազանց հրացանաձիգները մինչև ծառայության վերջը շարունակում են մարզվել նուրբ դաշտային հրաձգության մեջ, վորի համար յուրաքանչյուր հրացանաձիգին բաց և թողնվում 40-ական փամփուշտ:

Այդ հրաձգությունների դասընթացը սահմանում է զորամասի հրամատարը 294 հոդվածի համաձայն: այդ դասընթացի մեջ պիտի մտնեն 304 հոդվածում հիշված վարժությունները, յեթև այդպիսիներն չեն անցել լավ հրացանաձիգների մարզանքի ժամանակ:

301. Բոլոր լավ և գերազանց հրացանաձիգի կոչում ստացողներին հատկացվում է, մշտապես կրելու համար, լանջանշան, վորն ունի համապատասխան խորհրդանշան (եմբլեմ) և մակագիր (տ. նկարը):

Ծանոթություն. — Այն զորամասերում, վորտեղ գործնական հրաձգության համար տարեկան բաց թողնվելիք փամփուշտների թիվը մի մարդու համար 35-ից ավելի չէ, չի թույլատրվում լավ ու գերազանց հրացանաձիգներին գատել և նշաններով պարգևատրել:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՐԱՋԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԸՆ-
ՔԱՅԸ ՀՐԱՋԳԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱՐ**

302.

I. ԱՍՏԻՃԱՆ

Հարգու- թյունների №	Հեռա- փոստ- այլերով	ՀՐԱՋԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	Փամփուռ- ների թիվը
1	200	Գլխաչափ, վահանի մեջտեղում	6
2	300	Գոտկաչափ, վահանի ներքեվի յեզրի մոտ	6
3	300	Կրծքաչափ, վահանի ներքեվի յեզրի մոտ	4
4	300	Հասակաչափ կերպարան, վահանի	4
5	250—350	Վրա կրծքաչափ, ընկնող	5
6	350—450	Գոտկաչափ, յերեացող	5
7	150—500	Գլխաչափ և կրծքաչափ, ընկնող	8
8	450—600	Գնդաչիր, թաղնափող	7

45 փ.

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ
ՈՒ ԿԱՐԳԸ**

1-ին ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Բ. Հրաձգության պայմանները .

Հեռափոստային—200 քալ :

Հրաձգության համար նպատակը—գլխաչափ
125×150 սմ. մեծություն թիրախ, վահանի
մեջտեղում :

Փամփուռների թիվը—6 :

Յեղման գրութային—կրակի գծից 10
քալի վրա :

Հրաձգության համար գրութային—3 զըն-
դակ պատկած, հենարանից և 3 զնդակ պատ-
կած, ձեռքից :

Զիգ կատարելու ժամանակը չի սահմանա-
փակված :

Դիպումները ցույց տալը—յուրաքանչյուր
ծրից հետո :

Բ. Առաջադրությունը՝ հարվածել կերպա-
րանը հրաձգության համար նշանակած յուրա-
քանչյուր գրութային . այն գնդակները, վո-
րոնք կերպարանին չեն դիպել, չպետք է դուրս
գան կերպարանի կենտրոնից 30 սմ. չափով
գծած շրջանից :

Գ. Կատարման կարգը .

«Բալոնը» ազդանշանից հետո, սովորեցնողը
հրամայում է կրակողներին յեղման գրութային
գրավել իրենց թիրախները գլխից և մարտական
փամփուռներ տալ նրանց : «Կրակ» ազդանշա-
նով սովորեցնողները կրակողներին դուրս են
բերում կրակի գիծը, վերանց նրանք պատրաս-
տվում են կրակել՝ պատկած գրութային, հենա-
րանից, ապա լցնում են հրացանները :

Կրակը բացվում է սովորեցնողների պատ-
վերով :

Գնդակ արձակելուց հետո սովորողը պար-
տավոր է ասել, թե իր կարծիքով փոքր կողմն է
խոտորվել հատիկը, իսկ յեթե վստաստյուն է
նկատվել, գնդակն ուր է թռել :

Դիպումները ցույց տալուց հետո, կրակողը
գեկուցում է ձիգի հետևանքի մասին, անվանե-
լով իր ազդանունը և ասելով՝ «գլխաչափ», յեթե
գնդակը հարվածել է ասելով, կամ «վահա-
նին» յեթե գնդակը դուրս չի յեկել վերևում
հիշված չափովից շրջանակից, և «վրիպեց»,
յեթե գնդակը վահանին չի դիպել : Հետևանքը
հենց տեղում մտցվում է հաշվետվության մեջ :

Սովորողը, արաջագրութային կատարելուց
կամ յերեք գնդակ պատկած, հենարանից արձա-
կելուց հետո, փոխում է իր գրութային և մնա-

ցած յերեք գնդակն արձակում և պառկած, ձեռքից:

Յեթե դիպումները ծածկարանի յետևից ցույց տալու համար հարմարանքներ չկան և դիպումները ցույց տալու համար ցուցողները դուրս են գալիս ծածկարանի յետևից, այդ դեպքում հրաձգությունը կատարվում և փոխերով: Այդ ժամանակ յուրաքանչյուր հրացանաձիգ, արձակելուց հետո, հրահանք ղեկում և պահպանիչ փոսթին և տեղից վեր և կենում, մնալով կրակի դժի վրա: Յերբ փոխի բոլոր հրացանաձիգները մի մի գնդակ են արձակում, և բոլոր վաշտերում դրոշակներն իջեցվում են, տրվում և «կաց» ազդանշանը ցուցողների դուրս գալու համար, իսկ հրաձգությունը ժամանակավորապես դադարեցվում և:

Հետևանքները ցույց տալուց և ծակատները ծածկելուց հետո, ցուցողները ղեկում են ծածկարանի յետևը, իսկ նրանցից ավագը բարձրացնում և կարմիր դրոշակը. դրանից հետո նորից «կրակ» ազդանշանն և տրվում, ապա չարունակվում և հրաձգությունը վերևում հիշված կարգով:

Յուրաքանչյուր սովորողի կողմից վարժությունը վերջացնելուց հետո, պետք և հենց կրակի ղեկում ղենիկ նրա հրացանն ու փամփշտամանը և վերցնել մնացած մարտական փամփուշտները. դրանից հետո նա ղեկում և ղենքը յուղեքու և մաքրելու համար նշանակած տեղը:

2-րդ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ա) Հրաձգության պայմանները.

Հեռավորությունը—200 քայլ:

Նպատակը—դոստաչափ թիրախ, 125×130

սմ. վահանի ներքևի յեզրում:

Փամփուշտների թիվը—6:

Յեղման դրությունը—կրակի դժից 10 քայլի վրա:

Հրաձգության համար դրությունը—3 գնդակ ծնկից, և 3 գնդակ նստած:

Ձիգ կատարելու համար ժամանակը չի սահմանափակված:

Ցույց տալը—յուրաքանչյուր ձիգից հետո:

բ) Առաջադրությունը—հարվածել կերպարանը հրաձգության յուրաքանչյուր դրությունից, բայց վահանից 2 գնդակից ավելի չպետք և վրիպի:

գ) Կատարման կարգը նույնն է, ինչ վոր 1-ին վարժության համար:

3-րդ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ա) Հրաձգության պայմանները.

Հեռավորությունը—300 քայլ:

Նպատակը—կրծքաչափ թիրախ վահանի ներքևի յեզրի մոտ:

Փամփուշտների թիվը—4:

Յեղման դրությունը—կրակի դժից 10 քայլի վրա:

Հրաձգության համար դրությունը—պառկած ձեռքից:

Ձիգ կատարելու համար ժամանակը չի սահմանափակված:

Ցույց տալը—յուրաքանչյուր ձիգից հետո:

բ) Առաջադրությունը—հարվածել կերպարանը, բայց վահանից չպետք և վրիպի մեկ գնդակից ավելի:

գ) Կատարման կարգը նույնն է, ինչ վոր 1-ին վարժության համար:

4-ՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ :

ա) Հրաձգության պայմանները .

Հեռավորությունը—300 քայլ :

Նպատակը—զոտկաչափ թիրախ վահանի ներքևի յեզրի մոտ , իսկ յեթե հրաձգությունը կատարվում է զիմակը հաղած , հատուկաչափ կերպարան վահանի վրա :

Փամփուշտների թիվը—4 :

Յեղման զրուծյունը—կրակի զծից 10 քայլի վրա :

Հրաձգության համար զրուծյունը—կանգնած , ձեռքից :

Զիգ կատարելու համար ժամանակը չի սահմանափակված :

Յույց տալը—յուրաքանչյուր ձեռքից հետո :

բ) Առաջադրությունը—հարվածել կերպարանը , յայց վահանից չպետք է վրիպի մեկ զնդակից ավելի :

գ) Կատարման կարգը նույնն է , ինչ վոր 1-ին վարժությունից համար , միայն այն տարբերությունով , վոր հրացանաձիգը , կանգնած հրաձգության ժամանակ արձակելուց հետո , հրացանը վտռելն է առնում . զիմակը հաղնում են յեղման զրուծյան մեջ :

5-ՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ :

ա) Հրաձգության պայմանները .

Հեռավորությունը—250 մինչև 350 քայլ :

Նպատակը—կրճքաչափ թիրախ , վայր բնկնող :

Գնդակների թիվը—5 :

Յեղման զրուծյունը—հրացանաձիգների գտավորման համար նշանակած շերտից 10 քայլի վրա :

Հրաձգության համար զրուծյունն ու տեղը—հրացանաձիգի ընտրությունը , վայրին հարմարվելով :

Վարժությունը կատարելու ժամանակը—մեկ րոպե , հրաձգության շերտը գուրս գալու պատվերից հաջած :

Յույց տալը—փոխի հրաձգությունը վերջացնելուց հետո :

բ) Առաջադրությունը—հարվածել կերպարանը :

գ) Կատարման կարգը .

«Բոլորը» ազդանշանով սովորեցնողները հրամայում են հրացանաձիգների փոխին յեղման զրուծյունը դրավել :

«Կրակ» ազդանշանով սովորեցնողները հրամայում են փոխին դուրս գալ հրաձգության շերտը , իսկ հրացանաձիգները հրաձգության համար հարմար տեղ ու զրուծյուն ընտրելով , արագ պատրաստվում են , լցնում են հրացանները և կրակ են բաց անում յուրաքանչյուրն իր թիրախի վրա :

Հրացանաձիգներին կրակի գծում , իսկ թիրախներն իրենց դնելու տեղում հավասարելի արգելվում է : Թիրախները արվում են հակառակորդի բնական խմբակների ձևով :

Մեկ րոպե անցնելուց հետո , հրաման է տրվում կրակը դադարեցնելու համար . մնացած փամփուշտները պետք է հավաքել և վամփուշտամանները գնել , վորից հետո «կայ» ազդանշան է տրվում՝ ցուցողների գուրս գալու , հրաձգության հետևանքները ցույց տալու , ծակառները ծածկելու և թիրախները նորից դնելու համար :

Յեթե հետևանքները ցույց տալուց հետո պարզվի , վոր հրաձգության ժամանակ վայր ընկած թիրախին զնդակ չի զիպել , այդ դեպքում համապատասխան հրացանաձիգն իրեն

մոտ մնացած փամփուռները կրակում և մյուս փոխի հետ. դրա համար նրան ժամանակ և տրվում՝ յուրաքանչյուր ձիգի համար 10 վայրկյան, իսկ կրակի պատրաստվելու ուլցնելու համար 15 վայրկյան:

Հրաձգության հետևանքները ցույց տալուց հետո, կրակած փոխը յետ և տարվում, իսկ հետևյալ փոխերը կատարում են վարժությունը վերահիշյալ կարգով, «բոլորը» և «կրակ» ազդանշաններով:

6-րդ վարժութիւնը

ա) Հրաձգության պայմանները.

Հեռավորությունը—350-ից մինչև 450 քայլ:
Նպատակը—գոտկաչափ թիրախ, 3 անգամ յերևացող, յուրաքանչյուր անգամ 15 վայրկյան, տարբեր՝ 10 մինչև 20 վայրկյան միջանցներով:

Փամփուռների թիվը—5:

Յերման դրությունը—հրաձգության շերտից 10 քայլի վրա:

